



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



19579

100

Printed in Turkey



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

9 (47.925)

Ի ՊԵՏԱ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՑ

Յ Օ Ր Ի Կ Ե Ա Ց

Ա . Մ . ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

معارف نظارت جلیله سنك ۳۲۶ نومرول رخصتا مه سیله طبع او لئندر



12013

Կ . ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ . ԳԱՎԱՔԵԱՆ

—
1888

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սիրելիք, մի՛ ամենային հոգւոյ հա-
ւատալք, այլ ընտրեցէք զոգիսն ե-
թէ յԱսոռուծոյ իցեն : Ա. Յովհ. Դ. 4:

Ահա մեր ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Համառօտ դա-
սագրին երկրորդ տպագրութիւնն հանդերձ կարե-
ւոր փոփոխմամբք եւ յաւելուածովք : Արդէն յայտ-
նի է թէ ազգային պատմութեան վերաբերեալ որ-
եւիցէ հրատարակութիւն Թուրքիոյ մէջ, մինչեւ
կարծին երկու կամ երեք տարիներն, արգելեալ էր
ժամանակէ մը հետէ կառավարութենէն, եւ մենք
Թղթաքառաջին որ զիմեցինք առ արդի Սրբազն
կարքն միջնորդել ուր արժան էր՝ յիշեալ ար-
դելին բարձման համար, եւ Սրբազն Հայրն լսելով
մեր ստէպ աղերսանաց, ինչովէս իւր իսկ փափաքն
էր, բարձր ազգեցութեամբ իւրով ընկալաւ ազգա-
յին պատմութեան հրատարակման հրաման, նա հա-
ճեցաւ եւս վաւերացունել մեր աշխատութիւնը՝ յանձ-
նելով զայն ձեռնհաս անձանց քննութեան :

Բայց որովհետև մեր դասագիրքն էր որ յիշեալ ար-
դելէն ետքը զառաջինն տեսաւ լոյս, գրոց քննութեան
կողմանէ առանձինն հրաման եղաւ մեզ, մանաւանդ
կոստանդնուպոլսոյ Հայոց մէջ անցած նորագոյն դիպաց
վերաբերեալ բազում ինչ լուութեամբ անցնել. սեղ-
մում մը՝ որ յետոյ գրեթէ րուրովին վերցաւ ուրիշ
դասագրի մը մէջ որոյ տպագրութիւնն յետոյ է քան

Ժ

7664.57

զմերոյն։ Այս թոյլտուութենէն քաջալերեալ եւ մեք, լցինք այս թերին այս նոր տալագրութեան մէջ՝ ամէն նորագոյն կարեւոր դիպաց յիշատակութիւնն յաւելով խոհեմութեամբ, զգուշանալով յանդուդն դատումներէ, եւ ատելութեան կամ թշնամանաց գոյն ունեցող ախարկութիւններէ, ուր հարկը կը պահանձէր այս կամ այն կրօնական կամ ազգային վիճի կամ խնդրոյ վրայ խօսել։

Կը յուսանք թէ չենք լինիր մեղադրելի, եթէ համառօտ դիտողութիւն մը ընենք մեր դասագրոց վրայ։ Մենք մեր բոլոր երկասիրութիւններէ մինչեւ ցարդ սպասած չենք եւ չենք սպասեր նիւթական շահ։ մեր նպատակն եղած է, մանաւանդ դասագրոց համար, աշակերտաց դիւրութիւնը եւ օգուտը։ Զանացած ենք միշտ մերովսանն մեր հարցումներն ընել պարզ, եւ պատասխաններն որ յատկապէս աշակերտաց համար են՝ դիւրին եւ կարճառօտ։ Պատասխան մը անցնելու չէ 10, կամ թէ աւելի՝ 15 տող, եւ այս վերջինը՝ գուն ուրեք, մանաւանդ որ աշակերտք, առանձինն մանկագոյնք, սովոր են բերանացի ուսանել իրենց դասը։

Գալով մեր այս պատմութեան դասագրին, ունի սա առաւելութիւններ որ կը պակսին մեծաւ մասամբ ուրիշ նոյն սեռի դասագրոց մէջ։ Նախ ճշդիւ նշանակուած են աստ թուականք որ պատմութեան ոգին են։ «Ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, » կ'ըսէ Խորենացին։ Դըժբախտարար պատմութեան դասագրոց մէջ շատ քիչ միտ դրուած է այս կարեւոր կիտին։ Ցիշուած են նաեւ մեր այս դասագրին մէջ շատ տեղ արտաքին պատմութենէ աեղեկութիւնք որ ունին ուղղակի կամ անուղղակի վերտարերութիւն մեր պատմու-

թեան, եւ կարեւոր են՝ ի լուսաւորել զնա։ Այս դասագրին մէջ կը գտնեն աշակերտք ազգային եկեղեցական մարմնոց, ինչպէս կաթիղիկոսութեան եւ երկու Պատրիարքութեանց (Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսոյ) աթոռակալներուն անուններն անձնիւր աթոռակալութեան թուականաւ՝ հանդերձ իւրաքանչիւր ժամանակակից գլխաւոր դիպօք որ ի ձեռն նոցա կամ առ նոքօք գործուած են։ Հոս կը գտնեն նաեւ հայերէն գրականութեան համառօտ պատմութիւնը։

Պասագիրք ընտրել արդարեւ շատ կարեւոր է, եթէ անաշառ է ընտրութիւնն, նկատելով ուզիւ մտօք դասագրի է ական պայմաններն, իրեւ պատշաճագոյն եւ առաջին կարգի ընտրելով տալ աշակերտաց ձեռքն այնպիսի դասագիրք որոյ լեզուն եւ ոճն է անհամ եւ գուեհիկ, ուր թուական կամ բոլորովին կը պակսի, եւ կամ, եթէ կայ եւս, անօսր եւ անկանոն, հարցմունք եւ պատասխանիք երկայն, լի չնչին եւ աւելորդ պարագաներով, մանաւանդ ուր դէպօք կամ խնդիրք այնպիսի են զոր համառօտիւ միայն յիշատակել հազիւ կ'արծէ։ Պատմութեան, իրեւ ուսումն, նպատակն է կապել ներկայն անցելոյն հետ իրեւ արդիւնք ընդ պատճառի, ուստի պարտին աւնուիլ հինէն այն դէպօք եւ պարագայք միայն որ հարկաւոր են այս նպատակին, աւելին քան զայս կը յոդնեցունէ ուսանողին միտքը եւ կը բթացունէ յիշողութիւնը։ Նորագոյն եւ կենդանի դիպաց գալով, դասագրի մը հեղինակին անվայել է դատաւոր կանգնելով կուսակցութեան կամ գործելեաց՝ զմին արդարացունել, եւ զմիւսն դատապարտել, երբեմն նաեւ նախատական անուններով։ Ամենայն ինչ թող երեւայ իւր բնական գու-

նով. արծնել եւ չպարել արուեստի գործ է որ կը խանգարէ դիպաց բնութիւնը եւ չծառայեր փոքր ինչ յառաջ յիշուած նպատակին։ Այսոքիկ գլխաւոր կանոններ են որոց խնամով միտ դրուած է ի յօրինման գործոյու թէ արդարեւ ունի մեր դասագիրքն այս առաւելութիւնները՝ դիւրին է տեսանել նոցա որ, առանց կանխակալ կարծեաց մուտ տալու, ողջմուռթեամբ կը քննեն։ Յետ կատարելոյ մեր սլարտքն արժանաւոր դասագիրք ընելու մեր այս գործն ազգային պատմութեան կարեւոր ուսուման՝ դաստաստանը կը թողունք այնպիսիաց, աւելորդ համարելով գանդատել անիրաւ խծրծանաց (*) դէմ։ ունենալով սա միմիթարութիւնը թէ որ եւ իցէ ճո-

լութիւն չէ կարող փոխել իրաց ներքին արժէքը, միայն իբրեւ բողոք առ խիղճ մոտաց արդարասիրաց կը կրկնենք վերոյգրեալ առաքելական խրատը. «Մի ամենայն հոգւոց հաւատայք, սիրելիք, այլ ընտրեցէք զոգիսն թէ յԱստուծոյ իցեն»։

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

(*) Կը լսենք թէ ոմանք գայթակղած են որ մենք Պիտոյից գրոց համար ըսինք թէ է զործ «հաւանականապէս» Սիւնեաց եպիսկոպոսին Մովսիսի որ էր է. զարուն մէջ ծաղկող Սիւնեաց դպրոցին նշանաւոր ուսուցիչներէն։ Մովսէս անուան հետ թէուզորոս անունն եւս որ հաւանականապէս Քռթենաւորն է իբրեւ աշակերտ Մովսիսի՝ բաւական իին հաստատել մեր դատումը, եթէ ջրնենայինք միւս եւս զօրաւոր պատմաւ, այն է՝ Պիտոյից հելլենարանութիւնը, որ ճշդիւ խօսելով չէ հելլենարանութիւն, այլ յատուկ ոմ Սիւնեաց դպրոցին մատենագիրներուն, եւ բոլորվին տարբեր Ե. գլուխն վերջին կիսուն բուն հելլենարանութիւնն որոյ դրոշմն ունի Խորենացւոյն հելլենարանութիւնը։ Հայերէն հելլենարանութիւնը մեր մատենագրութեան պահութեան մէջ կարեւոր խնդիր է որ ունի զիտելոյ արժանի կարեւոր կէտեր զորոց խօսել չէ տեղուս։ Այս կէտերուն հմուտը չնը կարծեր թէ ունին պատմաւ գայթակղելու կամ զարմանալու թէ ինչպէս մենք Պիտոյից գիրը, կարծեցնալ «ազգային աւանդութեան» (Պամ. Հայ մատենագր. Ա. Էջ 270) հակառակ, կը համարձակինք համարել զործ է. զարու, եւ Սիւնեաց դպրոցէն մատենագրի ուրուք զործ։ Միթէ եւ այս ազգային Եթէլցանա աւանդութիւնն է որմէ պատկառել խրատուինք։ Ինչպէս պատմութեան, նոյնպէս իին մատենից ըննադատութիւնն ունի իւր օ-

րէնքը զոր պարտ է զիտնալ, որպէս զի դատումն. ի նպաս կամ հակառակ լինի, ոչ ճոխութեամբ, այլ զիտութեամբ, ասպա թէ ոչ կը ստիպուինք յիշեցունել պատկերահանին խրան առ կոշկակարն, «Զամբառնալ քան զիօշիկն ի վեր։» Կորանալ ծանր է, մանաւանդ զիտութեան առջեւ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

1. Հարօն . Հայոց պատմութիւնը քանի՞ ժամանակ կը բաժնուի :

Պատման . Հայոց պատմութիւնը կը բաժնուի հինգ դլխաւոր ժամանակ , Ա. Հայկազանց , Բ. Արշակունեաց , Գ. Բագրատունեաց , Դ. Ռուբինեաց , և Ե. Անտէրնչութեան կամ Հպատակութեան ժամանակ :

2. Հ. Հայկազանց ժամանակը Երբ կը սկսի և Երբ կը վերջանայ :

Պ. Հայկազանց ժամանակը կը սկսի Հայոց աղքին սկիզբէն և կը վերջանայ 330 ին նախ քան գիրիստոս :

3. Հ. Արշակունեաց ժամանակը Երբ կը սկսի և Երբ կը վերջանայ :

Պ. Արշակունեաց ժամանակը կը սկսի իրբ 150 ին նախ քան գիրիստոս , և կը վերջանայ 433 ին յետ Քրիստոսի :

4. Հ. Բագրատունեաց ժամանակը Երբ կը սկսի և Երբ կը վերջանայ :

Պ. Բագրատունեաց ժամանակը կը սկսի 885 ին և կը վերջանայ 1046 ին :

5. Հ. Ռուբինեանց ժամանակը Երբ կը սկսի և Երբ կը վերջանայ :

Պ. Ռուբինեանց ժամանակը կը սկսի 1080 ին , և կը վերջանայ 1375 ին :

6. Հ. Հպատակոթեան ժամանակը ո՞րն է:

Պ. Հպատակոթեան ժամանակ կը կոչուի Ռուբինեանց թագաւորութեան բարձմանէն մինչեւ մեր ժամանակը:

7. Հ. Հին Հայաստանի սահմաններն որո՞նք էին:

Պ. Հին Հայաստանի սահմաններն էին, հիւսիւսէն՝ Վիրք և Աղուանք, հարաւէն՝ Կորդուաց լերինք, յարեւելից՝ Պարսկաստան, և յարեւմտից՝ Փոքր Հայք:

8. Հ. Մեծ Հայք ի՞նչպէս կը բաժնուէր:

Պ. Մեծ Հայք կը բաժնուէր հնգետոսուն նահանգ. Երեք՝ հիւսիսային. Արշակ, Գոստուք, Տայտ. Երեք՝ հարաւային, Մուտ, Կորճայտ, Պարսկանայտ. Երեք՝ արեւելեան, Աւանտ, Ուռէ, Փայտերտոն. Երեք՝ արեւմտեան, Բոբք Հայտ, Զոբրոբր Հայտ, Աղնէտ, և Երեք՝ միջին, Տաբոբերան, Վասոսբերան, Այբոբառ:

9. Հ. Այս նահանգներն ի՞նչպէս կը բաժնուէին:

Պ. Այս նահանգներն կը բաժնուէին այլ և այլ գաւառներ:

10. Հ. Բարձր Հայոց գլխաւոր գաւառներն որո՞նք էին:

Պ. Բարձր Հայոց գլխաւոր գաւառներն էին՝ Դարանաղի, Եկեղեաց, Մանաղի, Դերջան, Սպէր:

11. Հ. Չորրորդ Հայոց գլխաւոր գաւառներն որո՞նք էին:

Պ. Չորրորդ Հայոց գլխաւոր գաւառներն էին, Հաշտեանք, Ծոփիք:

12. Հ. Աղձնեաց գլխաւոր գաւառը ո՞րն էր:

Պ. Աղձնեաց գլխաւոր գաւառն էր Սասուն:

13. Հ. Կորճէից գլխաւոր գաւառը ո՞րն էր:

Պ. Կորճէից գլխաւոր գաւառն էր Կորդոք:

14. Հ. Պարսկահայոց գլխաւոր գաւառներն որո՞նք էին:

Պ. Պարսկահայոց գլխաւոր գաւառներն էին Հէր և Զարեւանդ:

15. Հ. Վասպուրականի գլխաւոր գաւառներն որո՞նք էին:

Պ. Վասպուրականի գլխաւոր գաւառներն էին Ռշտունիք, Տոսր, Աղիովիտ, Արտազ, Գողթն, Նախճաւան, Մարանդ:

16. Հ. Սիւնեաց գաւառներն որո՞նք էին:

Պ. Սիւնեաց գլխաւոր գաւառներն էին Վայոց Ճոր, Գեղաքունի, Բաղք:

17. Հ. Գուգարաց գլխաւոր գաւառներն որո՞նք էին:

Պ. Գուգարաց գլխաւոր գաւառներն էին, Տաշիր, Արտահան:

18. Հ. Արարատայ գլխաւոր գաւառներն որո՞նք էին:

Պ. Արարատայ գլխաւոր գաւառներն էին Բասեն, Արշարունիք, Բագրեւանդ, Ծաղկոսն, Շիրակ, Վանանդ, Աշոց:

19. Հ. Ի՞նչ գլխաւոր քաղաքներ կային ի Մեծ Հայս:

Պ. Գլխաւոր քաղաքներ էին ի Մեծ Հայս՝

Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դույն՝
յԱյրարատեան նահանգին, Շամիրամակերտ
(վաճ)՝ Վասպուրականի մէջ, Ամիդ (Տէրուէչք)՝ ի
Եռփս, Տիգրանակերտ որ աւերակ է, տեղն ան-
գամ անյայտ, յԱղձնիս, Թէտոսուպոլիս (Կաբէն)՝
ի Բարձր Հայս: Անուանի եղան վերջին դարերու
մէջ Անի, Բագրատունեաց մայրաքաղաքն, այժմ
աւերակ, կարս, Երեւան՝ յԱյրարատ. Մանազ-
կերտ, Արճէշ, Մուշ, Բաղէշ՝ ի Տարուբերան.
Բերկրի՝ ի Վասպուրական. Արծն՝ ի Բարձր Հայս.
Խարբերդ՝ ի Չորրորդ Հայս. Շամշողգէ, Լոռի՝
ի Գուգարս: Այս քաղաքներէն ոմանք աւերակ
են, այլք կը վերաբերին Օսմանեան մեծազօր տէ-
րութեան և Ուռասասանի:

20. Հ. Ի՞նչ Երեւելի աւաններ կամ գիւղեր
կը յիշուին ի Հայս:

Պ. Երեւելի աւաններ կամ գիւղեր էին
Աշտիշատ՝ ի Տարօն. Երէզն, Թորոդան, Թիլ՝ ի
Բարձր Հայս. Նախճուան, Զուղայ՝ ի Վասպու-
րական. Ամարաս՝ յԱրձախ: Վերջին դարերու
մէջ կը յիշուին իբրեւ նշանաւոր աւան՝ Երազդա-
ւորք կամ Շիրակաւան յԱյրարատ, Թոնդրակ՝ ի
Տարուբերան:

21. Հ. Ի՞նչ Երեւելի բերդեր ունէր Մեծ Հայք:

Պ. Իբրեւ Երեւելի բերդ կը յիշուին ի Մեծ
Հայս, Անի ուր էին գերեզմանք Արշակունի
թագաւորաց ի Բարձր Հայս. Արտադերք, Դա-
րօնք՝ յԱյրարատ. Ողական՝ ի Տարուբերան.

Վանայ բերդը: Յետին գալուց մէջ՝ Բիւրական,
Կապոյտ բերդ, Բջնի ուսափ էր Գրիգոր Մագիստ-
րոս՝ յԱյրարատ, Երնջակ՝ ի Սիւնիս, Կայեան ի
Գուգարս:

22. Հ. Ի՞նչ գլխաւոր լեռներ կը յիշուին ի
Հայս:

Պ. Իբրեւ Երեւելի կը յիշուին Մասեաց և
Կորդուաց գօտիք, Պարխար՝ ի Տայս, Արագած,
Նպատ և Վարագ:

23. Հ. Ի՞նչ գլխաւոր գետեր կային ի Մեծ
Հայս:

Պ. Գլխաւոր գետ էր Երասխ. արևմտեան
և հարաւային սահմանին վրայ՝ Եփրատ և Տիգ-
րիս: Նշանաւոր էր Մեծին Հայոց հարաւային
մասին մէջ Արածանի որ էր մին Եփրատայ ճիւ-
ղերէն: Երասխայ ճիւղերն էին Ախուրեան, Քա-
սաղ, Մուրց, Մեծամօր, Հրազդան, Տղմուտ և
Գայլ գետ:

24. Հ. Հայոց գլխաւոր ծովակներն որո՞նք էին:

Պ. Հայք ունէին Երկու գլխաւոր ծովակ
որք են Բղնունեաց ծովն Աղթամար կղզւով, և
Գեղամայ ծովն՝ Սեւան կղզւով:

25. Հ. Ի՞նչ Երեւելի գաշտեր կ'յիշուին ի Հայս:

Պ. Երեւելի գաշտեր էին ի Հայս Չիրաւ՝
յԱյրարատեան նահանգին, Շարուրայ և Աւա-
րայրի գաշտերն՝ այն նահանգին մօտ:

26. Հ. Ի՞նչ բերք կը գտնուէր ի Հայս:

Պ. Հանքերէն կը յիշուին մասնաւորապէս

երկաթ, պղինձ, բիւրեղ, նաւթ և զառիկ. բոյսերէն՝ գրեթէ ամէն տեսակ վայրի եւ պըտղատու ծառ և բանջար. անասուններէն՝ ամէն տեսակ ընտանի անասուն, առատ էրէ, և դաշններէն՝ առիւծ, ինձ, յովազ, յիու և կինձ:

Ա. ՄԱՍՆ

ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԻԱԶԱՆՑ

27. Հ. Հայկաղանց ժամանակի պատմութեան աղբիւրը մըն է:

Պ. Հայկաղանց ժամանակի պատմութեան աղբիւրն է Մովսէս Խորենացի, Ե. դարուն անուանի հայ մատենագիրը, որ իբր 480 ին դրեց Հայոց պատմութիւն մի Հայոց սկիզբէն մինչեւ իւր ժամանակը:

28. Հ. Խորենացին ուստի կ'առնու Հայոց հին պատմութիւնը:

Պ. Խորենացին Հայոց հին կամ Հայկաղանց պատմութիւնը կ'առնու Մարիբաս անուն Ասորի հեղինակէ մը, որ Հայոց Վաղարշակ թագաւորին հրամանաւ, իբր 150 ին նախ քան զբր. նինուէի դիւանէն հանեց Հայկաղանց պատմութիւնը:

ՀԱՅԻ, 2350 ՆԱԽ ՔԱՆ ԶՔԲ.

29. Հ. Հայկաղունք ով էին:

Պ. Հայկաղունք կամ Հայկաղն կը նշանակէ սերունդ Հայկայ, որ էր նոյայ երրորդ որդւոյն, Յարեթի ցեղէն, և աշտարակաշինութեան հրսկաներուն հետ գտնուելով Բարելոն, ապստամբեցաւ Իէլ անուն բոնաւորէն և ընտանեօք եկաւ բնակիցաւ Վանայ կողմերն իբր 2350 տարի յառաջ նախ քան զբրիստոս:

30. Հ. Հոն ի՞նչ պատահեցաւ:

Պ. Իէլ բաղմութեամբ զօրաց եկաւ Հայկայ վրայ, բայց յաղթուելով սպանուեցաւ ի Հայկայ, զօրքը յըրուեցան, և Հայկ հաստատուեցաւ այն երկրին մէջ որ յանուն նորա կոչեցաւ Հայաստան, և աղջը՝ Հայք:

31. Հ. Հայկ ի՞նչ եղաւ:

Պ. Դիւզեր և աւաններ շինելով երկիրը ծաղկեցունելէն ետքը՝ Հայկ մեռաւ խաղաղութեամբ:

32. Հ. Հայկայ ընտանիքէն ով կը յիշուին վերոյիշեալ պատմութեան մէջ:

Պ. Հայկայ ընտանիքէն կը յիշուին վերոյիշեալ պատմութեան մէջ Հայկայ երէց որդին Արմենակ, Արմենակայ որդին կաղմաս, երկու եղբայրները՝ Խոռ և Մահաւազ, և Մանաւազայ որդին Բաղ. այս վերջին երեքէն սերեցան Հայոց հին ցեղերը Խոռխոռունիք, Մանաւազեանք և

Բղնունիք . իսկ կադմոս եղաւ կուսակալ հարաւային արեւելեան սահմանին վրայ :

Խորենացին կը յիշէ Հայկայ ուրիշ թռու մը Պատրամ անուն , որմէ սերեցաւ Անդեղ տուն կոչուած նախարարութիւնը :

ՅԱԶՈՐԴՔ ՀԱՅԿԱՅ ՄԻՆՉԵՒ ԱՐԱՄ 2500—2000

33 . Հ . Հայկայ ովլյաջորդեց :

Պ . Հայկայ յաջորդեցին որդի ի հօրէ Արմենակ , Արմայիս , Ամասիա , Գեղամ և Հարմայ մինչեւ 2000 նախ քան զբրիստոս :

34 . Հ . Այս նահապեաք ի՞նչը իրենց երկրին մէջ :

Պ . Դէպ ի հիւսիս և արեւելք երթալով այլ և այլ տեղեր գաղթականութիւններ հաստատեցին , բազմացան և շինութեամբ ծաղկեցուցին երկիրը :

35 . Հ . Այս հինգ նահապետաց սերունդին ովլ կը յիշուի վերոյիշեալ պատմութեան մէջ :

Պ . Վերոյիշեալ պատմութեան մէջ կը յիշուին Արմայիսա որդին Արաստ յորոյ անուն կոչուած է Երասիս գետ , և միւս որդին Շարայ , որոյ համար կըսուի թէ էր շատակեր և յոլովածին (շատ որդի ունեցող) և ժառանդեց իւր անուան կոչուած Շիրակ անուն պատղարեր գաշտը : Շարայի շատակերութեան վրայ գեղջկական առակ մը կար հին Հայոց մէջ , թէ քո Շարայի որիորն է , մեր Շիրակայ ամրարքն չեն :

36 . Հ . Արմայիս ի՞նչ գլխաւոր գործ ըրաւ :

Պ . Արմայիսայ գլխաւոր գործն էր Արմափը քաղաքը զոր շինեց նա իրեն համար , և որ եղաւ այնուհետեւ մայրաքաղաք Հայկազանց :

37 . Հ . Ուրիշ ովլ կը յիշուի այն պատմութեան մէջ :

Պ . Այն պատմութեան մէջ կը յիշուին նաև Ամասիայի որդիքը Յոլակ և Փառոսի , իրենց համանուն Յոլակերտ և Փառախոս դիւղերով , զորս Ամասիա շինեց յանուն նոցա : Մասիս լեռը կոչուած է այսպէս յանուն Ամասիայի :

38 . Հ . Գեղամայ վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ . Գեղամայ ծովը և Գեղաքունի գաւառը Գեղամէ առած են իրենց անուններն : Այս Գեղամայ որդին էր Սիսակ որմէ սերեցաւ Սիւնեաց երեւելի ցեղը :

ՅՈՐԱՄԱՅ ՄԻՆՉԵՒ ՅԱՆՈՒՇԱՌԱՅՆ 2000—1870

39 . Հ . Հարմայի ովլ յաջորդեց :

Պ . Հարմայի յաջորդեց որդին Արամ , Հայկազանց առաջին աշխարհակալ նահապետը : Մինչեւ Արամ Հայկայ յաջորդներն ներքին շինութեամբք զբաղեցան : Արամ եղաւ առաջին որ իւր երկրին սահմանները կոփող թշնամիներուն յաղթելով ընդարձակեց երկիրը :

40 . Հ . Ո՞վ էին Արամայ թշնամիները :

Պ . Արամայ թշնամիներն էին նիւքար անուն Մար բոնաւոր մը Հայաստանի արեւելեան

կողմը, Բարշամ անուն Ասորի մը՝ Հարաւային
կողմը, և Պայտապիս անուն ուրիշ բռնակալ մը՝
արեւմտեան կողմը. Սրամ ասոնց ամենուն յաղ-
թերով շատ տեղեր առաւ անոնց Երկիրներէն:

41. Հ. Սրամէ նուաճեալ Երկիրներուն մէջ
ո՞րն էր Երեւելին:

Պ. Սրամէ նուաճեալ Երկիրներուն մէջ
նշանաւոր էր արեւմտեան մասը մինչեւ Փոքր
Ասիոյ սահմանը:

42. Հ. Սրամ ի՞նչ կարդագրութիւններ ըրաւ-
հոն:

Պ. Գաղթականութիւններ Հաստատեց,
բնակիչներուն պատուիրեց Հայերէն խօսիլ, և
յանձնելով Երկիրը Մշակ անուն կուսակալի մը,
դարձաւ իւր տեղը: Մշակ շինեց քաղաք՝ յիւր
անուն կոչելով Մշակ, զոր տեղացիք չկրնալով
արտաքերել կոչեցին Մաժաք: Սրամայ աշխար-
հակալութեան պատճառաւ այն Երկիրները
կոչուեցան Փոքր, Առաջին, Երկորդ, Երրորդ,
Չորրորդ Հայք: Սրամ այնշատի Երեւելի եղաւ,
որ ուրիշ ազգեր յանուն նորա կոչեցին զՀայս.
Սրմէն, այսինքն Սրամեան:

43. Հ. Սրամ ո՞ր Երեւելի թագաւորի հետ յա-
րաբերութիւն ունեցաւ:

Պ. Նինոսի հետ, որ իրը 1950 ին նախքան
զՔրիստոս, թագաւորեց Ասորեստանի: Այս ամ-
բարտաւան թագաւորը կ'ուզէր իւր նախնոյն
բելայ մահուան վրէժն առնուլ յԱրամայ, ըայց

Համարձակելով՝ բարեկամացաւ Արամայ հետ,
և արտօնութիւն տուաւ անոր Ասորեստանի թա-
գաւորաց պէս մարգարտէ խոյր դնել գլաւիր:

44. Հ. Սրամայ ո՞վ յաջորդեց:

Պ. Սրամայ յաջորդեց որդին Սրայ գե-
ղեցիկ, որոյ գեղեցկութեան համբաւը լսելով նա-
միրամ, Ասորեստանի թագուհին, Նինոսի կինը,
ուղեց իրեն ամուսին ընել զԱրայ, և հրաւիրեց
զնա ի Նինուէ:

45. Հ. Սրայ ընդունեցաւ Շամիրամայ հրաւերը:

Պ. Սրայ մերժեց հրաւերը և Շամիրամ ե-
կաւ զօրօք Հայաստան և կը խորհէր ողջ բռնել
զԱրայ, բայց Սրայ մեռաւ պատերազմին մէջ:
Շամիրամ կը յուսար կախարդական արուեստիւ
կենդանացունել զԱրայ, բայց երբ չկրցաւ, Ս-
րայի որդին զեարդոս Սրայ անուամբ թագաւո-
րեցուց Հայոց և շինելով Վանայ քաղաքը և բերդն
իրեւ ամարանոց, ամառներն կու դար բնակել
հոն: Սրայ Բ. մեռաւ Շամիրամայ հետ պատե-
րազմի մէջ:

ՑԱՆՈՒՇԱԽԱՆԱՅ ՄԻՆՉԵՒ ՊԱՐՈՅՐ 1870—870

46. Հ. Յետ Սրայի Բ. ի Հայաստան ի՞նչ եղաւ:

Պ. Յետ Սրայի Բ. ի Երկիրը եղաւ հարկա-
տու իշխանութիւն Ասորեստանի թագաւորաց,
և Հայկայ սերունդէն ընիկ իշխաններ կը կառա-
վարէին Երկիրն իրեւ կուսակալ մինչեւ 870,
իրը 1000 տարի:

47. Հ. Հայաստան կառավարող հարկատու իշխանաց մէջ ովլ կը յիշուի իրեւ երեւելի:

Պ. Այս իշխանաց մէջ յիշուելու արժանի են 1. Անուշաւան, Արայի Բ. ի որդին, որ լինելով նուիրեալ Արմաւրի սօսիներուն՝ այն ատենուան Հայոց կրօնքին համեմատ, կոչուեցաւ Սոս: 2. Փառնաս որոյ ժամանակ եկաւ Հայաստան Քանանիդաս, Գնիժունեաց նահապետը՝ Յեսուայ ձեռքէն փախչելով: 3. Հայկակ Ս. որ Ասորեստանի Բեղոքոս թագաւորին ժամանակ ապատամբելով ուղեց ազատել աղքն Ասորեստանի լուծէն, բայց չյաջողելով մեռաւ:

48. Հ. Ուրիշ ովլ կը յիշուի երեւելի:

Պ. Իրեւ երեւելի կը յիշուին նաեւ.

1. Զարմայր (1200) որ Տրովական պատերազմին ժամանակն էր և Ասորեստանի Տեւատանոս թագաւորէն զրկուեցաւ զօրօք յօդնութիւն Տրովացւոց, և սպանուած կը կարծուի Աքիւլէսէ որ էր Յունաց գիւցազանց մին:

2. Ակայորդի, առ որ Եկան Ասորեստանի Սենեքրիմ թագաւորին երկու հայրասպան որդիքը Սանասար և Ադրամելէք, յորոց սերեցան երկու երեւելի հայ ցեղեր, Գնունիք և Արծրունիք:

ՊԱՐՈՅՐԻՆ ՄԱՆՉԵ ՎԱՀԵ 870—550 Ն. Ք. ԴՔ.

49. Հ. Հայոց հարկատու իշխաններուն վերջինը ովլ եղաւ:

Պ. Հայոց հարկատու իշխաններուն վերջինն եղաւ Ակայորդւոյն որդին Պարոյր, ասոր

Ժամանակ Մարաց իշխանը վարբակէս և Բարելացւոց իշխանը Բեղեսիս որ հպատակ էին Ասորեստանի, միաբանելով ապատամբեցան, նաեւ զՊարոյր իրենց օգնական ընելով եկան Նինուէի վրայ ուր կը թագաւորէր Արդանարազ:

50. Հ. Այս պատերազմին վախճանն ինչ եղաւ:

Պ. Արդանաբաղյաղթուելով այրեց զինք ընտանեօք իւր պալատան մէջ, Ասորեստանի տէրութիւնը ջնջուեցաւ, և Մարք, Բարելացիք և Հայք եղան ինքնագլուխ թագաւորութիւններ: Այսպէս Պարուրի սկսաւ Հայկազանց թագաւորութիւնն որ տեւեց մինչեւ Աղեքսանդր մեծ, կամ մինչեւ 330 նախ քան դ՞բրիստոս:

51. Հ. Այս Հայկազուն թագաւորներէն ովլ կը յիշուի երեւելի:

Պ. Այս Հայկազուն թագաւորներէն յիշուելու արժանի են.

1. Հրաշեայ, Պարուրի յաջորդը, որոյ ժամանակ Հայոց Բագրատունի ցեղին Հրեայ նահապետը նամբաթ՝ եկաւ ի Հայս:

2. Երուանդ Ա. սակաւակեաց բայց մանաւանդ

3. Երուանդայ որդին Տիգրան Ա. որ յետ Հայկայ և Արամայ քան զայլ Հայկազուն իշխանն եղաւ անուանի:

52. Հ. Տիգրանայ վրայ յիշուելու արժանի ինչ կը պատմուի:

Պ. Տիգրան մեծացուց և աղնուացուց զՀայս զինուորական և քաղաքային կարգօք, նուաճեց

զՅոյնս, և պատերազմելով Մարաց դէմ սպաննեց անոնց թագաւորն Աժդահակ և կործանեց Մարաց թագաւորութիւնը՝ Պարսից թագաւորին կիւրսի օգնութեամբ։

53. Հ. Մարաց դէմ պատերազմին պատճառն ի՞նչ էր։

Պ. Տիգրան բարեկամէր կիւրսի։ Աժդահակ նախանձելով այս բարեկամութեան վրայ և վնասակար համարելով զայն իւր տէրութեան, խորհեցաւ դաւով սպաննել զՏիգրան և իրեն կին առաւ Տիգրանայ քոյրն զՏիգրանուհի, կարծելով դիւրաւ կատարել իւր խորհուրդը Տիգրանուհոյ ձեռօք, բայց Տիգրանուհի դաւաճանութեան խորհուրդն յայտնեց իւր եղբօրը. և աստի ծագեցաւ պատերազմն Աժդահակայ դէմ։

54. Հ. Տիգրանայ յաջորդներուն մէջ յիշուելու արժանի ո՞վ կայ։

Պ. Տիգրանայ յաջորդներուն մէջ յիշուելու արժանի է Տիգրանայ որդին Վահագն, որոյ վրայ Հայոց հին բանաստեղծներն (վիպասանք) Հերակլէսի գործերուն նման գործեր կը պատմէին, որպէս թէ վիշապներու հետ կոռուելով կը յաղթէր Վահագն։ Այս Վահագն յետոյ երրեւ աստուած պաշտուեցաւ ի Հայոց և ի Վրաց։ Վահագնի վրայ է նաեւ Հայոց հին վիպասանաց երդը. «Երկնէր երկին»։

55. Հ. Հայկաղանց թագաւորութիւնն ի՞նչպէս վերջացաւ։

Պ. Մակեդոնացւոյ թագաւորն Աղեքսան-

դըր մեծ, 332 ին նախքան զՔրիստոս, յարձակեցաւ Պարսից տէրութեան վրայ և նուածեց զայն երբ Նորէքսանդրը ուղեց նուածել նաեւ զՀայս, այն ժամանակի Հայկազուն թագաւորն վահէընդդիմացաւ պատերազմաւ Աղեքսանդրի, և յաղթուելով սպանուեցաւ։ Այսպէս վերջացաւ Հայկաղանց թագաւորութիւնը, և երկիրը նուածեցաւ ընդ Մակեդոնացւովք։

56. Հ. Վահէի մահուանէն ետքը Հայաստան ի՞նչ եղաւ։

Պ. Վահէի մահուանէն ետքը Հայաստան այլ և այլ տէրութեանց ձեռք անցաւ մինչեւ 150 նախքան զՔրիստոս, կամ մինչեւ Արշակունեաց թագաւորելն։

ՄԱՍԻՆԻ Բ.

ԺԱՄԱՆԱԿ Ա. ՐԵ Ա. ԿՈՒՆԵԱՅ

~~Վ~~ Ա. Ա. Ա. Ա. Կ. Ա. Ր. Շ. Ա. Կ. Ո. Կ. Ն. Ե. Ա. Յ.

57. Հ. Արշակունիք ո՞վ էին և ի՞նչպէս տիրեցին Հայոց։

Պ. Արշակունի կը նշանակէ Արշակեան։

Պարթեւաց թագաւորն Արշակ մեծ՝ տիրելով շատ երկիրներու, նաեւ Հայաստանի, թագաւորեցուց իւր եղբայրը Վաղարշակ, 150 ին նախ-

քան դիրիստոս, Հայոց և Միջազգետաց՝ մայրաքաղաք տալով նմա զՄծրին:

58. Հ. Վաղարշակայ վրայ ի՞նչ կը պատմուի:

Պ. Վաղարշակ պատերազմաւ յաղթեց իրեն դէմ կեցող սահմանակից ազգերու և բռնականերու, յորոց մին էր Մորփիւղիկէս անուն քաջ մարդ մը որ բռնած էր Հայաստանի արեւմըտեան մասը: Վաղարշակ կարդեր և կանոններ դրաւ և Հայերը շահելու համար երեւելի մարդոց տուաւ նախարարութիւն, այսինքն այլ և այլ նահանգներու և գաւառներու կուսակալութիւնը, և շատ պաշտօններ հաստատեց:

59. Հ. Ի՞նչ դլխաւոր պաշտօններ հաստատեց Վաղարշակ:

Պ. Բագրատունի ցեղին տուաւ թագակապ ասպետութիւն, այսինքն՝ թագաւորը պատակելու իշխանութիւն, Խոսխոռունեաց՝ թիկնապահութիւն, Գնթունեաց՝ հանդերձապետութիւն, զԱրծունիս ըրաւ գրօշապետ, զԳնունիս՝ մատուակ, Աբեղեան ցեղին տուաւ սենեկապետութեան պաշտօնը, Վահունեաց՝ քրմապետութիւնը, և Մուրացան կոչուած ցեղին՝ թագաւորին երկրորդը կոչուելու պատիւը:

60. Հ. Վաղարշակ երկրին ապահովութեան համար ի՞նչ ըրաւ:

Պ. Վաղարշակ երկրին ապահովութեան համար հաստատեց Հայոց սահմաններուն վրայ չորս զինուորական կուսակալութիւններ. հարա-

ւային սահմանին վրայ՝ Աղջնեաց բգեշխութիւնը, հիւսիսային սահմանին վրայ՝ Գուդարաց կամ վրաց բգեշխութիւնը, արեւելեան սահմանին վրայ՝ Սիւնեաց, և արեւմուեան սահմանին վրայ՝ Անդեղ տան իշխանութիւնները:

61. Հ. Վաղարշակ ուրիշ ի՞նչ եզեւելի գործըրաւ:

Պ. Վաղարշակ Հայոց վրայ ստոյդ պատմութիւն կամ աւանդութիւն չգտնելով, Մարիբաս մնուն Ասորի գիտուն մը զրկեց առ եղբայր իւր Արշակ մեծ, աղաչելով զնա թոյլ տալ այն մարդուն մոնել Նինուէի գիւանը և փնտուել Հայոց վրայ պատմական տեղեկութիւններ: Մարիբաս մնուաւ դիւանը, և Ասորեստանցոց ժամանակէն մնացեալ հին մատենի մը մէջ գտաւ Հայոց հին ժամանակին պատմութիւնը մինչեւ Վահէ, և բերաւ առ Վաղարշակ:

ԱՐԵԱԿ Ա. 128-115 Ն. Ք. զՔԲ.

62. Հ. Վաղարշակ ի՞նչպէս մեռաւ և ո՞վ յաջորդեց նմա:

Պ. Վաղարշակ 22 տարի թագաւորելով մեռաւ իսպաղութեամբ, և յաջորդեց որդին Արշակ Ա. Ասոր օրերը Պոնտացիք ապստամբեցան: Արշակ նուաճեց զնոսա, և կոթոլ մը կանգնելով Պոնտոսի (սեւ ծովուն) եղերքը, իւր նիզակը միեց այն կոթողին մէջ: Պոնտացիք երկար ատեն իբրեւ հրաշալիք պաշտեցին այս կոթողը, որ

յետ ժամանակաց նետուեցաւ ծովը : Կ'ըսուի թէ
Արշակ չարչարեց զբագրատունիս որ Հրեայ և
աստուածապաշտ էին՝ թողուլ հրեութիւնը և
կոռք պաշտել : Արշակ 43 տարի թագաւորելով
թողուց տէրութիւնը իւր որդւոյն Արտաշիսի :

ԱՐՏԱՇԵՍ Ա. 115-90 Ն. Ք. ՊԲ.

63. Հ. Արտաշիսի վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Կ'ըսուի թէ Արտաշէս անթիւ զօրօք մը-
տաւ Փոքր Ասիս, անկէ անցաւ Յունաստան,
Յունաց աստուածներուն անդրի պատկերներն
(արձաններն) որ երեւելի ճարտարներու գործ
էին՝ զրկեց իւր երկիրը, բայց ի գարձին սպա-
նուեցաւ իւր զօրքէն : Խորենացին կը յիշէ քանի
մը յոյն պատմիչներ որ զԱրտաշէս քան զԱրք-
սանդր և զԴարեհ գերազանց կը համարէին :

64. Հ. Արտաշէս ուրիշ ի՞նչ երեւելի գործ ը-
րաւ :

Պ. Մինչեւ Արտաշէս Հայոց թագաւորներն
երկրորդ էին յետ Պարթեւաց և կը գործածէին
անոնց դրամներն : Արտաշէս առաւ առաջնու-
թիւնը, իւր անուամբ սկսաւ դրամ հատանել, և
իրեն արքունիք շինեց Պարսկաստան : Նաեւ Ար-
տաշէս չարչարեց զբագրատունիս հաւատոյ հա-
մար : Արտաշէս թագաւորեց 25 տարի :

65. Հ. Արտաշէսի ովլյաջորդեց :

Պ. Արտաշէսի յաջորդեց որդին Տիգրան
մեծ, որոյ դլաւոր գործն է Հռովմայեցւոց
գէմ մղած պատերազմը :

66. Հ. Տիգրան ի՞նչ առթիւ պատերազմի ըլո-
նուեցաւ Հռովմայեցւոց հետ:

Պ. Հռովմայեցիք Եւրոպայի և Ափրիկէի տի-
րելէն ետքը սկսած էին քալել Ասիոյ վրայ :
Միհրդատ, Տիգրանայ քեռայրը, որ Պոնտոսի
թագաւոր էր, ուղեց Հռովմայեցիները վոնտել
յԱսիոյ, և միանալով Տիգրանայ հետ սկսաւ
Հռովմայեցւոց գէմ պատերազմիւ որ տեւեց 30
տարի : Երեք Հռովմայեցի զօրապետներ, Սուզզա,
Ղուկուզզոս և Պոմպէոս, շատ տարիներ Տիգրա-
նայ և Միհրդատայ գէմ մերթ յաջողութեամբ և
մերթ ձախողութեամբ պատերազմեցան : Ի
վախճանի Հռովմայեցիք յաղթեցին Միհրդատայ
որ անձամբ թոյն առնելով մեռաւ (63) :

67. Հ. Տիգրան ի՞նչ եղաւ :

Պ. Յառաջ քան զմահն Միհրդատայ, Տիգ-
րան յաղթուելով Պոմպէոսէ՝ դաշամբ հրաժա-
րած էր Հայաստանէ գուրս երկիրներէն որոց տի-
րած էր : Բայց Միհրդատայ մահուանէն ետքը
Տիգրան նորոգեց պատերազմը և դարձունելով
առաջնութիւնն ի Պարթեւս՝ հաշտեցաւ անոնց
հետ, և օգնութեամբ նոցա յաղթեց Հռովմայե-
ցի զօրավարին կրասոսի որ Հայոց վրայ եկած
էր : Կրասոս սպաննուեցաւ և զօրքը ցրուեցան :

68. Հ. Հռովմայեցիք ի՞նչ ըրին ասոր վրայ :

Պ. Հռովմայեցիք զրկեցին կասիոս զօրապ-
ետն Հայոց և Պարթեւաց միացեալ զօրութեան
գէմ, բայց Տիգրանայ զօրապետները Բարզափրան

Թշտունի և Գնել Գնունի մտան Ասորւոց Երկիրն
ուր էր Կասիոս, վոնտեցին Հռոմայեցիները, և
ապա Երթալով Հրէաստան՝ մտան Երուսաղէմ,
գերի բռնեցին Հրէից թագաւոր քահանայա-
պետն Հիւրկանոս, և բերին առ Տիգրան ուրիշ
շատ Հրեայ գերիներով, զորս Տիգրան բնակեցուց
վան և ուրիշ քաղաքներ:

ԱՐՏԱՒՐ. Ա. 56-51 Ն. Ք. ՂԲ.

69. Հ. Հռոմայեցիք ի՞նչ ըրին երբ լսեցին թէ
Տիգրան դաշինքն աւրեց:

Պ. Հռոմայեցիք լսելով թէ Տիգրան դա-
շինքը չպահեց, զբկեցին իրենց մեծ զօրավարն
Անտոնիոս: Այս միջոցին Տիգրան մեռած էր և
թագաւորած էր որդին Արտաւաղդ:

70. Հ. Արտաւաղդայ վրայ ի՞նչ կը պատմուի:

Պ. Կը պատմուի թէ Արտաւաղդ Պարթե-
ւաց օգնութեամբ յարձակելով Հռոմայեցւոց
զօրաց վրայ յԱսորիս, հալածեց զնոսա, մինչ
Անտոնիոս Եգիպտոս էր: Արտաւաղդ նորէն ափ-
րեց Միջագետաց որմէ դաշտմբ հրաժարած էր
Տիգրան: Զայս լսելով Անտոնիոս՝ բարկութեամբ
եկաւ, բռնեց զՅրտաւաղդ, և ոսկի շղթայիւ
կապելով զրկեց Եգիպտոսի թագուհւոյն կղէո-
պատրայի որ Անտոնիոսի սիրելին էր և թշնամի
Հայոց: Արտաւաղդ սպանուեցաւ և այսպէս վեր-
ջացաւ Վաղարշակայ յեղը: Արտաւաղդ թագա-
ւորեց և տարի:

71. Հ. Արշակունի թագաւորաց մէջ յաջորդու-
թեան համար ի՞նչ օրէնք կար:

Պ. Միշտ Երէց որդիք կը թագաւորէին,
և ունէին արտօնութիւն թագաւորին հետ Այ-
րարատ բնակել, մինչ մնացեալ որդիք և դըս-
տերք կը բնակէին Հաշտենից, Աղիովտի և Առ-
բերանոյ դաւառները: Բաց յԵրէց որդւոց ու-
րիշ Արշակունոյ Այրարատ բնակել, կը համար-
ուէր նշան ապստամբութեան:

ԱՐԴԱՐ. 55-5 Ն. Ք. ՂԲ.

72. Հ. Արտաւաղդայ բռնուելէն ետքը Հայք
ի՞նչ եղան:

Պ. Արտաւաղդայ բռնուելէն իրը Երկու-
տարի ետքը, Հայոց զօրքը թագաւոր ընտրեցին
Տիգրանայ Եղբօրորդին զՅրշամ, որ չկրնալով
օգնութիւն դմնել Պարթեւներէն, սախառուեցաւ
հաշտութիւն ընել Հռոմայեցւոց հետ, Միջագե-
տայ համար միայն հարկ տալով Հռոմայեցւոց:
Արշամնաեւ Հերովդէսի հետ, որոյ հետ թշնա-
մութեամբ էր, հաշտուեցաւ, վասն զի Հռոմա-
յեցիք Հերովդէսի կողմը բռնեցին: Արշամ թա-
գաւորեց 30 տարի:

ԱԲԳԱՐ, 5 ՆԱԽ ՔԱՆ ՂԲ. — ԵԽ 54 ՅԵՏ ՔԲ.

73. Հ. Արշամայ ո՞լ յաջորդեց:

Պ. Արշամայ յաջորդեց որդին Արդար: Ար-

գար Եղեսիա փոխեց աթոռը Մծրինէ որ մինչեւ այն ատեն մայրաքաղաք էր Հայոց :

74. Հ. Աբգարու պատմութեան նշանաւորադոյն դէպքը ո՞րն է :

Պ. Աբգարու պատմութեան նշանաւորադոյն դէպքը է դարձ նորա ի Քրիստոնէութիւն։ Աբգար Պարթեւաց երկիրը երթալով յաջորդութեան վէճը խաղաղեցունելու համար՝ կասկածելի եղած էր Հռոմայեցւոց որ թշնամութեամբ էին Պարթեւաց հետ։ Աբգար իւր երթալուն պատճառը հասկցնելու համար Հռոմայեցի զօրապետին Մարիոսի որ կուսակալ էր Ասորւոց՝ զրկեց իւր մեծամեծներէն երեք հոգի, որ ի դարձին Ս. Երուսաղէմ հանդիպելով տեսան Քրիստոսի հրաշները, և եկան պատմեցին Աբգարու։

75. Հ. Աբգար Քրիստոսի հրաշները լսելով ի՞նչ ըրաւ :

Պ. Աբգար Քրիստոսի հրաշները լսելով հաւասաց անոր, և որովհետեւ հիւսնդութիւն մը ունէր, իւր սուրհանդակն Անան՝ նամակով Ս. Երուսաղէմ զրկելով, հրաւիրեց գՔրիստոս դալ յԵղեսիա :

76. Հ. Քրիստոս այս հրաւէրն առնլով ի՞նչ ըրաւ :

Պ. Քրիստոս յանձն չառաւ երթալ, միայն պատասխան տուաւ Աբգարու նամակին, և խոստացաւ իւր համբարձմանէն ետքը զրկել աշկերտներէն մին բժշկել զԱբգար :

77. Հ. Քրիստոսի խոստումը կատարուեցա՞ւ։ Պ. Այս, յետ համբարձման Քրիստոսի թագէոս առաքեալ դալով յԵղեսիա բժշկեց զԱբգար, քարոզեց Աւետարանը Եղեսացւոց, մլրտեց շատերը, եպիսկոպոս ձեռնագրեց զԱղդէ, և ապա Հայաստան երթալով դարձուց ի Քրիստոնէութիւն Հայոց Սանատրուկ իշխանին գուստը Սանդուխտ և անոր հետ նահատակեցաւ Սանատրկոյ հրամանաւ։ Այսպէս Աբգար եղաւ առաջին Քրիստոնեայ թագաւոր, և 38 մարի թագաւորելով մեռաւ։

ԱՆԱՌՈՒՆ, 54-56 ՑԿՑ ՔՐ.

78. Հ. Աբգարիաւ ովլյաջորդեց։

Պ. Աբգարու յաջորդելով որդին Անանուն, թողուց քրիստոնէութիւնը և սպաննել տուաւ զԱղդէ, և մինչդեռ պաշտին մէջ սիւն մը կանգնել կու տար, սիւնը գլխուն իյնալով մեռցուց դնաւ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ, 55-65

79. Հ. Յետ մահուան Անանունի ովլեղաւ թագաւոր :

Պ. Յետ մահուան Անանունի Եղեսացիք կոչեցին զԱնատրուկ, Աբգարու քեռորդին, որ Հայոց երկրին վրայ կուսակալ դրուած էր Աբգարէ և կ'ուզէր բոլոր Հայոց թագաւորել։ Սանատրուկ թագաւորելով նորոգեց Մծրին քա-

զաքը և կանգնեց իւր պատկերն հրապարակին
մէջ ձեռքը դրամով մը, որպէս թէ բոլոր գանձն
սպառած և այն դրամը միայն մնացած էր։ Սա-
նատրուկ որսի ատեն դիպուածով փորէն զար-
նուելով մեռաւ՝ յետ թագաւորելոյ 30 տարի։

ԵՐՈՒԱՆԴ Բ. 65-85

80. Հ. Սանատրկոյ ովլյաջորդեց։

Պ. Սանատրկոյ նախարարներէն մին, եր-
ուանդ, ի մօրէ Արշակունի, կաշառելով միւս
նախարարները յափշտակեց թագաւորութիւնն,
առանց պրակուելու Բագրատունի իշխանէ, և
իսկոյն սպաննել տուաւ Սանատրկոյ որդիքը։
Տղայ մը միայն ազատեցաւ Արտաշէս անուն, զոր
դայեակը, Սմբատ Բագրատունի, փախուց Պար-
թեւաց թագաւորին Դարեհի քով։

81. Հ. Երուանդայ վրայ ի՞նչ կը պատմուի։

Պ. Երուանդայ համար կ'ըսուի թէ էր
յաղթանդամ և ուժեղ, գմնեայ հայեցուածով,
այնպէս որ անոր մէկ նայուածքը կարծր քարերը կը
պայթեցունէր։ Երուանդ ապահով վարելու համար
թագաւորութիւնը՝ թիկունք ըրաւ իրեն զչոռ-
մայեցիս, անոնց թողլով զՄիջագետու, և շինեց
գեղեցիկ և ամուր քաղաքը Երուանդաշատ ուր
փոխագրեց արքունիքը։ Շինեց նաեւ դաստա-
կերտ (գիւղ) մը՝ Երուանդակերտ, և ուրիշ փոքր
քաղաք մը զոր կոչեց Բագրատան, այսինքն՝ կուոց
քաղաք, քանզի հոն փոխագրեց կուռքերը, և
տնկեց անտառ մը Ծննդոց անուն։

ԱՐՏԱՆԴ Բ. 85-126

82. Հ. Ի՞նչ եղաւ Արտաշէս մանուկը։

Պ. Արտաշէս մեծցաւ Պարթեւաց քով, և
երբ չափահաս եղաւ, դայեակը, Սմբատ, Պար-
թեւաց օգնութեամբ բերաւ զնա ի Հայս և մեր-
ժելով զերուանդ, թագաւորեցուց զԱրտաշէս,
պսակելով զնա ըստ օրինի Արշակունեաց։

83. Հ. Երուանդ ի՞նչ եղաւ։

Պ. Երուանդ որ պատերազմին մէջ սպան-
նուած էր՝ իբրեւ Արշակունի թաղուեցաւ պատ-
ուով հրամանաւ Արտաշիսի։ Երուանդ թագաւո-
րեց 20 տարի։

84. Հ. Արտաշիսի վրայ ի՞նչ կը պատմուի։

Պ. Արտաշէս մեծամեծ պարգեւներ տուաւ
իւր հաւատարիմ զայեկին Սմբատայ, և զԱր-
դամ, Մուրացան ցեղին նահապետը, որ մեծա-
մեծ ծառայութիւններ ըրած էր Արտաշիսի՝ հաս-
տատեց իւր երկրորդութեան պատուոյն մէջ, և
իւր ստիտուվն որդւոյն Դիսակայ ցեղին տուաւ
նախարարութեան պատիւ, կոչելով ցեղը Դիմաք-
սեան, այսինքն «կէս դիմօք», վասն զի Դիսակայ
գէմքը պատերազմի մէջ սրով կտրուած էր։

85. Հ. Արտաշէս ի՞նչ երեւելի գործեր ունի։

Պ. Արտաշիսի երեւելի գործերն են, 1. Նո-
րոգութիւն Արտաշատու, ուր փոխագրեց ար-
քունիքը, 2. Պատերազմն Ալանաց գէմ որոց թա-
գաւորին գուստրը, Սաթինիկ, առաւ Արտաշէս
կնութեան, փառաւոր հարսանիք ընելով, ուր

կ'ըսեն Հայոց բանաստեղծք, թէ ոսկի և մարդարիտ կը տեղաբ: «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի. Տեղայր մարդարիտ ի հարսնութեանն Ամթինկան»: Կայ ուրիշ հին երդ մը ուր Արտաշիսի զԱմթինիկ հարսնութեանն համարիւր բանակը բերելը կը պատմուի այլաբանորէն (*):

86. Հ. Արտաշէս ի՞նչ բարեկարդ ութիւններ ըրաւ Հայաստանի մէջ:

Պ. Արտաշէս բազմամարդացուց երկերը, ծաղկեցուց նաւագնացութիւնը ծովակներու և գետերու վրայ, որսորդութիւնը, մանաւանդերկրագործութիւնը և ուրիշ օգտակար արուեստներ և գիտութիւններ:

87. Հ. Արտաշիսի ընտանեկան կենաց վրայ ի՞նչ կ'ըսուի:

Պ. Կ'ըսուի թէ Արտաշէսիւր որդւոց և անոնց կամսանց նախանձէն և հակառակութենէն նեղուեցաւ յոյժ, մանաւանդ խստութենէ բարուց երէց որդւոյն Արտաւազդայ, որ հակառակութեց երկու երեւելի նախարարաց, Արդամայ և Սմբատայ, մեծ վիշտ տուաւ հօրը: Արտաւազդայ թելադրութեամբ վերջապէս ջնջուեցաւ Մուրացան ցեղը, և Սմբատ ստիպուեցաւ հրաժարել սպարապետութենէ: Այսպէս ամէն իշխանութիւն իւր ձեռքն անցուց Արտաւազդ մին-

(*) Այս երգը կը գտնուի Խորենացւոյն պատմութեան մէջ. զիրք Բ. 3.

չեւ հօրը մահը: Արտաշիսի պատմութիւնը եղդած էին Հայ վիպասանք, որոց երգերը կային Խորենացւոյն ժամանակ, և յորոց կը բերէ Խորենացին հասուածներ:

88. Հ. Արտաշիսի մահուան վրայ ի՞նչ կը պատմուի:

Պ. Կ'ըսուի թէ, մինչ Արտաշէս Ադրիանոս կայսեր հրամանաւ կ'երթար Պարսկաստան, ճամբան հիւանդացաւ, և որովհետեւ ջերմ դիցապաշտ էր, զրկեց. իւր սենեկապետն յերիզա, ուր էր երեւելի մեհեան Անահտայ, խնդրել քժշկութիւն, բայց յաւաջ քան զդարձ սենեկապետին մեռաւ Արտաշէս և թաղուեցաւ մեծ շքեղութեամբ: Կ'ըսուի թէ շատեր ըստ օրինի հեթանոսաց, սպանին զիրենք մեռելոյն գերեզմանին վրայ: Արտաշէս թագաւորեց 41 տարի:

ԱՐՏԱՎԱԶԴԻ Բ. 126.

89. Հ. Արտաշիսի ովյաջորդեց:

Պ. Արտաշիսի յաջորդեց որդին Արտաւազդշատ կարծ ժամանակ. վասնզի կինծ և վայրենի էշ որսալու ելլելով, անդունդի մէջ ինկաւ ձիով հանդերձ և եղաւ անհետ:

90. Հ. Արտաւազդ ի՞նչ բնութեան տէր էր, և անոր տղայութեան վրայ ի՞նչ կը պատմուէր:

Պ. Որովհետեւ Արտաւազդ ի ինէ կատաղի էր, կը կարծուէր թէ Մարաց վհուկներն Աժդահակայ ցեղէն կախարդած էին զԱրտաւազդ: Ուստի

Հայ վիպասանք կ'ըսեն . ու կիշապաղունք դողացան
զմանուլին Աղտաւազդ և գեւ փոխանակ եղին» :

91. Հ. Վիշապաղունք ով էին :

Պ. Վիշապաղունք անուամբ կ'իմացուէր Աժ-
դահակայ ցեղը, վասնղի Աժդահակ կը նշանա-
կէր վիշապ :

92. Հ. Արտաւազդայ վրայ ի՞նչ առասպել կար
ռամկաց մէջ :

Պ. Վիպասանք կը պատմեն թէ, երբ Ար-
տաշիսի մահուան ժամանակ շատեր սպաննեցին
զիրենք մեռելին վրայ, և Արտաւազդ դանդա-
տեցաւ հօրը թէ երկիրն անմարդի եղաւ, ես
որու թագաւորեմ, Արտաշէս անիծեց իւր որդին
ըսելով. Դու որսի ելլես, քաջերը (այսինքն դե-
ւերը) բռնեն զքեղ և տանին Մասիս լեռը, հոն
մնաս, և լոյս չտեսնես: Այս առասպելէն առ-
նելով ռամիկները կարծէին թէ գեւերը զԱր-
տաւազդ բռնելով կապած էին այրի մը մէջ, և
երկու շուն կրծէին միշտ շղթաները, որպէս զի
Արտաւազդ ելլեր և վերջ տար աշխարհի. բայց
դարբիններուն կռանին ձայնէն կը զօրանային
շղթաները: Այս պատճառաւ սնապաշտ դար-
բիններ Խորենացւոյն իսկ ժամանակ կիրակի
օրեր երիցս կամ չորիցս կը բախէին իրենց սալը,
որպէս զի, կ'ըսէին, զօրանան շղթայը Արտա-
ւազդայ:

ՏԻՐԱՆ Ա. 150-151. ՏԻԳՐԱՆ Գ. 151-193.

93. Հ. Արտաւազդայ ովլյաջորդեց:

Պ. Արտաւազդ անորդի էր, և յաջորդե-
ցին նմա իրարու ետեւէ երկու եղբարք նորա,
Տիրան Ա. և Տիգրան Գ.: Առաջինը Տիրան՝ 21
տարի, երկրորդը՝ 42 տարի:

94. Հ. Ասոնք ի՞նչ երեւելի գործ ունին:

Պ. Ասոնք երեւելի գործեր չունին: Տիրա-
նայ համար կ'ըսուի թէ կառավարութիւնը թող-
լով երախնաւու անուն անձեւացի իշխանին զոր
շատ կը սիրէր, առանձնացաւ եկեղեց գաւա-
ռին Զրմէս կոչուած աւանը. կ'ըսուի նաև թէ
Տիրան ունէր երկու ձի շատ արագընթաց, որոց
միոյն վրայ հեծնելով Բղնունեաց իշխանը Դատա-
քէ, կը համարէր զինք ընչեղագոյն քան զարքայ:

95. Հ. Տիգրանայ վրայ ի՞նչ կը պատմուի:

Պ. Կը պատմուի թէ Տիգրան Պարթեւաց
թագաւորին Պերոզի հետ յարձակելով Հռոմա-
յեցւոց վրայ Փոքր Ասիա, կնոջէ (թագուհիէ) մը
բռնուեցաւ, բայց յետոյ Ղուկիսս Վերոսս հռո-
մայեցի կայսրը, ազատելով զնա զրկեց իւր ա-
թուը: Տիգրան ի պատիւ իւր եղբօրը Մաժանայ
քրմապետի, անոր գերեզմանին վրայ որ ի Բա-
գաւան՝ կանգնեց բագին, որոյ զոհերէն կ'ու-
տէին աղքատք և պանդուխտք: Տիգրան շինեց
հոն նաեւ հիւրանոցներ օտարականաց համար:

ՎԱՐԱՐ. 195-215

96. Հ. Տիգրանայ Դ. ի ովլ յաջորդեց :

Պ. Տիգրանայ Դ. ի յաջորդեց որդին վաղարշ, որ հիւսիւսային աղքաց դէմ պատերազմի մէջ սպանուեցաւ, յետ թագաւորելը 21 տարի : Վաղարշ շինեց իւր ծննդեան տեղը երասխայ մօտ գեղեցիկ աւան մը, Վաղարշաւան, և նոյն գետին մօտ Վաղարշապատ՝ քաղաքը որ կոչուեցաւ նաեւ նոր քաղաք և եղաւ այնուհետեւ մայրաքաղաք Հայոց : Այս Վաղարշ հաստատեց Ամանորայ տօնը որ կը կատարուեր ի Բագաւան, Հայոց տարեգլխուն, այն է նաւասարդի 1 ին :

ԽՈՍՔԱՆ Ա. 215-261

97. Հ. Ովլ եղաւ Վաղարշայ յաջորդ :

Պ. Վաղարշայ յաջորդեց որդին Խոսրով Ա. մեծ, որբոյն Տրդատայ հայրը : Խոսրով հօրը մահուան վրէժը ինոդրելու համար դնաց հիւսիսային աղքաց վրայ, անոնցմէ շատ պատաճողներ առաւ և կանդնեց սահմանագլուխները կոթողներ Յունարէն գրով, ցուցունելու համար թէ հպատակ էր Հռոմայեցւոց, վասն զի այն բարբարոսները կը վախնային Հռոմայեցիներէն :

98. Հ. Խոսրովայ ժամանակ ի՞նչ երեւելի դէպք պատահեցաւ :

Պ. Պարախյ Սասանեան ցեղէն Արտաշիր անուն իշխան մը սպաննելով Պարթեւաց թագաւորն Արտաւան որ աղքական էր Խոսրովայ, յա-

փրշտակեց տէրութիւնը : Խոսրով իրը տասը տարի պատերազմելէ ետքը Արտաշրի դէմ ի վրէժմահուան Արտաւանայ՝ Արտաշրի թելադրութեամբ սպանուեցաւ դաւով յԱնակայ, յետ թագաւորելը 48 տարի :

99. Հ. Անակ ովլ էր :

Պ. Անակ էր երեւելի իշխան Պահլաւ ցեղէն, աղքական Արտաւանայ և Խոսրովու : Անակ գլխորով սպաննելէն ետքը բռնուելով սպանուեցաւ բոլոր ընտանեօք, բաց ի կաթնկեր տղէ մը զոր սանտուն փախուց կեսարիա, և որ կոչեցաւ յետոյ Գրիգոր :

ՀԱՅԻ ԱՌԱՆՑ ԹԱԳԱԱՌԻ 261-286 Ն. Ք. ՊՔԻ.

100. Հ. Խոսրովայ սպանուելէն ետքը Արտաշիր Բնչըրաւ :

Պ. Խոսրովայ սպանուելէն ետքը Արտաշիր եկաւ աիրեց Հայաստանի : Յունաց երկիրը Փախան Հայոց նախարարներէն շատերն ընդ որս նաեւ Արտաւազդ մանդակունի, Խոսրովայ որդւոյն Տրդատայ դայեւակը, Տրդատաւ հանդերձ . իսկ Օտա նախարար Ամատունեաց, առնլով Տրդատատայ քոյրն գլխորովիդուխտ, ամրացաւ Անիրերդը, և մնաց հոն մինչեւ ի գալուստն Տրդատայ ի Հայս :

101. Հ. Տրդատ Բնչ եղաւ :

Պ. Տրդատ մնաւ և կը թուեցաւ Լիկիանէս անուն Հռովմայեցի կոմին քով, և էր ուժեղ,

այնպէս որ վայրի ցլուց եղիւրներէն բռնելով կը զգեանէր, և անգամ մը ձիրնթացի մէջ վազող կառք մը ետեւէն բռնելով կեցուց։ Տրդատայ զօրութեան վկայ է առակը որ շատերուն բերանն էր. «Երբեւ զսէզն Տրդատ որ սիդալովն աւերեաց զթումբս գետոց, և ի սիդալ իւրում ցամաքեցոյց զյորձանս ծոլուց»։

102. Հ. Գրիգոր ի՞նչ եղաւ։

Պ. Գրիգոր սնաւ ի կեսարիա, կրթուեցաւ ի քրիստոնէութեան, և ամուսնանալով ունեցաւ երկու որդի, և ապա գալով Տրդատայ քով ծառայութեան մոտաւ, իբր թէ հատուցում ընելու համար Տրդատայ հօրը խոսրովու սպանման իւր հօրը Անակայ ձեռօք։

ՏՐԴԱՏ. 286-542.

103. Հ. Տրդատ ի՞նչպէս առաւ թագաւորութիւնը։

Պ. Դիոկղետիանոս կայսեր ժամանակ (284-305) Գոթացւոց թագաւորը գալով Հռոմայեցւոց վրայ, ուղեց մենամարտել կայսեր հետ, և որովհետեւ Գոթացւոց թագաւորն հսկայ էր, և կայսրը՝ տկար. Տրդատ ելաւ հսկայ թագաւորին դէմ և յաղթեց։ Տրդատայ այս քաջութեան իրեւ վարձ, Դիոկղետիանոս զրկեց զնա իւր հայրէնի աթոռը։

104. Հ. Տրդատ ի՞նչ ըրաւ։

Պ. Տրդատ հռոմայեցի զօրօք եկաւ Հայաստան, ցրուեալ նախարարք ժողովեցան և սի-

րով ընկալան զՏրդատ իւրեւ թագաւոր Հայոց, և Տրդատ վանելով Պարսիկներն, տիրեց իւր հայրենի երկրին։

105. Հ. Տրդատայ թագաւորութեան սկիզբն ի՞նչ պատահեցաւ։

Պ. Երբ Տրդատ եկաւ Եկեղեց գաւառին երիզա գիւղն ուր էր Հայոց երեւելի չաստուածոյն Սնահատայ մեհեանը, ուղեց սրբոյն Գրիգորի ձեռօք նուէրներ զրկել չաստուածոյն, բայց սուրբն Գրիգոր որ Քրիստոնեայ էր՝ չառաւ յանձն այս պաշտօնը։

106. Հ. Տրդատ ի՞նչըրաւ սրբոյն Գրիգորի։

Պ. Տրդատ նախ քաղցրութեամբ և ապա սոսկալի տանջանօք ստիպեց զսուրբն Գրիգոր թողուլ քրիստոնէութիւնը, և երբ չկրցաւ համոզել զնա, իմանալով նաև թէ նա զիսուրով սպանող Անակայ որդին էր, հրամայեց նետել զնա Արտաշատ քաղաքին խոր-վիրապը, ուր մահապարտներ կը նետէին, և սուրբն Գրիգոր մընաց հոն տասն և հինգ տարի։

107. Հ. Այս տասն և հինգ տարուան մէջ Տրդատ ի՞նչ ըրաւ։

Պ. Տրդատ շատ անգամ զարկաւ Պարսիկները, սպարապետ դրաւ զԱրտաւազդ Մանդակունի իւր ազատիչը. ըրաւ հազարապետ Ամատոննեաց իշխանն Օտա, սնուցիչ խոսրովիդիստոյ, իրեն կին առաւ Աշխագար անուն իշխանի մը գուստըն Աշխէն, և զօրացուց թագաւորութիւնը։

108. Հ. Յետ այսորիկ ի՞նչ պատահեցաւ:

Պ. Խումբ մը կուսանք իրենց գլխաւորին Գայիանեայ հետ, Դիոկետիանոսի հալածմանէն փախչելով եկան Հայաստան (301): Տրդատ ուղեց այս կուսանաց մին, Հռիփիսիմէ անուն, որ շատ գեղեցիկ էր, իրեն կին առնուլ, բայց սուրբըն Հռիփիսիմէ որ կոյս մնալ ուխտած էր՝ չառաւյանձն, և Տրդատ բարկանալով չարաչար տանջանօք սպաննել տուաւ զՀռիփիսիմէ բոլոր ընկերներով:

109. Հ. Այս անդուժ դործին վրայ Տրդատայ ի՞նչ պատահեցաւ:

Պ. Վեց օր ետքը, մինչ Տրդատ վաղարշապատ քաղաքէն բազմութեամբ կ'ենէր դուրս որսի երթալու, յանկարծ դիւահարեցաւ և ի խող փոխուելով գնաց լեռները, և վայրի խոզերու հետ կ'արածուէր. նաև թագաւորին իշխանները և քաղաքին մարդիկն այսահարեցան:

110. Հ. Այս հարուածէն ի՞նչպէս աղատեցան թագաւորը և քաղաքին մարդիկը:

Պ. Մինչքոլոր արքունիքը խռոված և սարսափած էր այս հարուածոց համար, Տրդատայ քոյրը Խոսրովիդուխտ հրեշտակէ մը հրաման առաւ բերել տալ զսուրբն Գրիգոր: Խակոյն հանուեցաւ Գրիգոր խոր վիրապէն, բժշկեց թագաւորը և բոլոր այսահարները, և քարողելով անոնց քրիստոնէութիւնը՝ մկրտեց հաղարաւոր մարդիկ: Այսպէս Հայք աղդովին դարձան ի-

քրիստոնէութիւն սրբոյն Գրիգորի ձեռօք, որ այս մեծ դործին համար արժանացաւ կոչուիլ «Հուսաւորիչ Հայոց»:

111. Հ. Սուրբն Գրիգոր այնուհետեւ ի՞նչ ծառայութիւն ըրաւ աղդին:

Պ. Սուրբն Գրիգոր Տրդատայ եւ բոլոր իշխանաց հաւանութեամբ զրկուեցաւ կեսարիա, ձեռնադրուեցաւ կեսարիոյ Ղեւոնդիոս Եպիսկոպոսէն կաթողիկոս Հայոց, կործանեց կուռքերը և մեհեանները, և շինեց եկեղեցիներ, որոց մէջ երեւելի էր Վաղարշապատու Մայր եկեղեցին, որ յետոյ կոչուեցաւ Եղմիածին:

Սուրբն Գրիգոր շատ կարգեր և կանոններ հաստատելէ ետքը, իւր որդին զսուրբն Արիստակէս իրեն յաջորդ թողլով առանձնացաւ Մանեայ այր կոչուած լեռը, և կը ճգնէր մինչեւ իւր մահը (333):

Սուրբն Գրիգոր քրիստոնէութեամբ լուսաւորելուն համար զՀայս, յիրաւի կոչուեցաւ Լուսաւորիչ Հայոց:

112. Հ. Յիշուելու արժանի ուրիշ ի՞նչ դէպք կան Տրդատայ պատմութեան մէջ:

Պ. Տրդատայ պատմութեան մէջ յիշուելու արժանի առաջին դէպքն է Տրդատայ Հոռոմերթալը (319) Ա. Գրիգոր Լուսաւորչին հետ: Մեծ ընդունելութիւն գտան Տրդատ և սուրբն Գրիգոր կոստանդիանոսէ որ այն ատեն կայսր էր Հռոմայ և նոր դարձած էր ի քրիստոնէու-

թիւն, և Հռոմի եպիսկոպոսէն Սեղբեստրոսէ։ Նաեւ միաբանութեան և սիրոյ դաշինք հաստատուեցան ի մէջ երկուց թագաւորաց, կոստանդիանոսի և Տրդատայ, ինչպէս նաեւ ի մէջ երկուց հայրապետաց, Սեղբեստրոսի և մեր Լուսաւորչին։

113. Հ. Յիշուելու արժանի երկրորդ դէպքը ո՞րն է։

Պ. Յիշուելու արժանի երկրորդ դէպքն է Տրդատայ պատերազմն հիւսիսային ազգաց դէմ։ Այս պատերազմին մէջ հսկայազօրն Տրդատ ընդմէջ կտրեց Բասլաց թագաւորն հանդերձ դլխով ձիուն, և յաղթեցին Հայք, թէպէտ մեռան նախարարներէն շատեր, ընդ որս նաեւ Արաւազդմանդակունի։

114. Հ. Յիշուելու արժանի երրորդ և չորրորդ դէպքերն որո՞նք են։

Պ. Յիշուելու արժանի երրորդ դէպքն է Սլկունեաց ապստամբ իշխանին սպանումը Մամդուն անուն ձեռացի (Զին) իշխանէն որմէ սերեցաւ Մամիկոնեան ցեղը։ Չորրորդ երեւելի դէպքն էր դալուսան աղքականին Տրդատայ կամսարայ որմէ սերեցաւ կամսարականաց ցեղը, որ կոչեցան նաեւ Արշարունիք։

115. Հ. Ի՞նչպէս եղաւ Տրդատայ վախճանը։

Պ. Տրդատ որ յամենայնի գործակից եղած էր սրբոյն Գրիգորի ի լուսաւորութիւն աղդին՝ տեսնելով նախարարաց անուղղաց բարքը,

առանձնացաւ Բարձր Հայոց Դարանաղեաց գաւառին Մանեայ այրք կոչուած լեռը ուր ճնածէր նաեւ Լուսաւորիչ։ Նախարարք որպէս թէ պղալով կանչեցին դըրդատ և երբ Տրդատ յանձն շառաւ գալ, թունաւորեցին սուրբ թագաւորը (342)։ Այսպէս մարեցին կ'ըսէ Խորենացին, իրենցմէ աստուածաշտութեան բազմափայլ ճառագայթը։ Ա. Ն Տրդատ թագաւորեց 56 տարի։

116. Հ. Լուսաւորչին և Տրդատայ կենդանութեան ժամանակ ի՞նչ եկեղեցական երեւելի դէպք կը յիշուի։

Պ. Լուսաւորչին հայրապետութեան և Տրդատայ թագաւորութեան ժամանակ, Գրիստոսի թուականին 335ին նղոփք եղաւ Արիոս անուն հերետիկոսապետին դէմ որ Գրիստոսի աստուածութիւնը կ'ուրանար. Նիկոյ սուրբ ժողովը, որոյ հայրապետներէն մին էր սուրբ Արիստակէս որ զրկուեցաւ իւր հօր սրբոյն Գրիգորի կողմանէ, և ի դարձին բերաւ ժողովին կանոններուն հետնաեւ նիկոյ հանդանակն, այսինքն՝ Հաւատագութը։

ԽՈՍՔՈՎ. Բ. 542-550

117. Հ. Յետ մահուան սրբոյն Տրդատայ ի՞նչ պատահեցաւ և ո՞եղաւ թագաւոր։

Պ. Յետ մահուան սրբոյն Տրդատայ, Պարսից թագաւորը Շապուհ սկսաւ ձգել խոռովութիւն Հայոց մէջ, և թելագրութեամբ նորաշատ տեղեր ապստամբութիւններ և անկարգու-

թիւններ ծագեցան, Մանաւազեանց և Որդունեաց ցեղերը ներքին պատերազմներով ջնջուեցաւ, Բզնունեաց ցեղը և Աղձնեաց բգեշխին տոհմը մասնութեան և ապստամբութեան համար մեծ կոտորած կրեցին տէրութեան հրամանաւ։ Ուստի և Կոստանդ կայսր, մեծին կոստանդիանոսի որդին, թագաւորեցուց (343) Հայոց սրբոյն Տրդատայ որդին զիսորով կոտակ (փոքր) ըստ խնդրոյ Հայոց։

118. Հ. Խոսրովի ի՞նչպէս թագաւորեց։

Պ. Խոսրով, թէպէտ տկար էր մարմնով և չունէր հօրը քաջութիւնը և ազդեցութիւնը, բարեպաշտութեամբ թագաւորեց, միշտ խորհրդակից ունենալով ինքեան զսուրբն Վրդանէս, Լուսաւորչին երեց որդին, յաջորդն Արիստակեսի, որ եօթը տարի վարելով կաթողիկոսութիւնն յետ Լուսաւորչին, մեռած էր մարտիրոսական մահուամբ (340)։

119. Հ. Խոսրովայ ժամանակին երեւելի գործը ո՞րն է։

Պ. Խոսրովայ ժամանակին երեւելի գործն է յաղթութիւնն հիւսիւսականաց դէմ, որ մինչեւ վաղարշապատու դուռը եկած էին, և յաղթուելով ետ մղուեցան քաջութեամբ երկու երեւելի զօրապետաց, թագաւատայ ասպետի, և վահանայ ամատունոյ. Խոսրով շինեց զիտուին իրեն համար մայրաքաղաք և անկեց մեծ և գեղեցիկ անտառ մը, «Ճաճար մայրեաց» անուամբ

Ազատ գետին մօտ, զբօսանաց համար, և մեռաւ (352) թագաւորելով 9 տարի։

ՏԻՐԱՆ Բ. 550-561

120. Հ. Խոսրովայ ո՞վ յաջորդեց։

Պ. Խոսրովայ յաջորդեց որդին Տիրան, դարձեալ կոստանդ կայսեր օդնութեամբ։ Տիրան քանի մը երեւելի մարդիկ յանիրաւի սպամնել տուաւ, ինչպէս՝ Յուլիանոսի, ուրացող կայսեր պատկերն եկեղեցւոյ մէջ դնել չուզելուն համար զթուսիկ կաթողիկոս՝ սրբոյն Վրդանեսի որդին և յաջորդը. ծերունի եպիսկոպոսը Դանիէլ, Լուսաւորչին աշակերտը, յանդիմանելուն համար թագաւորը. և Ոշտունեաց նահապետը Զօրայ, որ չուզեց զօրօք յօդնութիւն երթալ Յուլիանոսի։

121. Հ. Ի՞նչպէս եղաւ Տիրանայ վախճանը։

Պ. Շապուհ, պարսից թագաւորը, դատով բանելով կուրացուց զՏիրան (361) որ թագաւորեց 11 տարի։

ԱՐԵԱԿ Բ. 562-582

122. Հ. Տիրանայ ո՞վ յաջորդեց։

Պ. Շապուհ շահելու համար զհայս, թագաւորեցուց զԱրշակ, Տիրանայ որդին, և արձակեց զՏիրան, որ մինչեւ իւր մահը բնակեցաւ Արարատայ կուաշ կոչուած աւանը, Արագած լերան ստորոտը։

123. Հ. Արշակ ի՞նչպէս թագաւորեց :

Պ. Արշակ քաջ էր, բայց էր յամառ և խիստ : Նախանձելով իւր եղբօրորդւոյն Գնելայ որ հիւպատոսութեան պատիւ առած էր կայսրէն և սիրելի էր նախարարաց՝ սպանել տուաւ զնա, և անոր կինը Փառանձեմ առաւ իրեն կին : Նաեւ Արշակ խեղդել տուաւ իւր կուրացեալ հայրը Տիրան : Արշակ շինեց աւան զոր կոչեց Արշակաւան, ուր ժողովեց սրիկայ մարդիկ :

124. Հ. Արշակայ այս ընթացքն ի՞նչ հետեւանք ունեցաւ :

Պ. Արշակայ այս ընթացքն անհաճոյ եղու ոչ միայն Մեծին ներսիսի որ այն ատեն կաթողիկոս էր Հայոց, այլ և նախարարաց շատերուն, որք վերջապէս պատերազմի ելան Արշակայ դէմ, և կործանեցին զԱրշակաւան : Արշակ սրբոյն ներսեսի միջնորդութեամբ ի վերին երեսս հաշտուեցաւ նախարարաց հետ, բայց յետոյ սպանեց ի նոցանէ զոմանս, որոց գլխաւորք էին կամսարականք :

125. Հ. Մեծն ներսէս ո՞վ էր :

Պ. Մեծն ներսէս էր Լուսաւոչին թուանը սրբոյ Յուսկան թոռը : Լուսաւորիչ վարեց կաթողիկոսութիւնը Տրդատայ թագաւորութեան 17օր տարիէն (303) սկսեալ 30 տարի, ապա որդին սուրբն Արիստակէս՝ 7 տարի, ապա եղբայր սորա սուրբն Վրթանէս՝ 15 տարի,

ապա որդին Վրթանայ սուրբն Յուսիկ՝ 6 տարի, ապա Փառէն ոմն՝ 4 տարի : Այս Փառենայ յաջորդն էր Մեծն ներսէս, որ վարեց կաթողիկոսութիւնը 30 տարի (363-392) :

126. Հ. Ի՞նչ կը պատմուի Մեծին ներսիսի վրայ :

Պ. Հին պատմիչք մեր Բուղանդ և Խորենացին մեծ գովութեամբ կը յիշեն զներսէս : Ներսիսի խրատով և միջնորդութեամբ քանի մը անդամ աղատեցաւ ազգը մեծ վտանգէ : Սուրբն ներսէս հաստատեց շատ օգտակար կարգեր և կանոններ զորս տեսած էր կոստանդնուպոլիս Յունաց մէջ, ուր գացած էր Հայոց և Հռոմայեցւոց մէջ հին բարեկամութիւնը հաստատելու համար, և աքսորուեցաւ անմարդի կղզի մը Արիանոս կայսրէն Վաղեսէ, և յետոյ արձակուելով եկաւ իւր երկիրը : Ներսէս Հայաստանի մէջ շատ տեղեր շինեց հիւանդանոցներ, աղքատանոցներ և ուրկանոցներ . բաղմացուց և ծաղկեցուց եկեղեցւոյ կալուածները, և վերցուց մօտաւոր աղդականաց հետ ամուսնութիւնը, և մեռելոց վրայ չափազանց կոծոյ և սպանութեան հեթանոսական սովորութիւնները : Այս մեծամեծ գործերուն համար ներսէս յիրաւի արժանացաւ Մեծ անուան :

127. Հ. Արշակ ի՞նչպէս էր դրացի աղդաց հետ և ի՞նչ վախճան ունեցաւ :

Պ. Արշակ երկդիմի քաղաքականութեամբ, այսինքն՝ մերթ Յունաց և մերթ Պարսից կողմը

բոնելով, երկուքին եւս ատելի եղաւ, և նախարարներէն լքեալ թողեալ՝ մատնեցաւ Պարսից թագաւորին Շապհոյ ձեռքը, որ շղթայակապ դրաւ զնա Անյուշ կոչուած բերդն, ուր Արշակ յուսահատութենէն եղաւ անձնասպան։

128. Հ. Ի՞նչ եղաւ թագուհին Փառանձեմ։

Պ. Արշակայ բռնուելէն ետքը՝ Փառանձեմ Շապհոյ ձեռքը չինալու համար ամրացաւ Արտագերից բերդը, բայց հուսկ յետոյ մատնուելով Պարսից, հանուեցաւ ի ցից, և Շապհոյ զօրքը մեծամեծ աւերումներ ըրին Հայաստանի մէջ, իրենց առաջնորդ ունենալով քանի մը ուրացեալ իշխաններ, որոց գլխաւորն էր Մերուժան արծրունի։

129. Հ. Յետ մահուան Արշակայ Հայրինչ եղան։

Պ. Յետ մահուան Արշակայ Պարսից թագաւորը Շապուհ բազմութեամբ զօրաց դրկեց զՄերուժան ի Հայս որ շատ չարիք հասուց Հայոց։ Նախարարաց կիները բանտարկեց բերդերու մէջ կամ սպաննեց չարաշար մահուամբ վրէժ խնդրելու համար անոնց այրերէն որ փախած էին Յունաց երկիրը, եպիսկոպոսներ և քահանայներ բռնելով զրկեց Պարսկաստան, այրեց քրիստոնէութեան վերաբերեալ շատ յունարէն գրեան։ քանզի այն ատեն գեռ հայերէն գիրը գտնուած չէր, և յունարէն գիրը կը դորձած էին. միով բանիւ Մերուժան ջանաց բոլոր զօրդութեամբ բառնաւ քրիստոնէութիւնն ի Հայոց։

Պ.Ա.Պ. 585-592

130. Հ. Այս չարեաց ի՞նչպէս վախճան տրուեցաւ։

Պ. Թէոդոս կայսր ի խնդրոյ սրբոյն Ներսիսի թագաւորեցուց Հայոց զՊատ, Արշակայ որդին, որ Յունաց օգնութեամբ վանեց Պարսկեները, բայց չարաշար թագաւորելով ատելի եղաւ աղքին, և իւր մոլութիւններուն համար յանդիմանուելով ի Սրբոյն Ներսիսէ թունաւորեց զնա. հուսկ յետոյ խորհելով ապստամբել ի Յունաց՝ բռնուեցաւ հրամանաւ կայսեր և սպանուեցաւ, յետ թագաւորելոյ և տարի։

Պ.Ա.Բ.Զ.Դ.Ա.Տ. 592-595

131. Հ. Պապայ ո՞վ յաջորդեց։

Պ. Թէոդոս կայսր թագաւորեցուց Հայոց վարազդատ անուն քաջ և հզօր երիտասարդ մը Արշակունի ցեղէն։ Այս Վարազդատ Հռոմայեցւոց պատերազմներուն և Յունաց խաղերուն մէջ անլուր քաջութիւններ գործած էր։

132. Հ. Ի՞նչ մասնաւոր քաջութիւններ կը պատմուին Վարազդատայ։

Պ. Խորենացին ուժոյ և քաջութեան կողմանէ հաւասար կը դնէ զՎարազդատ Տրդատայ։ Անդամ մը պատերազմի մէջ հինգ ախոյեան միանդամայն զարկաւ սպաննեց սրով, ուրիշ անդամ բերդի մը վրայ յարձակելով ԱՇ հոգի նետահար թափեց պարսպէն վար, և երբ թագա-

135. Հ. Պարսից բաժնին վրայ ով դրուեցաւ թագաւոր:

Պ. Պարսիկը ի սկզբան թագաւոր չդրին իրենց բաժնին վրայ, յետոյ շահելու համար զհայս, թագաւորեցուցին Խոսրով անուն Արշակունի մը: Այս Խոսրովու կուսակից նախարարներէն ոմանք յափշտակելով Արշակայ դանձը տարին առ Խոսրով: Այս պատճառաւ խոսկութիւն ինկաւ ի մէջ երկու թագաւորաց, Արշակայ և Խոսրովու, պատերազմ եղաւ, և Արշակյաղթուելով մեռաւ յետ սակաւուց: Այնուհետեւ Յոյնք Հայ թագաւոր չդրին իրենց բաժնին վրայ, և այսպէս ըստ մասին վերցաւ Արշակունեաց թագաւորութիւնը: Արշակ բոլոր Հայոց պարի, և կիսուն վրայ՝ երկու և կէս տարի միայն:

ՎՐԱՄՇԱՊՈՒՀ. 402-424.

136. Հ. Պարսից բաժնին ի նչ եղաւ:

Պ. Խոսրով Յ տարի թագաւորելէն ետքը թշնամացաւ Պարսից հետ, և այն ատենուան Պարսից թագաւորն Արտաշեր հանելով զնա թագաւորութենէ՝ փոխանակ նորա թագաւորեցուց զվուամշապուհ, Խոսրովայ եղբայրը:

137. Հ. Վռամշապուհ ի նչպէս թագաւորեց:

Պ. Վռամշապուհ թագաւորեց մեծ իմաստութեամբ, և էր սիրով ոչ միայն նախարարաց

ւորելով կու դար ի Հայս, հանդիպեցաւ աւազակներու, որք ստիպուելով փախչել անցան եփրատ գետին կամրջէն, և քակեցին կամուրջը, իսկ Վարազդատ իբր 22 կանգուն ցատկելով անդին, հասաւ նոցա, որ զարհուրելով եղան անձնատուր:

133. Հ. Ի՞նչպէս եղաւ Վարազդատայ վախճանը:
Պ. Վարազդատ թագաւորելէն ետքը չուզելով հնազանդել Հռոմայեցուց, Թէոդոս կայսեր հրամանաւ ընկեցաւ թագաւորութենէն և աքսորեցաւ հեռաւոր կղզի մը:

ԱՐԵԱԿ Գ. 595-401

134. Հ. Յետ Վարազդատայ ով եղաւ թագաւոր Հայոց:

Պ. Յետ Վարազդատայ, Թէոդոս թագաւորեցուց Հայոց Պապայ երկու որդիքն, Արշակ և Վաղարշակ: Վաղարշակ մեռաւ նոյն տարին և թագաւորութիւնը մնաց Արշակայ միայն: Այս Արշակայ ժամանակ Թէոդոս կայսեր յաջորդն Արկադ և Պարսից թագաւորը Շապուհ միաբանելով բաժնեցին Հայաստան իրենց մէջ (397): Արեւելեան մասն Արարատեան նահանգով առին Պարսիկը, արեւմտեան փոքրագոյն մասն ինկաւ բաժնին Յունաց: Արշակ չուզելով հպատակել կրակապաշտ Պարսից, ընտրեց Յունաց բաժնին վրայ միայն թագաւորել, և թողուց արեւելեան մասը որ մեծագոյնն էր:

և սրբոյն Սահակայ հետ, որ այն առեն կաթողիկոս էր Հայոց, այլ և Պարսից հետ որ մեծապէս կը յարգէին զնա:

138. Հ. Վառամշապհոյ ժամանակ ի՞նչպէս էին Հայք և ի՞նչ երեւելի գործ կատարուեցաւ:

Պ. Վառամշապհոյ ժամանակ խաղաղութիւն և հանդարտութիւն վայելեցին Հայք: Սուրբն Մեսրոպ խորհրդով և օգնականութեամբ Մեծին Սահակայ մեծ աշխատութեամբ հնարեց (405-408) Հայերէն այբուբենին գիրերը որ յանուն նորա կոչուեցան Մեսրոպեան նշանադիրք: Խորյն գպրոցներ հաստատուեցան ամէն տեղ, սուրբքն Սահակ և Մեսրոպ իրենց գլխաւոր՝ աշակերտներով որ էին Եղնիկ, Դեւոնդ, Արձան, Կորիւն, Յովհան և Յովսէփ, Թարդմանեցին յստակ հայերէն հին և նոր կտակարաններն Յունարէնէ ի Հայ:

139. Հ. Թարդմանչաց գործերէն ի՞նչ գիրք կամ գրուած ունինք:

Պ. Թարդմանչաց գործերէն ունինք բաց ի հին և նոր կտակարանաց թարդմանութենէն, Ագաթանգեղոսի, Բուզանդայ և Կորեան պատմութիւններն, Եղնկայ գիրքը, և հին Յոյն և Ասորի հարց, Եւսեբեայ, Բարազի, Կիւրզի, Ոսկերեանի, Սեբերիանոսի, Եւազրի, Յակոբայ Մծբնացւոյ, Եփեմայ և այլոց բազմաց գործերէն մեծ մասին թարդմանութիւնները:

140. Հ. Յառաջ քան զՍահակ և զՄեսրոպ

Հայք ի՞նչ գիր կը գործածէին:

Պ. Յառաջ քան զՍահակ և զՄեսրոպ կ'երեւիթէ հնարուած էր, այլ թէ երբ, յայտնի չէ, աեսակ մը գիր, բայց անգործածելի մնացած էր: Տէրութեան, և Հայոց գարձէն ետքն ի քրիստոնէութիւն, նաեւ եկեղեցական լեզուն մինչեւ Մեսրոպ, էր յունարէն կամ ասորերէն, կառավարութիւնը կը գործածէր նաեւ Պարսից լեզուն: Ումանք կը կարծեն թէ նաեւ հայերէն կը գրուէր այս ազգերուն գիրերով:

141. Հ. Բնիկ հայ լեզուաւ ի՞նչ հին մնացորդներ ունինք:

Պ. Խորենացւոյն մէջ միայն և ուրիշ քանի մը տեղ կը գտնուին այն ժամանակին Հայոց վիպասանաց երգերէն մնացորդք, որ մինչեւ Խորենացւոյն ժամանակ կային և կ'երգուէին բանգուամբ, որ աեսակ մը հին նուագարան էր:

142. Հ. Սուրբն Սահակ և Մեսրոպ ուրիշ ի՞նչ երեւելի գործ ըրին:

Պ. Սուրբն Մեսրոպ մեծին Սահակայ հրամանաւ առաքելաբար շրջեցաւ Հայաստանի հեռաւոր նահանգները, մանաւանդ վրաց և Աղուանից երկիրը, անոնց լեզուին գիր հնարեց, հին և նոր կտակարանները թարդմաններ տուաւ այն լեզուներուն, և իւր աշակերտներէն բարեպաշտ և կրօնագէտ մարդիկ կարգեց այլ և այլ աեղեր առաջնորդ և քարոզիչ, և այսպէս եղաւ արդարեւ երկլորդ Լուսաւորիչ ազգին:

143. Հ. Վուամշապուհ որչափ ատեն թագաւորեց և ով յաջորդեց անոր:

Պ. Վուամշապուհ 21 տարի թագաւորելով մեռաւ (424). այն ժամանակի Պարսից թագաւորն Յաղկերտ նորէն թագաւորեցուց զիսոսրով որ տարի մը միայն ապրեցաւ:

144. Հ. Յետ Խոսրովու ի՞նչ եղաւ:

Պ. Յետ Խոսրովու Յաղկերտ չուղելով Հայ թագաւոր դնել, զրկեց ի Հայս իւր որդին Շապուհ, որ իրը չորս տարի (425-428) անարդաբար թագաւորեց Հայոց:

145. Հ. Ի՞նչպէս կը վարուէին նախարարք Շապհոյ հետ:

Պ. Նախարարք կը վարուէին Շապհոյ հետ արհամարհանօք: Կը պատմուի թէ անդամ մը Աստոմ Մոկացի նախարարը ցիո որաալու ելաւ Շապհոյ հետ խորտարորտ տեղեր, և տեսնելով որ Շապուհ չէր կընար վարել ձին, ըստ ծաղրելով. «Գնա, գնա, աստուածորդիդ Պարսից, եթէ այր ես:» «Դուն դնա,» ըստ Շապուհ, «ի քարինս դիւաց է շահատակել:» Ուրիշ անդամ մը երբ կինճ կ'որսային շամբերու մէջ հրով, բոցը պատեց զնապուհ, որ սկսաւ վախնալ: Աստոմ ըստ դարձեալ ծաղրելով, «Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո և աստուած (aster), ընդէր զանդիտես:» «Կատակը թող և անցիր յառաջ,» ըստ Շապուհ, «որ և ես ետեւէդ գամ

(*) Պարսիկները կրակը կը պաշտէին:

քանզի ձիս կը խրտչի:» Անատեն ըստ Աստոմ ցնապուհ քամակելով զնա. «Եթէ դուն զՄոկացիս դիւազդի կ'անուանես, ես զՄասանեանսդ կը կոչեմ կնամարդիս:» Զայս ըսելով անցաւ գնաց Աստոմ իւր երկիրը:

146. Հ. Շապուհ ի՞նչ եղաւ:

Պ. Շապուհ լսելով իւր հօրը Յաղկերտի հիւանդութիւնը, գնաց Պարսկաստան, և հօրը մահուանէն ետքն սպանուեցաւ: Հայք ապստամբելով վանեցին Պարսից զօրքը և իրու երեք տարի մնացին յանիշխանութեան:

147. Հ. Այս երեք տարիէն ետքը ի՞նչ եղաւ:

Պ. Յաղկերտի յաջորդը Վուամ, Հայերը շահելու համար թագաւորեցուց իւր բաժնին վրայ Վուամշապհոյ որդին Արտաշէս որ էր ուժեւտանամեայ պատանի, և կոչուեցաւ պարսիկ անուամբ Արտաշէր:

ԱՐՏԱՇԻՐ. 428-435

148. Հ. Արտաշէր ի՞նչ եղաւ:

Պ. Արտաշէր իւր մոլութիւններուն համար ատելի եղաւ նախարարաց, և ն տարի թագաւորելէն ետքը ինկաւ աթոռէն հրամանաւ Վուամայ, և այսպէս իսպառ վերցաւ Արշակունեաց թագաւորութիւնը (433): Վուամ նաեւ զսուրբն Սահակ ընկեց կաթողիկոսութենէն:

149. Հ. Առողք Սահակ ով էր, քաներորդ կաթողիկոս էր յետ Լուսաւորչին, և որչափ ատեն

վարեց կաթողիկոսութիւնը :

Պ. Սուրբն Սահակ էր որդի Մեծին Ներսիսի, և իններորդ կաթողիկոս յետ Սրբոյն Գրիգորի, Մեծին Ներսիսի մահուանէն ետքը (392) ընտրեցաւ կաթողիկոս Շահակ ոմն որ նստաւ և տարի, ապա Զաւէն՝ նոյնպէս և տարի, ապա Ասպուրակէս՝ Յ տարի : Ասպուրակէսի յաջորդեց Մեծն Սահակ որ վարեց կաթողիկոսութիւնը Յ տարի :

150. Հ. Մեծին Սահակայ ձեռօք Հայք ի՞նչ մեծ եկեղեցական արտօնութիւն ստացան :

Պ. Լուսաւորչին ժամանակէն ի մէջ Հայոց և Յունաց պայման կար, որ կաթողիկոսունք Հայոց պիտի առնուին ձեւնադրութիւնը կեսարիոյ եպիսկոպոսէն : Պապ թաղաւորը վերցուց այս սովորութիւնը Սահակայ ժամանակ, և Սուրբն Սահակ, իւր երեք նախորդաց պէս, առանց ձեռնադրութելու կեսարիոյ եպիսկոպոսէն, նստաւ կաթողիկոս :

151. Հ. Այս սովորութեան վերնալուն վրայ Յոյնը ի՞նչ ըրին :

Պ. Յոյնք այս պատճառաւ նեղանալով Հայոց, չուղեցին ճանչնալ Սրբոյն Սահակայ իրաւասութիւնն իրենց բաժնին Հայոց վրայ, և հայերէն գրոյն գտնուելէն ետքը չթողին նաեւ որբոյն Մեսրոպայ դպրոց բանալ այն բաժնին մէջ : Ուստի սուրբն Սահակ դիմելով առ կայսր և առ պատրիարքն եռստանդնուպոլսի, հրամանաւ նո-

ցա ճանչուեցաւ նաեւ Յունաց բաժնին մէջ : Այսպէս Հայոց եկեղեցին եղաւ ազգային անկախ եկեղեցի, առանց այլ եւս կախում ունենալու կեսարիոյ թեմէն :

ՊԱՐԱՊ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱԾ ՄԻԳՉԵԿ

Ի ԲԱԴՐԱՑՈՒՆԻՍ , 455-885

152. Հ. Արշակունեաց թաղաւորութիւնը վերնալէն ետքը Յունաց բաժնին մէջ ի՞նչպէս սկսաւ կառավարութիւն այն բաժինը :

Պ. Թէոդոս Բ. կամ յաջորդ նորա այն բաժնին կառավարութիւնն յանձնեց «կոմս» կոչուած զինուորական իշխանաց, բայց Հայ նախարարք իրենց երկիրներուն մէջ մնացին ինքնօրէն, թէպէտ հպատակ էին կայսեր, և ի նշան հպատակութեան ինքնակամ տուրք կամ ընծայ կուտային կայսեր : Թէոդոս Բ. Հայոց և իւր զօրաց ապահովութեան համար շինեց թէոդուպոլիս, ըստ Հայոց՝ Կարին :

153. Հ. Նախարարաց իշխանութիւնն ի՞նչպէս էր Յունաց բաժնին մէջ :

Պ. Նախարարաց իշխանութիւնն այն բաժնին մէջ ի սկզբան ժառանգական էր ըստ հին սովորութեան : Զենոն կայսր (478) ապստամբութեան մը պատճառաւ փոխեց այս սովորութիւնը, և այնուհետեւ ոչ թէ նախարարաց ժառանգները լինէին յաջորդ իշխանութեան, այլ այնք զորս կայսրը կընտրէր :

154. Հ. Ռւրիշ ի՞նչ կարգադրութիւններ եղան Յունաց բաժնին մէջ:

Պ. Յուստինիանոս Ա. (333), և ապա Մօրիկ կայսր (384), նոր քաղաքական բաժանումներ և կարգեր հաստատեցին, այլ և այլ քաղաքներ շինեցին, կամ նորոգեցին իրենց բաժնին ամրութեան և ապահովութեան համար, և ընդհանրապէս Հայ իշխաններու կը յանձնէին այն բաժնին վերակացութիւնը: Այսպէս կը յիշուի Տաճատ, Շմաւոն և Համազասպ, վերակացուք կամ իշխանք (դուքս) Յունաց բաժնին կամ անոր մի մասին Յուստինիանոսի ժամանակ, և Մուշեղ՝ Մօրիկ կայսեր ժամանակ:

155. Հ. Յունաց բաժնին Հայք էին յանդորրու:

Պ. Յունաց բաժնին Հայք ընդհանրապէս էին յանդորրու այլակրօն ազգաց հարստահարութիւններէն մինչեւ Սելցուկեանց արշաւանքը, մինչդեռ Յուղանդեան կայսրութիւնը դեռ զօրաւոր էր. բայց գառն հալածում և նախատինք կը կրէին Յոյներէն կրօնական կամ եկեղեցական խորութեանց համար:

156. Հ. Ի՞նչ բաներու մէջ կը տարբերէր Հայոց եկեղեցին յունականէն:

Պ. Հայոց եկեղեցին կը տարբերէր յունականէն, նախ՝ քանի մը արարողութեանց կողմանէ, և երկրորդ՝ վասն զի Հայք չճանչցան Քաղկեդոնի ժողովը:

157. Հ. Արարողութեանց կողմանէ Հայոց տարբերութիւնն ի՞նչ էր Յոյներէն:

Պ. Արարողութեանց կողմանէ Հայոց գըլ խաւոր տարբերութիւնն Յոյներէն էր հաղորդութեան հայն անխմնոր ընել, բաժակին մէջ ջուր շմառնել, Սուրբ Աստուածը խաչեցարիւ երգել, գեկտեմբերի 25 ին ուրոյն Ծննդեան տօն չկատարել և ասոնց նման բաներ:

158. Հ. Քաղկեդոնի ժողովին վէճն ի՞նչ էր:

Պ. Քրիստոնէութեան նախնի դարերուն մէջ հարիւրաւոր եպիսկոպոսունք այլ և այլ երկիրներէ գալով ժողովով կորոշէին եկեղեցական կամ կրօնական ծանր խնդիրներ: Այսպիսի ժողովներ կը կոչուէին Տիեզերական ժողով: 325ին եղաւ Նիկիա այսպիսի Տիեզերական ժողով մը, ուր աւաջիկայ գտնուեցաւ ի Հայոց Լուսաւորչի որդին Սուրբ Արիստոկէս: Երկրորդ Տիեզերական ժողովն եղաւ Կոստանդնուպոլիս 380 ին, և երրորդ՝ Եփեսոս 431 ին: 451 ին ուրիշ ժողով մը եղաւ Քաղկեդոն: Հայք որ առաջին երեք ժողովները կը ճանչնային իրերւ տիեզերական, այսինքն բոլոր քրիստոնէական եկեղեցին ներկայացնող ժողով, Քաղկեդոնինը չի ճանչցան այլ եւ այլ պատճառներու համար:

159. Հ. Յոյնք ի՞նչ կը պահանջէին ի Հայոց:

Պ. Յոյնք կը պահանջէին ի Հայոց իրենց ծէսերը փոխել ըստ ծխից Յոյն եկեղեցւոյն, և Դնդունել Քաղկեդոնի ժողովն իրու Տիեզերական

ժողով։ Այս խնդրոց համար մեծամեծ խռովութիւններ եղան երկու ազգաց մէջ, և շատ անգամ ժողովներ ըրին Հայք թէ առանձին և թէ Յունաց հետ, բայց չկրցան միաբանել։ Այս խընդիրներուն համար Յոյնք կը հալածէին և իր հերձուածող կը նախատէին դՀայս։

160. Հ. Սրշակունեաց թագաւորութեան վերնալէն ետքը ի՞նչպէս կառավարուեցաւ Պարսից բաժինը։

* Պ. Սրշակունեաց թագաւորութեան վերնալէն ետքը Պարսիկը սկսան կառավարել իրենց բաժինը մարզպաններով, այսինքն՝ կուսականերով։ բայց Հայ նախարարք իրենց երկիրներուն մէջ կը վարէին տեսակ մը ինքնօրինութիւն, և ունէին առանձին զօրք։

161. Հ. Պարսիկը դովի դրին մարզպան Հայոց վրայ։

Պ. Յաղկերտ զրկեց ի Հայս վեհմիհրշապուհ անուն մարզպան մը որ խաղաղութեամբ վարեց իշխանութիւնը, Յետ նորա մարզպանութիւնը յանձնուեցաւ Սիւնեաց իշխանին Վասակայ։

162. Հ. Այս վիճակը որչափ ատեն տեւեց։

Պ. Այս վիճակը չտեւեց ընդ երկար, քանզի Յաղկերտ Բ. Պարսից թագաւորը, Յունաց դէմ յաղթութիւններէն մեծամտելով, դրգութեամբ իւր առաջին պաշտօնէին Միջըներսէհէ հրաման ըրաւ Հայոց, Վրաց և Աղուանից թողու քրիստոնէութիւնը։

163. Հ. Ի՞նչպէս եկաւ այս հրամանը։

Պ. Յաղկերտ դրեց երկայն նամակ մը ուր կը պարսաւէր քրիստոնէից հաւատպն իրեւ սուտ, և կը դովէր Պարսիցն իրրեւ ծշմարիտ, և կը սափէր զՀայս ընդունել զայն։

164. Հ. Ի՞նչ էր Պարսից կրօնքը։

Պ. Պարսից կրօնքին գլխաւոր վարդապետութիւնն էր երկրպագել արեդական և կրակի իրեւ Աստոծոյ։

165. Հ. Հայք ի՞նչ ըրին այն նամակն ընդունելով։

Պ. Խակոյն եկեղեցական և աշխարհական մեծերէ բաղկացեալ ընդհանուր ժողով դումարելով հերքեցին Յաղկերտի նամակը դրով, և իմացուցին թէ, թէպէտ պատրաստ էին ծառայել թագաւորին և անոր հրամաններուն հնագանդիւ, չէին կրնար սակայն ծշմարիտ Աստուածը թողլով արեւ և կրակ պաշտել։

166. Հ. Յաղկերտ ի՞նչ ըրաւ Հայոց։

Պ. Յաղկերտ բարկանալով, Պարսկաստան կոչեց (450) Հայ նախարարաց երեւելիները, որ շատ ընդդիմանալին ետքը, վախնալով թագաւորին սպառնալիքէն, առ երեսս ընդունեցան հրամանը մեծամեծ պարզեւներով և մողերու բաղմութեամբ դարձան Հայաստան։

167. Հ. Ա՞վ էին մողերը։

Պ. Մող կը կոչուէին Պարսից կրօնքին վարդապետները։

168. Հ. Յաղկերտ ինչո՞ւ համար մոդեր զբկեց Հայաստան։

Պ. Մոգերուն զրկուելուն նորառակն էր բոլոր Հայաստանի մէջ ցրուելով առվեցանել Հայոց Պարսից կրօնքը, եկեղեցիները կործանել և անոնց տեղ կրակատուններ շինել։

169. Հ. Յաջողեցա՞ւ Յաղկերտի այս խորհուրդը։

Պ. Ոչ, Հայք քաջալերուելով իրենց եկեղեցականներէն որոց գլխաւորն էր Սուրբն Ղեւոնդ երէց, վանտեցին մոդերը, և միաբանեցան զինուք դէմ դնել, եթէ Յաղկերտ բռնի ստիպէր զնոսա ուրանալ քրիստոնէութիւնը։

170. Հ. Հայոց այս ընդդիմութիւնը լսելով ի՞նչ ըրաւ Յաղկերտ։

Պ. Բարկանալով զօրք զբկեց Հայոց վրայ բռնի ստիպել ազդը յուրացութիւն։

171. Հ. Հայք ի՞նչ ըրին։

Պ. Հայք առաջնորդութեամբ Մամիկոնեանց նախարարին Մեծին Վարդանայ որ սպարապետ էր Հայոց, պատրաստուեցան դէմ դնել պատերազմաւ։

172. Հ. Հայոց այս ընդդիմութիւնն սպասամբութի՞ւն էր։

Պ. Ոչ, Հայք հաւատարիմ հպատակ էին Պարսից, կենօք և մահու պատրաստ էին ծառայել աերութեան. Հայոց ընդդիմութիւնն էր իրենց կրօնքին դէմ եղած բռնութեան համար։

173. Հ. Բոլոր Հայք միաբան էին յայսմ։

Պ. Ոչ, Վասակ Սիւնեաց իշխանը որ մարզպան էր, նախարարներէն զոմանս իւր կողմը շահելով միաբանեցաւ Պարսից հետ և մեծ վնաս տուաւ Հայոց։ Բայց Մեծն Վարդան և բոլոր ուխտազահ նախարարք ժողովեցան Սրտազուկամ Աւարայրի դաշտն ի պատերազմ Պարսից դէմ որոց հետ էին Վասակեանք։

174. Հ. Ի՞նչ եղաւ այս պատերազմին վախճանը։

Պ. Վարդանեանք վեհ քաջութեամբ կըռուեցան թշնամոյն դէմ որ շատ աւելի էր թըռով քան զնոսա. բայց որովհետեւ Վարդանուրիշ երեւելի նախարարներով ինկաւ պատերազմին մէջ, զօրքը ցրուեցան և ապաւինեցան ամուր տեղեր։ Այս է Վարդանանց պատերազմը որ եղաւ 451 ին և որոյ յիշատակը կը տօնէ տարուէ տարի Հայաստանեայց Ս. Եկեղեցին։ Հայոց կողմէն անկելոց թիւն էր 1035 որոց 9 ը երեւելի նախարարներ էին։ Քան զետապատիկն աւելի էր Պարսից կողմէն ինկողներուն թիւը։

175. Հ. Այս պատերազմին ետքը Պարսիկներն ի՞նչ ըրին։

Պ. Յաղկերտ՝ Ատրորմիղդ անուն զոմն զբրկեց մարզպան Հայոց փոխանակ Վասակայ։ Ատրորմիղդ պատուէր առած էր թագաւորէն սիրով վարուիլ Հայոց հետ, բայց Հայոց կղերէն քանի մը երեւելիներ, որոց գլխաւորներն էին Յովսեփ կաթողիկոս՝ մեծին Սահակայ յաջորդը, 5

Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց, որ քաջ պարսկերէն գիտէր, և սուրբն Ղեւոնդ երէց շղթայկապ զրկուեցան Պարսկաստան։

176. Հ. Նախարարք ի՞նչ ըրփն։

Պ. Նախարարք տեսնելով զՅազկերտ մեղմացեալ իւր առաջին խստութենէն, գային խնդրել նոր և հաստատուն վարչութիւն աղջին համար, գնաց նաև Վասակ յուսալով մեծ պատիւներ ընդունել թագաւորէն ի վարձ իւր հաւատարիմ ծառայութեան, բայց իրբե չարագործ դատապարտուելով, մեռաւ չարաչար ի բանտի։

177. Հ. Յազկերտ ի՞նչ ըրաւ նախարարաց։

Պ. Յազկերտ հակառակ իւր խոստման չվնասել նոցա, շղթայակապ զրկեց զնոսա կապեալ քահանայից հետ հեռաւոր քաղաք մը, ուր Յովեկի կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս և Ղեւոնդ երէց, ուրիշ քանի մը քահանայիւք և սարկաւոք մեռան մարտիրոսական մահուամբ։ Այս են Ղեւոնդեանք որոց կատարումը եղաւ 454 ին, և զորոց յիշատակը կը տօնէ Հայաստանեաց եկեղեցին։ Իսկ նախարարք քանի մը տարի Պարսկաստան մնալէն ետքը, Յազկերտի յաջորդին Պերողի ժամանակ արձակուեցան (464) և եկան իրենց երկիրը։

178. Հ. Հայք ուրիշ ի՞նչ կրօնական պատերազմ ունեցան։

Պ. Թէպէտ Ատրումիղի և յաջորդ նորա

Ատրիշնասալ մարզպանք (452-481) քաղցրութեամբ կը վարուէին և հալածումը դադրած էր, բայց կրակապաշտութեան ազգեցութիւնը կը զօրանար։ Զայր տեսնելով Հայոց նախարարներէն ոմանք, խորհեցան վոնտել Պարսիկներն Հայաստանէ, և ընտրելով Վարդանայ եղբօրորդին զՎահակ Բ. Բագրատունի՝ մարզպան, սկսան պատերազմը, խորհրդակից և օդնական ունենալով ինքեանց զՅովիչան մանդակունի, որ այն ատեն կաթողիկոս էր Հայոց։

179. Հ. Այս պատերազմն ի՞նչպէս յառաջ գնաց։

Պ. Հայոց նախարարաց վորք մասը սակաւ զօրօք իրեւ հինգ տարի (481-485) մեծամեծ նեղութեանց և դժուարութեանց համբերելով, դէմ դրին հինգ Պարսիկ զօրապետաց, սպաննելով անոնցմէ զոմանս, թէպէտ Հայ նախարարներէն եւս քանի մը երեւելիներ մեռան, ինչպէս Սահակ բագրատունի, այն որոյ իննդրով գրեց Խորենացին իւր պատմութիւնը։ Այս եղտերկորդ կրօնական պատերազմն Հայոց։

180. Հ. Ի՞նչ վախճան ունեցաւ այս պատերազմը։

Պ. Հայոց այս պատերազմին վերջին տարին Պարաից վրայ թագաւորեց Պերողի եղբայրը Վաղարշ, որ ուղելով իւր բոլոր տէրութեան մէջ գաղթեցունել խոռվութիւնները» Հայերը հաշ-

տեցուց՝ անոնց խնդիրները կատարելով, և մարդպան կարգեց Հայոց Անդիկան անուն Պարսիկ Եշխան մը. բայց քիչ ետքը նոյն Անդիկանայ միջնորդութեամբ մարզպանութիւնը աղուեցաւ Վահանայ ի մեծ ուրախութիւն Հայոց:

181. Հ. Հայաստանի խաղաղութիւնը ո՞րչափ տեւեց:

Պ. Իբր ութ տարի ետքը Պարսից թագաւորը կաւաստ նորէն փորձեց Պարսից կրօնքին դարձունել Հայերը, բայց Վահան ընդդիմացաւ պատերազմաւ և վանեց Պարսիկները: Այս եղաւ երրորդ կրօնական պատերազմ Հայոց:

182. Հ. Վահան ո՞րչափ ատեն վարեց մարզպանութիւնը և ո՞վ ունեցաւ յաջորդ:

Պ. Վահան իբր 23 տարի վարելով մարզպանութիւնը մեռաւ (510): Վահանայ յաջորդեց Հրամանաւ կաւաստայ եղբայր նորա Վարդ (510-514), ապա Մժէժ Գնունի որ վանեց Հայոց վրայ յարձակող Հաները, որ կովկասու կողմերը բնակող բարբարոս աղքերէն էին, և իբր 30 տարի վարեց մարզպանութիւնը (514-514): Մժէժի յաջորդեցին քանի մը Պարսիկ մարզպաններ, որոց վերջինն էր Սուրէն (552-564):

183. Հ. Սուրէնի ժամանակ ի՞նչ պատահեցաւ:

Պ. Հալածումը նորոգուեցաւ, եւ Հայք ապաստամելով առաջնորդութեամբ Վարդանայ Բ. ի Մամիկոննի, եղբօրբդւոյն Վահանայ, ի

սկզբան յաջողեցան: Սուրէն սպանուեցաւ, և Հայք անձնատուր եղան կայսեր: Այս եղաւ Հայոց չորրորդ և վերջին կրօնական պատերազմը: Բայց կաւաստայ յաջորդը Խոսրով Ա. նորէն նուածեց իւր բաժինը, և դրուեցաւ Պարսիկ մարզպան Ճիհը Վազն Միհրան (578):

184. Հ. Այնուհետեւ Հայ մարզպան չունեցան Հայք:

Պ. Այնուհետեւ մինչեւ Պարսից տէրութեան կործանումը (632) դրուեցան Հայ մարզպաններ, Սմբատ բագրատունի բազմայալթ (593-600): Դաւիթ սահառունի (604-625) և Սմբատայ որդին Վարագալիոց (625-632):

185. Հ. Յետ Մեծին Սահակայ մինչեւ Պարսից տէրութեան կործանումը քանի կաթողիկոսունք նստան Հայոց, և ոյք են երեւելիները:

Պ. Յետ Մեծին Սահակայ մինչեւ Պարսից տէրութեան կործանումը (440-632) նստան իբր 22 կաթողիկոսք, յորս երեւելիք են՝ սուրբն Մեսրոպ իբր տեղապահ (440), վեց ամիս միայն. Յովսէփ որ նահաստակեցաւ ի Պարսս (444-454). Գիւտ (455-476). Յովհանն մանդակունի (480-487). Բարկէն (487-492) առ որով սկսաւ Քաղկեդոնի ժողովին վէճը. Ներսէս աշտարակեցի (524-533). Մովսէս Բ. (554-594) որ տոմարը նորդեց և հաստատեց Հայոց թուականը (554). Աբրահամ Ա. (594-617) առ որով բաժնուեցաւ Վրաց եկեղեցին ի Հայոց Քաղկեդոնի իննորոյն

պատճառաւ . Կոմիտաս կաթողիկոս (617-625) որ նորէն շինեց վազարշապատու մայր եկեղեցին (Եջմիածին) և Հոփիսիմեանց վկայարանը . Եղբ կաթողիկոս (628-639) որ չանաց ընդունել տալ Հայոց Քաղկեդոնի ժողովը :

186. Հ . Թարգմանիչներէն ետքը մինչեւ Պարսից տէրութեան կործանումը Հայոց մէջ ի՞նչ հեղինակներ ելան :

Պ . Թարգմանիչներէն ետքը մինչեւ Պարսից տէրութեան կործանումը , յետ կիսոյ Ե . դարուն , յիշուելու արժանի են՝ Մովլէսի Խորենացւոյ , Եղիշէի Փարպեցւոյն պատմութիւնները , քանի մը գիտնական գրուածներ , լնչպէս Դաւթի անյաղթի վիլխոփայութիւնը խրթին հեղենաբանութեամբ և Խորենացւոյն աշխարհագրութիւնը : Կան նաեւ քանի մը կրօնական գըրուածներ , այսինքն՝ մեկնութիւնք , ճառք և ազօթք յանուն Յովհաննու Մանդակունեոյ , Եղիշէի . Խորենացւոյն , Մամբրէի և Դաւթի անյաղթի . այս ժամանակի թարգմանութիւնք կ'երեւին Փիլին և Աղեքսանդրի պատմութիւնը :

187. Հ . Պարսից տէրութիւնը ի՞նչպէս և Ե՞րբ չնշուեցաւ , և ո՞ր տէրութեան անցաւ Հայաստանի այն մասն որ Պարսից էր :

Պ . Պարսից տէրութիւնը չնշեցին Սրաբացիք 632 ին , և Հայաստանի այն մասն որ Պարսից էր՝ անցաւ Յունաց . Յոյնք գունդ մը զօրք կը պահէին հոն , բայց Հայ իշխան մը կը դրուէր Պատ-

րիկ կամ կիւրապաղատ անուամբ , և ուրիշ Հայ իշխան մը , կամ նոյն ինքն Պատրիկը , կը վարէր Հայ զօրաց սպարապետութիւնը :

X 188. Հ . Պարսից տէրութեան չնշուելէն ետքը , Յունաց կողմէն գրուած Պաարիկները կամ կիւրապաղատները կրնա՞ս յիշել :

Պ . Պարսից տէրութեան չնշուելէն , այն է 632 էն ետքը Յունաց կողմէն Հայոց վրայ գրուած Պատրիկները կամ կիւրապաղատներն էին :

1 . Դաւիթ սահառունի երկրորդ անդամ (632-634) .

2 . Թէոդորոս ոշտունի (636-643) .

3 . Վարազտիրոց երկրորդ անդամ (644) :

4 . Ամբատ , Վարազտիրոցայ որդին (644-654) .

5 . Համազասպ Մամիկոնեան (654-659) : Այս միջոցին , այսինքն՝ 654-660 , սպարապետ էին Թէոդորոս ոշտունի , և Վարդ Պատրիկ Թէոդորոսի որդին :

189. Հ . Գո՞հ էին Հայք Յոյներէն :

Պ . Ոչ : Միշտ հալածում և նեղութիւն կը կրէին Յոյներէն կրօնական խնդրոց պատճառաւ :

190. Հ . Ո՞չափ աեւեց Յունաց իշխանութիւնը :

Պ . Յունաց իշխանութիւնը տեւեց իբր 20 տարի (633-653) :

191. Հ . 633 էն ետքը Հայք ի՞նչ եղան :

Պ . Արաբացիք արդէն 637 էն հետէ սկսած էին յարձակել Հայաստան : 640 ին առին Դուին : Հայք մէկ կողմանէ Յունաց բռնութենէն և միւս

կողմանէ Արաբացւոց յարձակումներէն նեղուելով, հպատակեցան Ամիրապետաց (653): Քանի մը տարի ետքը Մոռաւիա ամիրապետ կուսակալ դրաւ Հայոց, ըստ խնդրոյ նոցա, զԳրիգոր մամիկոնեան, Համազասպայ եղբայրը, Պատրիկ անուամբ (659-683), և Հայք հանդարտութիւն վայելեցին:

192. Հ. Ո՞րչափ տեւեց հանդարտութիւնը:

Պ. Յետ մահուան Մոռաւիա ամիրապետի (680) խովվութիւն ինկաւ Արաբացւոց մէջ և բոլոր տէրութիւնը վրդովեցաւ, ուստի և Հայաստան սկսաւ նեղութիւն կրել ասպատակներէ որ կու գային հիւսիւսէն և հարաւէն: Գրիգոր Մամիկոնեան մեռաւ ասոնց դէմ պատերազմի մէջ (683), և Յոյնք համարձակութիւն գտնելով նորէն տիրեցին Հայոց (680-693) և նորէն սկսան հալածանք և նեղութիւնք կրօնական խնդրոց համար:

193. Հ. Այս միջոցին (680- 693) ո՞վ պաշտպան կեցաւ Հայոց իբրև իշխան կամ պատրիկ:

Պ. Այս միջոցին պաշտպան կեցան Հայոց իբրև իշխան կամ պատրիկ՝ Աշոտ Բագրատունի Բիւրատեան (685-690), Ներսէն կամսարական (690-693) և Սմբատ Բիւրատեան եղբայր Աշոտոյ (695-704) իբրև սպարապետ:

194. Հ. Հայաստան մնաց Յունաց ձեռքը:

Պ. Քիչ ժամանակ ետքը (693) Արաբացիք նորէն տիրեցին Հայոց: 693 էն մինչև 742 եկան

Արաբացի ոստիկանք՝ Արդլա, Կաշմ (Գասէմ), Վիլթ (Վէլիտ), Մահմէտ և Արդլազիկ, որոց դէմ կռուեցան շատ անդամ Սմբատ Բիւրատեան և Ներսէն կամսարական ուրիշ նախարարներվ: Հայոց այս ընդդիմութիւնը զայրացուց թշնամին, և նախճուան և ուրիշ քանի մը տեղ Հայ նախարարներ և ուրիշ մարդիկ նենդութեամբ մուծուելով եկեղեցին՝ այրեցան կենդանոյն:

195. Հ. Ո՞րչափ տեւեցին այս նեղութիւնք:

Պ. 742 ին եկաւ ի Հայս Մրուան ոստիկան որ աղնուագոյն էր քան իւր նախորդները. այն ատեն երեւելի էր Հայոց մէջ Բագրատունի իշխան մը, Աշոտ վասակեան, որոյ իմաստութեան և աղնուութեան հաճելով Մրուան՝ կացուց զնա (743) Պատրիկ Հայոց « իշխանից իշխան » տիտղոսով, և անոր յանձնելով երկիրը, ինք գնաց առնուլ ամիրապետութիւնը:

196. Հ. Այս Աշոտ ով էր:

Պ. Այս Աշոտ էր բագրատունի թագաւորաց նախկին, այսինքն Բագրատունեաց առաջին թագաւորին Աշոտոյ մեծի հաւուն հաւը: Բագրատունի թագաւորաց մեզի ծանօթ ազգաբանութիւնը կը համնի մինչև այս Աշոտ:

197. Հ. Աշոտ ի՞նչ վախճան ունեցաւ:

Պ. Հայ նախարարներէն ունանք խորհեցան ապստամբել արաբացիներէն, և երբ Աշոտ վասակար համարելով այս խորհուրդը չուզեց միա-

բանել անոնց հետ, միւս իշխանք կուրացուցին զնա (758), և ապստամբելով չարաչար յաղթուեցան:

198. Հ. Աշոտէն ետքը Հայք ի՞նչ եղան:

Պ. Թէղէտ 760 էն մինչև 850 քանի մը բագրատունի իշխանք, ինչպէս Սահակ (760-766), Բագարատ (835-848) և Սմբատ սպարապետ՝ Աշոտոյ թոռնորդին, ժամանակ ժամանակ դրուեցան պատրիկ, ամիրապետք չվստահելով նոցա, կը զրկէին ոստիկաններ, յորոց ունանք շատ նեղութիւն կու տային Հայոց:

199. Հ. Այս ոստիկաններէն ո՞վ կը յիշուի:

Պ. Այս ոստիկաններէն կը յիշուին եղիս, Պէքիր՝ սպաննող Սահակայ պատրիկ, Հասան, Խուզիմա, Հոլ, Ապուսէթ որ շղթայակապ զրկեց զբագլաւատ պատրիկ (848) առ ամիրապետն իբրև յանցաւոր: Ապուսէթ սպաննուեցաւ Սասունցիներէն, բայց այս սպաննութեան վրէժը խրնդրեցաւ բոլոր ազգէն: Բուզա ոստիկան բազմութեամբ զօրաց եկաւ Հայաստան, և բոնելով տարաւ Պագտատ Հայոց և Վրաց գրեթէ բոլոր իշխանները, ընդ որս և զՍմբատ, Աշոտոյ մեծի հայրը, որ սպարապետի պատիւ ունէր, և բանտի մէջ մեռաւ Պաղտատ իբր խոստովանող:

200. Հ. Այս սոսկալի հարուածէն ետքը ի՞նչ եղաւ Հայաստան:

Պ. Հայաստանի մէջ Բուզայի բոնութենէն աղտատ մնացած էր միայն Բագրատունեաց

Երկիրը (Շիրակ և Արշարունիք) զոր կը կառավարէր պատանին Աշոտ, Սմբատայ սպարապետի որդին, որ և Սլի անուն մահմետականացեալ Հայու մը միջնորդութեամբ կարգեցաւ 859 ին այն ժամանակուան Ամիրապետէն «Իշխան իշխանաց» Հայոց, և արքա 885 ին անուանեցաւ թագաւոր ուրիշ Ամիրապետէ մը: Այսպէս կ'սկսի Հայոց պատմութեան երրորդ ժամանակը որ է ժամանակ իշխանութեան Բագրատունեաց:

201. Հ. Պարսից տէրութեան կործանելէն մինչեւ Բագրատունեաց թագաւորութիւնը, քանի կաթողիկոս նստաւ, և ոյք են երեւելիները:

Պ. Պարսից տէրութեան կործանելէն մինչեւ Բագրատունեաց թագաւորութիւնն, այն է 632 էն մինչեւ 885, նստան 21 կաթողիկոսունիք, որոց երեւելիներն են՝ 1. Ներոէս Պ. շինու (640-661), այսպէս կոչուած է շատ և մեծամեծ շինութիւններուն համար. 2. Եղիս կաթողիկոս (703-717), առ որով Աղուանից եկեղեցին փորձեց բաժնուիլ Հայոց եկեղեցին ընդ որոյ իրաւասութեամբ էր. 3. Յովսան Պ. իմաստասէր (717-728), Հայոց եկեղեցւոյն երեւելի աստուածաբաններէն մին. 4. Սին կաթողիկոս (766-775), որ երեւելի է եկեղեցական բարեկարգութեանց համար. 5. Զաքարիա Ա. (854-876), Բուզայի ժամանակ, Զաքարիա, ժամանակին նեղութեան պատճառաւ, մի օրուան մէջ ձեռնադրուեցաւ սարկաւագ, վարդապետ, եպիսկոպոս և կաթու-

զիկոս։ Այս Զաքարիա ջանաց միաբանութիւնը ընել ի մէջ Հայոց և Յունաց ընդունելով Քաղկեդոնի ժողովը. 6. Գէորգ Բ. կաթողիկոս (876-897) որ օծեց զԱշոտ Ա. Մեծ, Բագրատունեաց առաջին թագաւորը։

202. Հ. Հայոց մէջ ի՞նչ երեւելի հաստատութիւն սկսաւ կամ ծաղկեցաւ այս ժամանակին մէջ։

Պ. Այս ժամանակին մէջ, Պարսից տէրութեան կործանելէն մինչեւ Բագրատունեաց թագաւորելը (632-885), սկսան կամ ծաղկեցան Հայոց մէջ հաստատութիւնը վանորէից, այսինքն մենաստանք միանդամայն ուսումնարանք, յորս շատեր, գլխաւորապէս կղերականք, կ'առանձնանային վարել ճգնողական կեանք, կամ ուսանել եկեղեցական և աշխարհական ուսմունք։

203. Հ. Այս ժամանակին մէջ ի՞նչ գլխաւոր վանք կը յիշուին։

Պ. Այս ժամանակին մէջ ծաղկեցաւ Գլակայ վանքը որ և կը կոչուի իննակնեան կամ Ա. Կարապետի վանք ի Տարօն, որոյ առաջին հաստատութիւնն եղած էր Լուսաւորչէն։ Այս ժամանակին մէջ կը ծաղկէին նաեւ Սասուածածնի վանքն յԱրագածոտն, և Մագենոցաց ուխտ կոչուած վանքն ի Սիւնիս, որք միանդամայն անուանի ուսումնարաններ կամ կղերանոցներ էին։

204. Հ. Ի՞նչ հեղինակներ երեւեցան ի Հայս այս ժամանակին մէջ։

Պ. Այս ժամանակին մէջ, գլխաւորապէս է. և Բ. գարերուն ծաղկող հեղինակներն են, երբեւ պատմիչ՝ Յովհանն Մամիկոնեան է. գարուն, հեղինակ պատմութեան Տարօնոյ. Սերբոս է. գարուն, գրած է Հերակլ կայսեր արշաւանաց պատմութիւնը. Մովսէս Կաղանկատուացի նոյն գարուն մէջ, ունի Աղուանից պատմութիւն. և Ղեւոնդ երէց Ը. գարուն մէջ, գործ է Արաբաշւոց արշաւանաց վրայ ի Հայս։ Իրբեւ հոետոր նշանաւոր եղած կը թուի է. գարուն մէջ Մովսէս Սիւնեցի, քերթող կամ քերթողահայր անուանեալ. սորա գործ է հաւանականապէս Պիտոյից գիրքը։ Գիտնական նիւթոց վրայ գրող է Հ. գարուն մէջ Անանիա Շիրակացի որ ունի Աստեղագիտական գրուած մը «Յաղագ» երկնից։ Իրբեւ Սասուածարանական գործ յիշուելու արժանի են Յովհաննու իմաստավորի երկու ճառք աղանդաւորաց ոմանց գէմ, և Թէոդորոսի Քոթենաւորի ճառն ընդ գէմ Մայրադոմեցւոյն որ երեւելի վարդապետ էր Հայոց, հակառակորդ եղբի կաթողիկոսի։ Իրը մեկնիչ երեւելի է Գրիգոր Արշարունի, իսկ հոգեւոր երդերէ կամ տաղերէ՝ յիշուելու արժանի է Կոմիտասայ կաթողիկոսի Հոփիսիմեանց Անձինքը։

205. Հ. Ի՞նչ թարդմանութիւններ եղան այս ժամանակին մէջ։

Պ. Այս ժամանակին մէջ գլխաւոր թարդմանութիւնք են, թէպէտ հին թարդմանչաց ու-

Ճէն շատ հեռու, Սոկլատայ սկոլաստիկոսի ե-
կեղեցական պատմութիւնը՝ ձեռամբ Փիլոնի Տի-
րակացւոյ, և Դիոնեսիոսի արխապատացւոյն,
Կիւրզի և Նիսացւոյն գործերէն ոմանք՝ ի ձեռն
Ստեփանոսի սիւնեցւոյն:

ՄԱՍՆ Գ.

ԺԱՄԱՆԱԿ ԲԱԳՐԱՏՈՒԵԱՅ

885 - 1079

206. Հ. Բագրատունեաց թագաւորութեան
ընդարձակութիւնը ո՞րչափ էր:

Պ. Բագրատունեաց թագաւորութիւնը կը
պարունակէր հին Հայաստանի վոքք մասն, այ-
սինքն գրեթէ Արարատեան նահանգը միայն, ո-
րոյ երեւելի դաւառը նիրակ արդէն կը վերա-
բերէր Բագրատունեաց:

207. Հ. Բագրատունեաց բուն երկիրը ո՞րն էր,
և այս ցեղն ի՞նչպէս ստացաւ նիրակ:

Պ. Բագրատունեաց բուն կամ ժառան-
գական երկիրն էր ի վաղուց Բարձր Հայոց Սպեր
դաւառը: 783 ին Աշոտոյ Մեծի հաւն Աշոտ
կեր, Սպեր դաւառը տալով իւր եղբօր նազհոյ,
ինք գնեց նիրակ դաւառը Կամսարականներէն

որոց ժառանգութիւնն էր այն դաւառը: Այսու-
հետեւ Բագրատունիք ծաղկեցուցին նիրակ և
պահեցին զայն մինչեւ Աշոտ մեծ:

208. Հ. Հայաստանի մնացեալ մասերն որո՞ւ
ձեռք էին:

Պ. Արեւմտեան նահանգներն, ինչպէս
Բարձր Հայք, Չորրորդ Հայք և Տարուբերան,
էին Յունաց ձեռքը. Հարաւային նահանգներն,
ինչպէս Աղձնիք, Կորճայք, Պարսկահայք, արա-
բացի ոստիկանաց կամ ամիրայից ձեռք. Հիւ-
սասային նահանգները՝ Գուգարք, Արցախ, Ու-
տի, Փայտակարան, մեծաւ մասամբ Վրաց և
Աղուանից ձեռքը: Կը մնային միայն Այրարատ,
Սիւնիք և Վասպուրական: Վերջին Երկուքն էին
ժառանգութիւն Սիւնեաց և Աղձրունեաց, և
գրեթէ անկախ էին: Վասպուրական յետ սա-
կաւուց բոլորովին զատուելով եղաւ առանձին
թագաւորութիւն:

ԱՇՈՏ Ա. ՄԵԾ. 885-889

209. Հ. Բագրատունեաց առաջին թագաւորին
վրայ ի՞նչ կը պատմուի:

Պ. Բագրատունեաց առաջին թագաւորն
Աշոտ Մեծ իմաստութեամբ վարեց իւր իշխանու-
թիւնը, ինսամեցուց ինքեան Արծրունեաց և Աիւն-
եաց տուները, իւր դատերաց մին տալով Սիւն-
եաց Վասակ դափուռն իշխանին, և միւսն Արծ-
րունեաց (Վասպուրականի) Գրիգոր Դերենիկի իշ-

խանին, եղաւ սիրելի և պատկառելի բոլոր աղ-
դին: Նաև օտար իշխաններ մանաւանդ Յունաց
կայսերք, Վասիլ Ա. (867-878) և Լեւոն իմաս-
տասէր (886-941), կը յարգէին զԱշոտ: Կըսուի
թէ Աշոտ գնաց յայցելութիւն Լեւոնի: Աշոտ մե-
ռաւ 889 ին թագաւորելով 5 տարի, և յաջոր-
դեց երէց որդին Սմբատ Ա. :

ՄՏԲՈՏ Ա. 890-914

240. Հ. Սմբատայ տուաջնոյ անձին և անոր
թագաւորութեան վրայ ի՞նչ կը ատմուի:

Պ. Սմբատ էր, իբր պատերազմով, քաջ
և անվեհեր, իբրեւ թագաւոր, աղնուաբարոյ,
համբերով և անյիշաշար: Աւնէր մեծ փափաք և
փոյժ ծաղկեցունել իւր թագաւորութիւնը,
բայց ատելութիւն և նախանձ անպակաս էին՝ և
այս պատճառաւ խռովութիւնք և պատերազմունք
ներքին և արտաքին թշնամեաց երեսէն չժողու-
ցին նմա համեմել իւր փափաքանաց:

241. Հ. Սմբատայ ներքին և արտաքին թշնա-
միք ո՞վ էին:

Պ. Սմբատայ ներքին թշնամիք էին հօրեղ-
բայր նորա Աբաս զոր սպարապետ կարգած էր Ա-
շոտ, Վասպուրականի իշխաննք Աշոտ և երկու Գա-
գիկը Արծրունիք: Արտաքին թշնամիներն էին արա-
բացի ոստիկաննք Ափշին և Յուսուփի յաջորդ նորա:

242. Հ. Աբաս ի՞նչ ըլլաւ:

Պ. Աբաս ուղելով թագաւորել փոխանակ

Սմբատայ, ապատամբեցաւ, և պատերազմելով
Սմբատայ դէմ յաղթուեցաւ: Սմբատ սպարա-
պետութիւնը տուաւ իւր եղրօրը, նապհոյ:

243. Հ. Աշոտ Արծրունի ո՞վ էր և ի՞նչ ըլլաւ:
Պ. Աշոտ Արծրունի, Սմբատայ քեռոր-
դին, Աշոտոյ մեծի թոռը, Դերենիկան որդին,
էր իշխան Վասպուրականի որ Արծրունեաց ժա-
ռանգական երկիրն էր: Աշոտ Աբասէ օրինակ
առնլով ապատամբեցաւ իւր մօրեղբօրէն Սմբա-
տէ, և միաց: Սմբատայ թշնամոյն արաբացի
ոստիկանին վե անունու բայց աներ նորա Գա-
գիկ, ուրիշ անունու վի իշխան, դաւով բռնելով
զԱշոտ և անունու եղբայրները, Գագիկ և Գուրգէն՝
բանտարանց և նոր առաւ վասպուրականի իշխա-
նութիւնը:

244. Աստ կան անունն այն ատեն որո՞ց կը
արու:

Պ. Ոս ոփկան անունը կը տրուէր այն ատեն
աահմանակից երկիրներու արաբացի կու-
նուներուն, որք թէպէտ Ամիրապետներու
էն կը դրուէին, բայց դրեթէ անկախ էին:

245. Հ. Ամիրապետ որո՞ւ կ'ըսուէր:

Պ. Հայք Ամիրապետ անունը կու տային
Արաբացւոց մարդարէին Մուհամմէտի յաջորդ-
ներուն որ ուրիշ անուամբ Խալիֆա կը կոչուին,
և նշանակէ յաջորդ:

246. Հ. Երկու Գագիկ անուն արծրունի իշխա-
ն

նաց, Սմբատայ թշնամիներուն առաջինն ո՞վ էր
և ի՞նչ ըրաւ:

Պ. Առաջինն էր այն Գաղիկ որ Սմբատայ
քեռորդին զԱշոտ արծրունի իր երկու Գաղիկ և
Գուրգէն եղբայրներովը բանտարկելով առած էր
վասպուրականի իշխանութիւնը: Սա պատերազ-
մի մը մէջ զոր Սմբատ ունեցաւ Միջագետաց Ահ-
մատ անուն ոստիկանին դէմ, գաղտ միանալով
Ահմատի հետ, մատնեց Սմբատայ զօրքը:

247. Հ. Այս Գաղիկ ի՞նչ վախճան ունեցաւ:

Պ. Սպանուեցաւ միւս Գաղիկ արծրունի
իշխանէն զոր բանտարկած էր Աշոտ և Գուրգէն
եղբայրներովը:

248. Հ. Սմբատայ թշնամի երկրորդ Գաղիկ
արծրունի իշխանն ո՞վ էր, և ի՞նչ ըրաւ:

Պ. Այս Գաղիկ էր այն որ առաջին Գա-
ղիկն սպաննելով վասպուրականի իշխանութիւնը
նորէն առաւ: Այս Գաղիկ որ էր քեռորդի Սըմ-
բատայ՝ Նախջուան քաղաքն իրեն չտրուելուն
համար թշնամանալով Սմբատայ, միացաւ նորա
անհաշտ թշնամոյն Յուսփայ, Ստրպատակա-
նին, Ափշինի յաջորդին հետ, և շատ չարեաց
պատճառ եղաւ, թէպէտ յետոյ զղջաց, բայց
ի զուր:

249. Հ. Արաբացի ոստիկանն Ափշին ո՞վ էր
և ի՞նչ ըրաւ:

Պ. Արաբացի ոստիկանն Ափշին էր Սմբ-
ապետին կողմանէ դրուած ինքնագլուխ կու-

սակալ Ատրպատական նահանգին, և միանալով
Աշոտոյ արծրունւոյ հետ՝ շատ նեղութիւն տուաւ
Սմբատայ, թէպէտ շարաչար հիւանդութենէ մը
մեռնելով չկրցաւ զԱմբատ իսպառ կործանելու
խորհուրդը կատարել:

220. Հ. Յուսոււփի ոստիկան ո՞վ էր և ի՞նչ ըրաւ:

Պ. Յուսոււփի էր նոյնպէս կուսակալ Ատրպ-
ատականի, յաջորդ Ափշինի: Սա իւր նախոր-
դին թշնամութեան ոգւով աւելի մեծ զամաներ
հասուց Սմբատայ:

221. Հ. Ատրպատական ի՞նչ երկիր էր:

Պ. Ատրպատական կը կոչուէր արեւելքէն
Հայոց սահմանակից ընդարձակ երկիրը, որ
ի սկզբան Մարաց, և ապա Գարսից կը վերաբե-
րէր, և որոյ մի մասը ժամանակաւ Հայոց էր:

222. Հ. Սմբատ ուրիշ որո՞ւ դէմ պատերազմ
ունեցաւ:

Պ. Եղերացւոց կոստանդին թագաւո-
րին դէմ, որ կ'ուզէր Վրաց երկրէն տեղեր յա-
փրշտակել: Եւ որովհետեւ Վրաց թագաւորն Ա-
տրպներսեհ բարեկամ էր Սմբատայ, Սմբատ օգ-
նեց Ատրներսեհի, և կոստանդնի վրայ երթա-
լով բոնեց զնա և բանտարկեց, թէպէտ յետոյ
գթալով արձակեց, և այս պատճառաւ թշնա-
մացաւ Ատրներսեհի հետ:

223. Հ. Սմբատ ուրիշ որո՞ւ հետ պատերազմ
ունեցաւ:

Պ. Սմբատ ստիպուելով կրկին տուրք տալ

Արարացւոց, այս տուրքն հատուցանելու համար ծանր հարկ դրաւ ժողովրդեան վրայ : Այս պատճառաւ Սմբատայ նախարարներէն ոմանք ասլուտամբեցան, և միաբանելով Ատրներսէհի հետեւկան Սմբատայ վրայ, բայց յաղթուեցան :

224. ♫. Եգերացիք ո՞վ էին :

Պ. Եգերացիք էին Քրիստոնեայ ժողովուրդ Հայոց հիւսիսային արեւմտեան կողմը Սեւ ծովումօտ, Վրաց սահմանակից :

225. ✕. Ի՞նչ եղաւ Սմբատայ Ա. ոյ վախճանը :

Պ. Սմբատ իբր 25 տարի դէմ դրաւ իւր թշնամիներուն մերթ պատերազմաւ և մերթ փախստեամբ, կրեց անհնարին նեղութիւն, վիշտ և վտանգ, աեսաւ իւր սիրելիներէն շատերուն սպանումը, իւր մօրը, կնոջ և հարսերուն դերութիւնը, ի վախճանի վհատելով ապաւինեցաւ Արարատեան նահանգին կապոյտ կոչուածքերդը, բայց պաշարուելով Յուսուփ ոստիկանէն՝ ստիպուեցաւ պնձնատուր լինել, և եղաւ կտտամահ :

226. ✕. Սմբատայ ժամանակ ի՞նչ նոր թագաւորութիւններ ելան Հայաստանի մէջ :

Պ. Սմբատայ ժամանակ ելան Հայաստանի մէջ Վրաց և Արծրունեաց կամ Վասպուրականի թագաւորութիւնները :

227. ✕. Վրաց թագաւորութեամբ ի՞նչ կ'իմացուի, և ի՞նչպէս եղաւ այս թագաւորութիւնը :

Պ. Կուր գետէն ասդին Հայաստանի Գու-

գարդ նահանգը, որ բգեշտութիւն էր ընդ իշխանութեամբ Արշակունեաց, բայց երկրին ժողովուրդն ազգակից էր կուր գետէն անդին բնակող Վրաց կամ Ավիսաղաց, Արշակունեաց անկման ժամանակ կամ քիչ մը առաջ եղած էր ուրոյն իշխանութիւն : Վասակեան Աշոտոյ, իշխանաց իշխանի, թոռներէն մին Աշոտ անուն, Թարուն սկիզբը (810) փեսայանալով այս Վրաց, կարդեցաւ ամիրապետէն պատրիկ Վրաց : Այս Աշոտոյ Վրաց պատրիկ թոռան որդւոյն Ատրներսէի տուաւ Սմբատ Ա. 899ին թագաւորութեան տիտղոս, և այսպէս ելաւ Վրաց Բագրատունի թագաւորութիւնը :

228. ✕. Այս Վրաց թագաւորներէն ո՞վ կը յիշուի երեւելի :

Պ. Այս Վրաց թագաւորներէն երեւելի եղան Դաւիթ Դ. (1120 ին), Դորդի Բ. (1160 ին), և մանաւանդ երկու եղբարք, հայ իշխաններ, Զաքարէ և իւան, սպարապետք թաթարաց թագուհւոյն Թամարայ (1185-1229) :

229. ✕. Արծրունեաց կամ Վասպուրականի թագաւորութիւնն ի՞նչպէս հաստատուեցաւ :

Պ. Սմբատայ քեռորդին Գագիկ որ առնախանձու թշնամանալով Սմբատայ միացած էր Սմբատայ թշնամելոյն Յուսուփ ոստիկանին հետ, խնդրեց ի Յուսուփայ թագաւորի անուն, և Յուսուփ, Սմբատայ զօրութիւնը տկարացնելու համար տուաւ նմա (902) թագաւորի անուն,

զոր յետոյ (922) հաստատեց Ամիրապետը:

230. Հ. Գագկայ անձին վրայ Բ'նչ կը պատմուի:

Պ. Գագիկ էր քաջ, իմաստուն և մեծագործ. բայց նախանձուտ և ովակալ, թէպէտ իւր կենաց վերջին տարիներն զգաստացաւ Գագիկ և դադրեցաւ չարիս նվաթելէ իւր ազգականերուն, Բագրատունեաց. բայց իբրեւ հակառակաթու Բագրատունեաց որ օրինաւոր թագաւոր կը համարուէին Հայոց՝ կոչեցաւ «Բունակալ»:

231. Հ. Բագրատունի թագաւորներէն անկախուրիշ Բ'նչ իշխանութիւն կար ի Հայու Սմբատայ ժամանակ:

Պ. Սմբատայ ժամանակ Բագրատունիներէն անկախ իշխանութիւն էր Տարօն: Տարօն էր ժառանգական երկիր Մամիկոնեանց, բայց այս ցեղը մարեցաւ Բագրատունեաց թագաւորութենէն քիչ առաջ: Աշոտոյ Մեծի, Բագրատունեաց առաջին թագաւորին հօրեղբայրը Դաւիթ Բագրատունի որ փեսայցեալ էր Մամիկոնեանց տան (818) իշխեց Տարօնոյ, և այսպէս ելաւ նոր Բագրատունի իշխանութիւն մի ի Տարօն: Այս Բագրատունի ցեղին իբրեւ վերջինը կը յիշուի թոռնիկ Բ. : Ինչպէս Մամիկոնեանք յետ անկման Արշակունեաց, նոյնպէս այս Բագրատունի իշխանք Տարօնոյ, էին ընդ ազգեցութեամբ կայսերաց, և մեծամեծ ժառայութիւններ ըրին Յունաց:

ԱՇՈՏ Բ. ԵՐԿԱՐ 915-928

232. Հ. Սմբատայ Ա. ոյ ո՞վ յաջորդեց:

Պ. Սմբատայ Ա. ոյ յաջորդեց երեց որդին Աշոտ Բ. որ սաստիկ ուժին համար կոչուեցաւ Երկաթ: Աշոտ ի սկզբան մեծ քաջութեամբ վանեց իւր հօրը թշնամիները, բայց յետոյ Յուսփայ զօրաց յարձակումներէն և Հայ իշխանաց ներքին կուխներէն, նաեւ երկար և սաստիկ սովոր երկիրն աւերեալ և ապականեալ տեսնելով և չկրնալով ինքնին դարման ընել այս ամենայն չարեաց, Յովհաննու Զ. կաթողիկոսի խորհրդով գնաց (920) առ կոստանդ. է. կայսր ծիրանածին (942-959) պաշտպանութիւն դանելու յուսով, և մեծ պատիւ տեսաւ:

233. Հ. Աշոտ ի՞նչ դատաւ ի դարձին իւրում ի Հայու:

Պ. Դատաւ ներքին ոչ սակաւ թշնամիներ, որոց գլխաւորք էին հօրեղբօրորդին Աշոտ սպարապետ որուն թագաւորի տիտղոս տուած էր Յուսուփի. Եղբայրն՝ Աբաս, և աները Սահակ, Ուտի նահանգին Գարդմանայ իշխանը, ինչպէս նաեւ Գուրգէն՝ Ափխազաց թագաւորը, Վաստակ՝ Գուգարաց Շամշողդէ բերդին իշխանը, և Ուտի նահանգին ուրիշ մի մասին իշխանները Մովսէս և Ցիկ:

234. Հ. Աշոտ կըցա՞ւ ազատիլ այս թշնամիներէն:

Պ. Աշոտ իբր երկու տարի (920-922) մեծ գժուարութեամբ և վտանդաւ կոռուելով այս

թշնամեաց դէմ, զոմանս նոռածեց, զայլս հաշտեցուց, բայց երկիրն աւերեալ ապականեցաւ և ինքն ի վախճանի խոնջեալ և գրեթէ սպառեալ յուժոյ՝ քաշուեցաւ Սեւան կղզին:

235. Հ. Աշոտ չունեցած Արարացիներէն թշնամի:

Պ. Այս միջոցին Հայոց և մանաւանդ Բագրատունեաց ոխերիմ թշնամին Յուսուփի, Ատրպատականի սստիկանը, որ մեծ իշխանութիւն ունէր ամիրապետէն նաեւ Հայաստանի վրայ, ապլստամբելով ամիրապետէն՝ բռնուած էր, և փոխանակ նորա զրկուած էր յԱտրպատական Բարուկ սստիկան որ բարեկամութեամբ էր Աշոտոյ հետ և Շահնշահ (արքայից արքայ) տիտղոսը տուաւ անոր: Բայց Յուսուփի նորէն առնլով Ատրպատականի սստիկանութիւնը՝ զրկեց ի Հայս զօրօք նըսր և ապա Պէշիր անուն սստիկանները որ սկսան նեղել ազգը: Վերջինը, Պէշիր, եկաւ պաշարեց Սեւան կղզին ուր էր Աշոտ, բայց յաղթուեցաւ:

236. Հ. Ի՞նչպէս եղաւ Աշոտոյ վախճանը:

Պ. Աշոտոյ այս վերջին յաղթութեամբ, առ որ մեծ նպաստ եղաւ Գէորգ մարզպետունի քաջ և հաւատարիմ իշխանը, թշնամութիւնները դադրեցան: Աշոտ հաշտուելով նաեւ Արծրունեաց Գագիկ թագաւորին հետ, որ արդէն դադրեցուցած էր հակառակութիւնը Բագրատունեաց դէմ և շինութեանց կը պարապէրիւր երկ-

րին մէջ, այն ինչ սկսած էր խնամ տանել տառապեալ ազգին, մեռաւ՝ յետ թագաւորելոյ 15 տարի:

Ա.Բ.Ս. , 928-931

237. Հ. Ո՞վ յաջորդեց Աշոտոյ Բ.ի:

Պ. Աշոտոյ Բ.ի որ անորդի էր՝ յաջորդեց եղբայր նորա Աբաս: Եղբօրը վերջին տարիները յարձակմունք և ներքին խոռվութիւնք բաւական դադրած էին: Աբաս խոհեմութեամբ վարուելով ամենուն հետ՝ եւս աւելի հանդարտեցուց երկիրը և սկսաւ ծաղկեցունել, մայրաքաղաք ընելով իրեն կարս, ուր շինեց մեծ և հոյակապ եկեղեցի, որոյ շինութիւնն հինգ տարի տեւեց:

238. Հ. Ի՞նչ նշանաւոր յաղթութիւն ըրաւ Աբաս:

Պ. Այն ինչ աւարտեալ էր եկեղեցւոյն շինութիւնը, թագաւորն Ափիսաղաց Բէր եկաւ Աբասայ վրայ: Երբ այս արշաւանին պատճառն հարցուեցաւ, «Կու գամ», ըստ Բէր, «Ճեր եկեղեցին վրաց ծիսիւ օծել:» Աբաս բարկանալով այս պատասխանուոյն վրայ՝ զարկաւ Ափիսաղաց զօրքը, զիէր գերի բռնեց և բերելով զնանոր եկեղեցին՝ ըստաւ. «Ահա եկեղեցին զոր դու վրաց ծիսիւ օծել կամէիր, քաջ նայէ, քանզի այլ եւս պիտի չաեսնես», և դուրս հանելով կուրացուց զնա: Աբաս թագաւորեց 24 տարի և մեռաւ խաղաղութեամբ:

ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱՆ, 952-977

239. Հ. Սբասայ ովյաջորդեց:

Պ. Սբասայ յաջորդեց որդին Աշոտ Գ. որ
երկրին հանդարասութիւնը պահեց վանելով բոլոր
ասպատակներն որ սկսած էին դաշ Հայոց վրայ
հօրը մահուանէն ետքը: Աշոտ կազմեց ընդ հրա-
մանատարութեամբ սպարապետին իւրոյ Գոռայ
մարդպետունոյ, Գէորգայ որդւոյն, 90 հաղարէ
բաղկացեալ բանակ մը, որով զարհուրեցուց
դրացի աղդերը, և էր պատկառելի ամենեցուն:

240. Հ. Աշոտոյ թագաւոր օծուելուն վրայ ի՞նչ
կը պատմուի:

Պ. Աշոտ թագաւոր օծուեցաւ յԱնի իջը
քառասուն եպիսկոպոսներէ, այս հանդիսին
հրաւիրեալ էին Աղուանից թագաւորը և Կաթո-
ղիկոսը:

241. Հ. Աշոտ ի՞նչ քաջութիւն ունի:

Պ. Աշոտ զարկաւ և սպաննեց արարացի
ապստամբ զօրապետն Համատուն և այս գործին
համար թագ և ընծաներ ընկալաւ ամիրապետէն:

242. Հ. Աշոտոյ նշանաւոր գործը ո՞րն է:

Պ. Աշոտոյ նշանաւոր գործերն են ամ-
րութիւնները զորս շինեց երկրին ապահովու-
թեամբ համար այլ և այլ տեղեր և յԱնի, բայց
նշանաւոր է նաեւ անոր ողորմածութիւնը: Թող
առատ ողորմութիւնները զորս կը բաշխէր աղ-
քատաց, իւր սեղանին վրայ ունէր միշտ աղքատ-
ներ և ցաւագարներ, շատ տեղեր շինել տուաւ-

աղքատանոցներ ուր կ'երթար ստէպ յայցելու-
թիւն, և անձամբ կը ծառայէր աղքատաց: Այս
գործերուն համար Աշոտ կոչուեցաւ Ողորմած:
243. Հ. Աշոտոյ վերջին տարիներն ովլ եկաւ
անոր վրայ:

Պ. Աշոտոյ վերջին տարիներն անոր վրայ
եկաւ Յովհաննէս Զմշկիկ կայսր որոյ դէմ ելաւ
Աշոտ 80 հաղար զօրօք և ստիպեց զնա գուրս
ելլել Բաղրատունեաց երկրին սահմաններէն:
Այս գործին մէջ Աշոտոյ հետ միաբան և գոր-
ծակից էին բոլոր իշխանք Հայոց, և Վասպուրա-
կանի թագաւորն Աշոտ, յաջորդն Գաղկայ: Ա-
շոտ ողորմած 26 տարի թագաւորելով մեռաւ
խաղաղութեամբ:

244. Հ. Աշոտոյ ողորմածի ատեն ի՞նչ նոր թա-
գաւորութիւն ելաւ Հայաստան:

Պ. Աշոտոյ ողորմածի ատեն ելաւ կարսի
թագաւորութիւնը: Արարատայ Վանանդ գա-
ւառին մէջ ամուր քաղաք էր կարս ընդ իշխա-
նութեամբ Բաղրատունի թագաւորաց: Աշոտ
այս գաւառին վրայ կուսակալ դրած էր իւր եղ-
բայրը Մուշեղ որ 964 ին իրեւ ինքնադլուխ իշխան
թագ կապեց: Այս եղաւ երրորդ թագաւորու-
թիւն ի Հայս առ Բաղրատունեօք: Աշոտ չուզեց
ընդդիմանալ եղբօրը այս գործին. մանաւանդ
որ կը տեսնէր զնա հնազանդ և գործակից ինք-
եան: Կարսի մէջ թագաւորեցին որդի ի հօրէ
յետ Մուշեղայ, Աբաս և Գաղիկ մինչեւ 1064:

ՍՄԲԱՏ Բ. 977-990

245. Հ. Ո՞վյաջորդեց Աշոտ ողորմածի:

Պ. Աշոտոյ ողորմածի երեք որդիներէն որ կը կոչուէին Սմբատ, Գաղիկ և Գուրգէն՝ յաջորդեց երեցը Սմբատ: Այս Սմբատ պատեց Անքաղաքը բարձր պարապով, և զարդարեց անուանի Հայ ճարտարապետին Տրդատայ ձեռօք հոյակապ շինուածներով, յորոց մին էր մայր եկեղեցին փառաւոր յոյժ, զոր չկրցաւ աւարտել Սմբատ:

246. Հ. Սմբատ ի՞նչ պատերազմ ունեցաւ:

Պ. Կարսի թագաւորը Մուշեղ, հօրեղբայր Սմբատայ, թշնամացաւ Սմբատայ հետ: Սմբատ պատրաստուեցաւ զինու զօրութեամբ նուածել զՄուշեղ և քանի մը բերդ առաւ անկէ, բայց տեմնելով որ Դաւիթ Լիւրապաղատ, Տայոց հզօր իշխանն օդնական էր Մուշեղի, ստիպուեցաւ հաշտութիւն խօսել, և առնուած տեղերը դարձուց ետ: Մեծ էր սակայն Սմբատայ անունը, մինչեւ կոչել «Տիեզերակալ»:

247. Հ. Սմբատայ անձին վրայ ի՞նչ կը պատմուի:

Պ. Սմբատ քանի մը դործի համար սաստիկ կը մեղադրուի:

248. Հ. Ի՞նչ էին այս դործերը.

Պ. Կըսուի թէ Սմբատ խելադար մարդու մը վրայ կասկածելով թէ նա էր արքունի համբարանոցն այրող, մարդուն աշուըներն հանել

տուաւ, և կենդանւոյն այրել տալով զնա՝ քաղքէն դուրս նետել տուաւ մարմինը, և ապա լսելով թէ թաղուած էր, հանել տալով դին գերեզմանէն՝ նետել տուաւ շուներու առջեւ: Սմբատ կը պախարակուի նաև իւր քրոջ դուստրը կին առնելուն համար հակառակ եկեղեցական օրինաց: Սմբատ 43 տարի թագաւորութիւն ելաւ ի Հայո Սմբատայ ժամանակ:

Պ. Աղուանից կոչուած թագաւորութիւնը որ ի սկզբան կը բաղկանար Գուգարաց և Ռւտի նահանգաց քանի մը մասերէն, և էր լոկ իշխանութիւն կամ կուսակալութիւն զոր Սմբատ յանձնած էր (982) իւր կրտսեր եղբօր Գուրգենայ: Յետ մահուան Գուրգենայ, Սմբատայ կենաց վերջին տարին (989) Գուրգենայ որդին Դաւիթ անհողին ընդարձակելով իւր իշխանութիւնը, կոչուեցաւ թագաւոր Աղուանից, վասնղի ինչպէս Գուգարաց ժողովուրդը կը կոչուէին Վիրք, նոյնպէս Ռւտւոյ, Արցախայ և Փայտակարանի ժողովուրդը որոյ մեծ մասին տիրեց Դաւիթ՝ կը կոչուէին Աղուանիք, և էին ուրոյն բուն Աղուաններէն յայնկոյս կուր գետոյ: Յետ կիւրիւէի, որդւոյ Դաւիթ (1025), ինկաւ այս թագաւորութիւնը:

ԳԱԳԻԿ Ա. 990-1020

250. Հ. Ո՞վյաջորդեց Սմբատայ Բ.ի:

Պ. Սմբատայ Բ.ի յաջորդեց Գագիկ Ա.:

Գագիկ ահաւոր և պատկառելի եղաւ բոլոր դրացի իշխանաց իւր քաջութեան և իմաստութեան համար, և երկիրն հանդարտ էր անոր ժամանակ: Գագիկ շինեց հոյակապ եկեղեցի յԱնի և պատիւ Լուսաւորչին, և կին նորա թագուհին կատրամիտէ, դուստր Վասակայ իշխանին Սիւնեաց, աւարտեց (993) Անոյ Մայր Եկեղեցին զոր սկսած էր շինել Սմբատ, և այնուհետեւ Անի եղաւ կաթողիկոսանիստ քաղաք: Գագիկ 30 տարի թագաւորելով մեռաւ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՄԲԱՏ. 1020-1040

251. Հ. Գագկայ ովկյալորդեց:

Պ. Գագկայ յաջորդեց որդին Յովհաննէս Սմբատ, բարի բայց դանդաղ և տկար մարմնով: Յովհաննէս Սմբատ քանի մը ծանր և վտանդաւոր պատերազմներ ունեցաւ իւր եղրօր Աշոտոյ հետ որ կ'ուզէր սպանանել զնա և թագաւորել փոխանակ նորա:

252. Հ. Այս վէճն ի՞նչպէս վերջացաւ:

Պ. Պետրոս կաթողիկոս և ուրիշ երեւելի անձինք միաբանելով հաշտեցուցին երկու եղբարք սա պայմանաւ որ Յովհաննէս տիրէր Բագրատունեաց երկիրներուն արեւմտեան մասին, և Աշոտ՝ Աշեւելեան մասին: Այսպէս Բագրատունեաց ի բնէ փոքր թագաւորութեան այն փոքր մասն եւս որ մնացած էր՝ բաժնուեցաւ յերկուս: Ուրիշ նոր խոռովութիւններ ծագեցան

յետոյ ի մէջ երկու եղբարց, և այն բաժանումը տեւեց մինչեւ 1039, յորում մեռան երկու եղբարք:

253. Հ. Յովհաննէս Սմբատ ի՞նչ վտանգներէ ազատեցաւ:

Պ. Յովհաննէս Սմբատ երկու մեծ վտանգէ ազատեցաւ: Նախ գերի ինկաւ Ավխաղաց թագաւորին ձեռքը, և քանի մը բերդ տալով հազիւ արձակուեցաւ: Երկրորդ իւր եղբօր Աշոտոյ կողմէն լարուած որոգայթին մէջ ինկաւ և պիտի սպանուէր, բայց Աշոտոյ իշխաններէն մին գթալով Յովհաննու՝ տարաւ հատեցուց զնա աթոռն, ըսելով. «Լաւ է Հայոց ունել թագաւոր զայր իմաստուն և գթած, քան բոնաւոր անողորմ:»

254. Հ. Յովհաննու Սմբատայ ժամանակ ի՞նչ յարձակում եղաւ Հայաստան:

Պ. Թրքաստանէն գունդեր յարձակեցան (1024) նախ ի Վասպուրական, և ապա իրենց գլխաւորին Ցուղիւայ առաջնորդութեամբ՝ յԱյրարատ, և մեծ աւերում և կոսորած գործեցին: Քէպէտ Վասակ սպարապետ Պահլաւունի անդամ մը քիչ զօրօք զարկաւ և ցրուեց զանոնք, բայց այնուհետեւ վերցան խաղաղութիւն և սպահովութիւն ի Հայոց:

255. Հ. Ուրիշ ի՞նչ ցաւալի գէպք կը պատմուի Յովհաննու Սմբատայ ժամանակ:

Պ. Վասիլ Բ. կայսր (963-125) բազմու-

թեամբ դօրաց եկաւ (1022) Ափսազաց թագաւորին Գորգեայ վրայ, և որովհետեւ Յովհաննէս դաշնակից և ձեռնտու էր Գորգեայ, առ երկիւ-ղի թէ գուցէ կայսրը գար չայոց վրայ ի վրէժ այն ձեռնտուութեան՝ նամակով խոստացաւ կայ-սեր, յետ մահուան իւրոյ Յունաց թողուլ իւր թագաւորութիւնը, վամնզի անորդի էր Յով-հաննէս և այսպէս զիջուց կայսրը:

256. Հ. Այն նամակն ի՞նչ եղաւ:

Պ. Վասլի կայսեր յաջորդը Կոստանդին թ. (1025-1028) իւր մահուան մօտ այն նամակն իրեւ անիրաւ մուրհակ, տուաւ Կիրակոս անուն Հայ քահանայի մը, պատուիրելով տանել տալ զայն թագաւորին Յովհաննու: Կիրակոս պահեց նամակը և տուաւ Կոստանդինի յաջորդին Միքայէլ Պ. կայսեր (1034-1041): Յովհաննէս Սըմ-բատ 20 տարի թագաւորելով մեռաւ:

Գ.Գ.Ի.Կ. Բ. 1042-1043

257. Հ. Յետ մահուան Յովհաննու ի՞նչ պա-տահեցաւ:

Պ. Յետ մահուան Յովհաննու Բագրա-տունեաց դահը մնաց երկու տարի առանց թա-գաւորի, և երկիրը շփոթութեան մէջ ինկաւ: Յովհաննու իշխաններէն մին, Վետա Սարգիս Միւնի, յափշտակած էր արքունի դանձը և կ'ու-ղէր թագաւորել: Դաւիթ անհողին և մանա-ւանդ Յոյնք ստէպ յարձակելով շատ կոտորած և աւերութներ կ'ընէին:

258. Հ. Յոյնք ինչու համար կը յարձակէին Բագրատունեաց երկիրը:

Պ. Միքայէլ Պ. ի յաջորդը Միքայէլ Ե. (1041-1055) կայսր, կը պահանջէ զԱնի իրրե կտակաւ իրեն թողուած ժառանգութիւն: Վահ-րամ Պահլաւունի, Բագրատունեաց սպարապե-տը, եղբայր Վասակայ, Պահլաւունոյ, միաբա-նելով Հայոց նախարարներուն հետ, քաջու-թեամբ վանեց զԴաւիթ անհողին և Յոյները, և թագաւորեցուց Յովհաննու Սմբատայ եղբօր Ա-շոտոյ որդին Գագիկ Բ., վամնզի նա էր օրի-նաւոր ժառանգ:

259. Հ. Գագիկ ի՞նչ երեւելի գործ ըրաւ:

Պ. Գագիկ նուաճեց Միւնեաց ապստամբ իշխանը Սարգիս Վետա, և առաւ անոր ձեռքէն թագաւորական դանձը, զարկաւ վանեց իւր երկրէն ասպատակները, յաղթեց նաև զօրաց Միքայէլի յաջորդին Կոստանդին Մոնոմաքոս կայսեր (1042-1054) որ կը պահանջէր զԱնի:

260. Հ. Յունաց պահանջումն Անեոյ համար ի՞նչ վախճան ունեցաւ:

Պ. Կոստանդին Մոնոմաքոս չկարենալով բռնութեամբ համեն իւր նախատակին, նենգու-թեամբ բռնեց զԳագիկ, արգելեց կզզի մը, և կը պահանջէր ոչ միայն զԱնի, այլ և Բագրա-տունեաց բռնոր երկիրները: Գագիկ, շատ ընդ-դիմութենէ ետքը, տեմնելով թէ յոյս չկար ինք-եան այլ եւս իւր երկիրը դառնալ, ակամայ

Հրաժարեցաւ թագաւորութեան իրաւունքէն։
261. Հ. Ի՞նչպէս եղաւ Գագկայ վախճանը։

Պ. Գագիկ իւր հաւատարիմ ծառայներով կը շրջէր թափառական Յունաց մէջ, վրէժ խընդ-ընդ իւր և ազգին թշնամիներէն, ինչպէս ըրաւ կեսարիոյ Յոյն մետրապոլտին, որ ի նախատինս Հայոց Արմէն անուն դրած էր իւր շան։ Գագիկ բոնելով մետրապոլիտար, դնել տուաւ պարկի մէջ նորա շան հետ որ պատառ պատառ ըրաւ իւր տէրը, բայց Յոյնք ի վրէժ այս մահուան դարան գործելով մեռուցին զԳագիկ (1079), որ 3 տարի միայն թագաւորեց, և իւր կենաց մնաց-եալ տարիներն անցուց ի պանդխտութեան։

262. Հ. Բագրատունեաց թագաւորական ցեղն ի՞նչ եղաւ։

Պ. Գագիկ Բ. վերջին թագաւոր Բագրա-տունեաց, ունէր երկու որդի, Դաւիթ և Յովհան-նէս և թոռն մի Աշոտ անուն։ Յովհաննէս մեռաւ, Դաւիթ և Աշոտ սպանուեցան և այսպէս սպա-ռեցաւ (1080) Բագրատունի թագաւորաց ցեղը։

263. Հ. Բագրատունեաց մայրաքաղաքը ո՞րն էր։

Պ. Բագրատունի իշխանք, ինչպէս նաեւ Աշոտ մեծ յառաջ քան զթագաւորութիւնն կը նստէին Արարատայ Շիրակ գաւառին Երազդ-որք կոչուած աւանը։ Աշոտ թագաւորելէն Եաքը մայրաքաղաքը ըրաւ իրեն Արշարունեաց գաւառին Բագրատան քաղաքը, որ էր Բագրատունեաց գերեզմանատեղին։

264. Հ. Բագարան միշտ մայրաքաղաք մնաց Բագրատունեաց։

Պ. Աշոտոյ յաջորդը, Սմբատ Ա., փոխեց աթոռը նորէն յերազդաւորս, ուր և շինեց ա-պարանք և եկեղեցի Յիսուս Փրկիչ անուն։ Աբա-մրգայանիստ քաղաքը ըրաւ իրեն կարս։ Աշ-տոյ Գ.ի ժամանակ եղաւ մայրաքաղաք Անի մինչեւ Բագրատունեաց թագաւորութեան վախ-ճանը։

265. Հ. Անոյ վրայ ի՞նչ կը պատմուի։

Պ. Անի կը կին էր ի Հայու. մին հին բերդ ուր կը թաղուէին Արշակունի թագաւորք, Բարձր Հայոց Գարանաղեաց գաւառը. և երկրորդ՝ Անի քաղաք ի Շիրակ. այս երկրորդ Անին եղաւ մայ-րաքաղաք Բագրատունեաց, անուանի բազում և մեծամեծ շինուածներով, և զարդիս աւերակնե-րով։ Սմբատ Բ. 979 ին, ընդարձակեց և զար-դարեց այս քաղաքը որ ի սկզբան աւան էր. բայց յաջորդ գարերուն մէջ, յետ անկման Բագ-րատունեաց, քանի մը անդամ առնուեցաւ Անի այլ և այլ ազգերէ մեծ կոտորածով և աւերմամբ, այլ թէ այժմու իսպառ աւերն և ամայութիւնը երբ սկսաւ և ինչպէս՝ յայտնի չէ։

266. Հ. Բագրատունեաց ժամանակն ի՞նչ երե-ւելի վանորայք շինուեցան։

Պ. Բագրատունեաց ժամանակն է մանա-ւանդ վանորէից բազմանալուն և ծաղկելուն դարը։ Յայնչափ վանորէից որ հաստատուեցան

Բագրատունեաց ժամանակ, յիշուելու արժանի են, Նարեկայ վանքն՝ ի Ռշտունիս, Սանահնի և Հաղբատայ վանք՝ յՈւտի, Ռւխտն Վարդայ՝ ի Վասպուրական, Ռւխտն Ապարանից՝ ի Կորդուս, և Ռւխտն Մեծոփայ՝ յԱղիովիտ։ Եիրակայ և Արշարունեաց գաւառները մանաւանդ լի էին վանորէիւք։

267. Հ. Գէորգ Բ. կաթողիկոսէն ետքը՝ Բագրատունեաց բոլոր ժամանակը քանի կաթողիկոսունք նատան և ոյք էին երեւելիները։

Պ. Գէորգ Բ. կաթողիկոսէն ետքը որ օծեց Բագրատունեաց առաջին թագաւորն Աշոտ Մեծ՝ Բագրատունեաց բոլոր ժամանակը նատան 13 կաթողիկոսունք որոց երեւելիներն են՝ Մաշտոց Բ. (897) եօթն ամիս միայն . Յովհաննէս Զ. պատմաբան (897-925). Անանիա Մոկացի (943-965) որ զինեցաւ ընդդէմ թոնդրակեցի կոչուած աղանդաւորաց, որ սկսած էին տարածիլ Հայոց մէջ, մանաւանդ ի Սիւնիս. Վահան կաթողիկոս (965-970) որ Յունաց հետ միաբանութիւն ընել ուղելով պատճառ եղաւ խովովութեան և ընկեցաւ աթոռէն. Խաչիկ Ա. (972-992) որ Տրդատ ճարտարապետին ձեռամբ շինեց մօտ յԱնի հոյակապ եկեղեցի քարաշէն շքեղ զարդերով, և ուրիշ եկեղեցի նմին նման . Հիմնեց նաեւ հարուստ երեք եկեղեցի նմին նման . Հիմնեց նաեւ հարուստ մատենադարան և Յունաց այլ և այլ քարաքներուն մէջ, ինչպէս Անտիոք, Տարսոն, Հաստատեց Հայոց համար եպիսկոպոսարաններ . Պետրոս

Գետադարձ (1019-1058) և Խաչկիթ (1058-1064) դորս Յոյնք տարիներով հեռացուցին իրենց աթոռէն՝ կաթողիկոսութիւնը ննջելու դիտմամբ։

268. Հ. Ի՞նչ երեւելի անձինք եղան Հայոց մէջ Բագրատունեաց ժամանակ։

Պ. Բագրատունեաց ժամանակ երեւելի եղան Հայոց մէջ քաջութեամբ։

1. Գէորգ մարզպետունի որ մեծամեծ օգնութիւններ ըրաւ Աշոտոյ Բ. ի և Արտասայ, և որդին Գէորգայ՝ Գոռ, սպարապետ Աշոտոյ Գ. ի։

2. Դաւիթ կիւրազապան (961-999), Տայոց նահանգին հզօր իշխանը որմէ թագաւորք անդամ կ'ակնածէին։

3. Գրիգոր, ի վերջնում կիսու Ժ. դարու, իշխան Նիգ գաւառին Այրարատայ, Լուսաւորչին սերունդէն, ուստի կոչուեցաւ Պահլաւունի։ Այս Գրիգորի որդին էին Վասակ՝ սպարապետ Սըմբատայ Բ. ի և Վահրամ սպարապետ Գագկայ Ա. ոյ։

4. Գրիգոր Մագիստրոս, որդի Վասակայ պահլաւունւոյ, անոււանի գիտութեամբ։

269. Հ. Բագրատունեաց ժամանակէն ի՞նչ մատենադիրներ ունինք, և որո՞նք յիշատակութեան արժանի գործեր ունեցան։

Պ. Ունինք իրեւել պատմի՝ Յովհաննէս կաթողիկոս և Թովմաս Արծրունի (Թ. դար), Ստեփաննոս Ասողիկ (Ժ. դար) և Արիստակէս Լատիվերտցի (Ժ. դար)։ Գիտնական նիւթերու

վրայ գրող է Գրիգոր Մագիստրոս (ԺԱ. դար), որ ունի մեկնութիւն հին քերականի, բանաստեղծական և բանասիրական գրուածներ չափով և արձակ, և նամակներ:

270. Հ. Կրօնական և հոգեւոր նիւթոց վրայ գրող ովկ կայ այս ժամանակէն:

Պ. Այս ժամանակին մէջ կրօնական և հոգեւոր նիւթոց վրայ գրողներէն երեւելի են իրեւ մեկնիչ՝ Խոսրով անձեւացի (Ժ. դար), հայր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. և ինքն Նարեկացին: Հոգեւոր երգերէ, ճառերէ և շարականներէ յիշուելու արժանի են ներբողեանք և տաղք Նարեկացւոյն: Երեւելի և միակ գործ է մանաւանդ նոյն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Նարեկ անուամբ ծանօթ աղօթամատեանն:

271. Հ. Ի՞նչ թարգմանութիւնք կան այս ժամանակէն:

Պ. Երբեւ թարգմանութիւն ունինք այս ժամանակէն նաևս սարկաւագի ասորւոյ Յովհաննու աւետարանին մեկնութեան թարգմանութիւնն անձանօթ թարգմանչէ (Ժ. դար), և Պղատոնի գործերէն միոյն և Եւկղիդէսի Երկրաչափութեան թարգմանութիւններն ի ձեռն Գրիգորի Մագիստրոսի:

ՀԱՅԻ ԱՌԱՆՑ ԹԱԴԱԿՈՒՅԻՆ ՅԱՆԿՄԱՆԵ
ԲԱԳՐԱՏՈՒՆԵՍՑ ՄԻՆՉԵՒ Ի ՌԱԼԲԵՆԵՍՆԱ

ՄԵԾ ՀԱՅԻ. 1046-1080

272. Հ. Յետ բարձման թագաւորութեան Բագրատունեաց Հայք ի՞նչ եղան:

Պ. Յետ բարձման այս թագաւորութեան հաստատուեցաւ Ռուբինեանց թագաւորութիւնն Կիլիկիա 1080 ին, բայց բուն կամ մեծ Հայք մնացին անտերունջ, այւինքն առանց յատուկ թագաւորի կամ իշխանի:

273. Հ. Ի՞վ սկսաւ տիրել Մեծին Հայոց:

Պ. Յոյնք սկսան տիրել Մեծին Հայոց, ուրոյ արեւմտեան մասն արդէն ունէին 386 էն հետէ, երբ Հայաստան երկու մաս բաժնուեցաւ: Ժ. դարուն վերջէն սկսան նաեւ արեւելեան մասն Հայ իշխաններէն շատք իրենց երկիրներն թողուլ կտակաւ կայսեր, ինչպէս ըրին Դաւիթ Կիւրազապատ Տայոց՝ 999 ին, և Յովհաննէս Սբուբան: Բագրատունեաց թագաւորն 1021 ին. և կամ երենց երկիրը կայսեր տալով փոխանակ ուրիշ տեղ առնուլ կայսեր երկիրներուն մէջ, ինչպէս ըրաւ Սենեքերիմ:

274. Հ. Աենեքերիմ ովկ էր:

Պ. Աենեքերիմ էր թագաւոր Արծրունեաց կամ Վասպուրականի, Երրորդ յետ Գագկայ, որուն յաջորդեց որդին Աշոտ (936), ապա

կրտսեր որդին Համազասպ (958) և ապա այս Սենեքերիմ (972): Սենեքերիմ վախնալով Սելճուղեանց յարձակումներէն, 1021 ին տուաւ իւր երկիրը, Վասպուրական, կայսեր, և առաւ Սեբաստիոյ գաւառը, թէպէտ շատ երկար չմնացին Սենեքերիմեանք հոն: Յունաց կայսրներէն և ժողովուրդէն հալածուելով կրօնքի համար՝ իրը քսան տարի ետքը ջնջուեցան:

275. Հ. Ո՞վ հետեւեցաւ Սենեքերիմայ օրինակին:

Պ. Սենեքերիմայ օրինակին հետեւեցաւ նաեւ Գրիգոր Մագիստրոս, որ իւր հայրենի ժառանգութիւնը, Պահաւունեաց երկիրը, նիդ գաւառ Այրարատայ, տալով կայսեր՝ առաւ Միջագետաց կողմը քանի մը քաղաք եւ գիւղ (1046): Նոյն բանն ըրին 02ին, Արցախու մէկ մասին իշխանն, և Գագիկ:

276. Հ. Գագիկ ո՞վ էր:

Պ. Գագիկ էր Թագաւոր Կարուց: Աշոտոյ ողորմածի եղբայրը Մուշեղ, հաստատած էր (964) Կարուց (Կարսկ) թագաւորութիւնը: Մուշեղայ յաջորդեց (984) որդին Աբաս որ շատ դպրոցներ հաստատեց Վանանդ գաւառին մէջ, և խստութեամբ նուածեց այն գաւառին աւազակարոյ մարդիկը: Աբասայ յաջորդեց այս Գագիկ (1029) որ Կարսի առնուելէն ետքը Սելճուղեաններէն (1050) տուաւ իւր երկիրը կայսեր (1064) և առաւ փոքր Ասիոյ մէջ քանի մը քաղաք զորս հաղիւ կրցաւ պահել մինչև իւր մահը

(1080): Այսպէս մինչև ԺԱ. դարուն կէսը գրեթէ բոլոր Հայաստան Յունաց ձեռքն անցաւ:

277. Հ. Հայ իշխանաց այսպէս իրենց երկիրները թողլով գաղթելուն պատճառն էր երկրին մէջ ապահովութեան պակասութիւնը: Հայք արդէն պաշարուած էին Ամիրայ կոչուած արարացի ոստիկաններէ, որ ամիրապետներէն ապրուամբելով կը տիրէին ի Հայս և մօտերն այլ և այլ տեղերու, ինչպէս Դըւնայ, Մանազկերտի, Գողթան, Աղճնեաց, Ատրպատականի, և ստէպ կը նեղէին զչայս: Ի վերջ կոյս Բագրատունեաց թագաւորութեան ելան Սելճուղեանք, որոց դէմ գնել գժուարին կը թուէր դարերով հարըստահարութիւններէ, ներքին խովովութիւններէ և պատերազմներէ յոդնած Հայոց, ուստի խոհեմութիւն կը համարէին Հայ իշխանք իրենց երկիրները տալ Յունաց որ աւելի զօրաւոր կը կարծուէին քան զչայս, եւ երթալ ապահով տեղեր:

278. Հ. Սելճուղեանք ո՞վ էին:

Պ. Թուրք ցեղի մը զօրապետն Տուղրիլ, որ 1021 ին Թրքաստանի կողմէն արշաւելով Վասպուրական՝ մեծ կոսորած ըրած էր, 1038 ին հաստատեց նոր պարսկական թագաւորութիւն որ կոչուեցաւ Սելճուղեան, յանուն Սելճուղայ, հաւուն Տուղրիլայ: Իր 10 տարի ետքը (1047)

Տուղրիլ սկսաւ նորէն արշաւել Հայաստան և
սահմանակից երկիրներ:

279. Հ. Յոյնք չունէին բաւական զօրութիւն
իրենց նորընծայ երկիրը պահել օտար յարձա-
կումներէ:

Պ. Յոյնք Հայոց տիրելէն ետքը, ոչ այնչափ
փոյթ տարին մաքրել և պաշտպանել երկիրն
այլազդիներէ, որչափ հալածել կամ յունացու-
նել զհայս: Հայոց անկախութիւնը բառնալէն
ետքը, ուղելով բառնալ նաեւ կաթողիկոսու-
թիւնը՝ 1048 ին տարին զՊետրոս կաթողիկոս
Գետաղարձ ի կոստանդնուպոլիս, բայց դրեթէ
նոյն տարին իրենք սկսան վրնտուիլ Հայաս-
տանէ:

280. Հ. Ո՞վ վռնտեց զՅոյնս Հայաստանէ:

Պ. Սելճուքեանք որ կը կոչուէին նաեւ
Պարսիկը, վասնղի Պարսկաստան էր անոնց ա-
թոռը: Սելճուքեանց առաջին թագաւորը,
Տուղրիլ, և յետ մահուան նորա եղբայրն Ալ-
բարալան, 1048 էն մինչև 1072, արշաւեցին ան-
թիւ զօրօք ոչ միայն Հայաստան, այլ և Միջա-
գետք, Պաղեստին և փոքր Ասիա, Հայոց, Վրաց,
Աղուանից, Յունաց և Արաբացւոց վրայ միանգա-
մայն: Հետզհետէ առնուեցան Արծն, Կարս, Ե-
րիզա, Մելիտինէ (Մալաթիա), Սեբաստիա, Անի,
Մանազկերտ, Եղեսիա, Անտիոք, Բերիա (Հա-
լէպ), և ուրիշ շատ տեղեր, և բնակիչները մատ-
նուեցան ի սուր, ի հուր և ի գերութիւն:

281. Հ. Այս աւերմունք և աղէտք ո՞րչափ տե-
ւեցին:

Պ. 1072 ին նստաւ Սելճուքեանց գահն
Ալբարսլանայ աղնուարարոյ, խաղաղասէր և աշ-
խարհաշէն որդին Մելիքշահ, որ կը սիրէր զՔրիս-
տոնեայս, մանաւանդ զհայս, և մեծ գիւրու-
թիւն ըրաւ աղգին, բայց Հայաստան մնաց ընդ-
իշխանութեամբ Սելճուքեանց:

282. Հ. Սելճուքեան իշխանութիւնն ի՞նչ փո-
փոխութիւն կը եց:

Պ. Մելիքշահի երկրորդ տարին այս մեծ
տէրութիւնը բաժնուեցաւ երկու: Տուղրիլի ցե-
ղէն ուրիշ իշխան մը հաստատեց փոքր Ասիոյ
մէջ նոր ճիւղ մը, որոյ մայրաքաղաք եղաւ Իկո-
նիոն (Գոնեա): Իկոնիոյ սուլթանք տիրեցին փո-
քուն Ասիոյ մեծ մասին, և կը սպառնային կոս-
տանդնուպոլսի, բայց նոր դէպք մը տկարացուց
անոնց զօրութիւնը:

283. Հ. Ի՞նչ էր այս նոր դէպքը:

Պ. Խաչակրաց գալուստն յարեւելս:

284. Հ. Ո՞վ էին Խաչակիրք:

Պ. Խաչակիր կոչուեցան Եւրոպացի գուն-
դեր որ սուրբ երկիրն աղատելու համար Պապե-
րուն յորդորանօք և երեւելի Եւրոպացի թա-
գաւորաց և իշխանաց առաջնորդութեամբ մեծ
բազմութեամբ 1096 ին սկսան գալ Պաղեստին,
և հաստատեցին այլ և այլ Եւրոպական իշխա-
նութիւններ յերուսաղէմ, յԱնտիոք, յԵղեսիա,
Կիպրոս, և ուրիշ տեղեր:

285. Հ. Խաչակրաց իշխանութիւնը ո՞րչափ տեւեց յարեւելս, և ի՞նչ նոր հարուած եկաւ Հայոց և ուրիշ արեւելեան ազգաց վրայ:

Պ. Խաչակրաց իշխանութիւնը տեւեց յարեւելս իբր 200 տարի, բայց երթալով տկարացաւ անմիաբանութենէ, ներքին և արտաքին կուներէ, մինչեւ բոլորովին մարեցաւ 1291 ին: Բայց յառաջ քան զայս թուական, սկսած էր գալ Հայոց և ուրիշ արեւելեան ազգաց վրայ ուրիշ հարուած, այն է Մոնկոլներուն արշաւանքը:

286. Հ. Ի՞նչ եղան Հայք ընդ իշխանութեամբ Սելճուկեանց:

Պ. Թէպէտ Մէլիքշահ դիւրութիւն ըրաւ Հայոց, բայց և այնպէս, մանաւանդ յետ մահուան Մէլիքշահի (1092), Հայք կը կրէին դառն նեղութիւն և կեղեքում Սելճուկեանց կուսականերէն: Տեղ աեղ երեւելի Հայ իշխաններ, ինչպէս Տարօնոյ իշխանը Թոռոնիկ (1070), Վեստ Խաչատուր շիրակունի գրեթէ միեւնոյն ժամանակ, և այլք, մեծ քաջութեամբ կը վանէին թշնամին և ապաստան էին Հայոց որ անոնց կ'ապաւինէին, բայց Յոյնք մեծ արգելք էին այս իշխանաց:

287. Հ. Յոյնք ի՞նչ կ'ընէին:

Պ. Յոյնք այնպիսի դժուարին ժամանակ, ուր և կը տեսնէին քաջ Հայ իշխան մը, փոխանակ օդնելու՝ սպաննել կու տային դաւով: Այսպէս Փիլարտոս անուն յունացեալ Հայ մը սպանել տուաւ (1073) զթոռնիկ. նոյն օրինակ սպան-

ուեցան (1077) Գրիգորի Մագիստրոսի որդին վասակ, իշխան Անտիոքայ, և Վեստ Խաչատուր որ մեծամեծ ծառայութիւններ ըրած էր Յունաց:

288. Հ. Սելճուկեանց իշխանութիւնը ո՞րչափ տեւեց:

Պ. Իկոնիոյ ճիւղը տեւեց փոքր Ասիա մինչեւ Օսմանեանց զօրանալը (1299): Պարակասատնի ճիւղը տեւեց մինչեւ 1194: Յետ մահուան Մէլիքշահի այս ճիւղը տակաւ տկարանալով ներքին խոռվութիւններէ, կորոյս իւր ազգեցութիւնն Ասիոյ մէջ, ուստի և ամիրաներ նորէն զօրանալով բռնեցին այլ և այլ քաղաքներ և գաւառներ, ինչպէս Փատլուն անուն ամիրա մը զնի (1161), Միրան (1128) որ կոչուեցաւ Շահարմէն (թագաւոր Հայոց): Մէծին Հայոց հարաւային մասը, նոյնպէս ի Միջադեսս Զանդի անուն ամիրա մը՝ զիերիս (Հալէպ): Այս Զանդի է որ առաւ զեղեսիա (1144), որոյ ողբը գրած է Ենորհալին: Այս ամիրայից դէմ կոռուեցան այլ և այլ քրիստոնեայ իշխանք թէ ի Հայս և թէ ուրիշ տեղեր, ընդհանրապէս առանց մեծ յաջողութեան:

289. Հ. Հայաստանի մէջ ո՞լ կոռուեցաւ ամիրայից դէմ:

Պ. Մէծագոյն յաջողութիւնն ունեցան ի վերջ կոյս Ժ. դարու Վրաց թագաւորք Դաւիթ Գ. և Գորգի Բ., ինչպէս նաեւ Զաքարէ և Խւանէ, Հայ իշխանք սպարապետք Վրաց: Վիրք քանի մը անդամ զարկին Պարսից (Սելճուկեանց) զօրքը,

առին ամիրաներուն ձեռքէն զԱնի, զԴուխին, ուրիշ քաղաքներ, և Բագրատունեաց երկիրներուն մեծ մասը զոր ծաղկեցուցին բազմութեամբ և վանուրէիւք: Այս վիճակին մէջ էր Հայաստան և բոլոր արեւմտեան Ասիա, երբ սկսաւ Մոնկոլներուն արշաւանքը (1232):

290. Հ. Ո՞վ էին Մոնկոլք:

Պ. Մոնկոլք հիւսիւսային արեւելեան Ասիոյ ժողովուրդ էին, և կը բաժնուէին այլ և այլ թափառական ցեղեր, որոց միայն իշխաննը ձէնկիզ խան, նուաճելով ոչ միայն Մոնկոլ ցեղերը, այլ և Թաթարները, ժողովուրդ միջին Ասիոյ, 1227ին հաստատեց մեծ ինքնակալութիւն մը որ տակաւ մեծնալով կը հանէր Զինաստանէ մինչեւ Բուսաստան:

291. Հ. Մոնկոլք Երբ սկսան արշաւել դէպ արեւմտաք:

Պ. ձէնկիզ խանի յաջորդներուն ժամանակ, 1232էն մինչեւ 1252, արշաւեցին Մոնկոլք անթիւ բազմութեամբ դէպ արեւմտաք, ողողեցին Աղուանից, Վրաց, Հայոց, Միջագետաց և դրեթէ բոլոր արեւմտեան Ասիոյ երկիրներն, առին շատ քաղաքներ: Ականատես պատմիչք մեր Վարդան և Կիրակոս շատ ազգու և մանր կը նկարագրեն ասոնց ահարկութիւնը, սոսկալի բարբարոսութիւնը և ագահութիւնը և ուրիշ դորձերը:

292. Հ. Ո՞րչափ տեւեց այս վիճակը:

Պ. ձէնկիզ խանի յաջորդներէն Մանկու

Խան 1250 ին առնլով ինքնակալութիւնը, իւր տէրութեան այլ և այլ մասերն յանձնեց իւր եղբայրներուն. Հուլակուի յանձնուեցաւ արեւմտեան Ասիա՝ Պարսկաստանի արեւելեան սահմանէն մինչեւ Եգիպտոսի սահմանադրութիւնը: Այս մասին մէջ էին, Հայք, Վիրք, Աղուանք, Միջագետք, Ասորիք և Պաղեստին:

293. Հ. Հուլակու Խան ի՞նչ ըրաւ:

Պ. Հուլակու Խան, իրեւ տէր Պարսկաստանի և բոլոր արեւմտեան Ասիոյ, դրաւ իւր աթոռութիւրէ՛, և սկսաւ մերթ անձամբ և մերթ զօրավարաց ձեռօք նուաճել վերոյիշեալ երկիրներն: Հուլակու ուղելով ջնջել ամիրապետութիւնը, առաւ 1258ին Պաղտատ, ամիրապետաց մայրաքաղաքը, սալաննեց ամիրապետը, և բնակիչները ջարդեց՝ քրիստոնէից միայն խնայելով:

294. Հ. Հուլակու ուստի շարժեալ խնայեց քրիստոնէից:

Պ. Մոնկոլաց Խանները որ հեթանոս էին՝ սովոր էին քրիստոնեաներէն կին առնուլ: Այսպէս Հուլակուի մայրը և կինը քրիստոնեայ էին, և այս պատճառաւ Հուլակու սիրով և գթութեամբ կը նայէր քրիստոնէից, կը պատուէր եկեղեցականները, մանաւանդ Հայ եկեղեցականները, և շատ քրիստոնեայ իշխաններ հաստատեց իրենց իշխանութեան մէջ, թէպէտ բռնութիւնք և կեղեգմունք պակաս չէին, մանաւանդ կուսակալաց և զօրապետաց կողմանէ, ուստի և շատ

անդամ հարկ էր նոյն խակ խաներուն քողօքել:
295. Հ. Խնչ վախճան ունեցաւ Մոնկոլներուն
իշխանութիւնն յԱսիա:

Պ. Յետ մահուան չուլակու Խանի (1265),
ներքին խոռվութիւններէ երթալով տկարացաւ
յԱսիա Մոնկոլներուն իշխանութիւնը: Այս տկա-
րութիւնը տեսնելով Մամլուքեանք, 1290էն հե-
տէ սկսան դալ և տիրել Պաղեստինու, Ասորւոց
և Միջագետաց: Վերջին Մոնկոլ իշխանն Ասիոյ
մէջ եղաւ Պուսայիտ, որ մեռաւ 1335 ին:

296. Հ. Մամլուքեանք ով էին:

Պ. Մամլուքեանք կոչուեցաւ Օսմանեան-
ներէն առաջ Եգիպտասի տիրող ցեղը: Եգիպտոս
մինչեւ 525 նախ քան զԲր. էր առանձին տէրու-
թիւն, որոյ թագաւորները կը կոչուէին Փարա-
ւոն: 525 էն նախ քան զԲր. մինչեւ 1171 յետ
Քրիստոսի տիրեցին Եգիպտասի Պարսք, Յոյնք,
Հռոմայեցիք, և արաբացի ամիրապետք: Եգիպ-
տոսի վերջին ամիրապետին, որ կը կոչուէր Սա-
հէտ Լիալինիլլահ, 1160-1171, պաշտօնեան Սա-
լստին եղաւ ինքնագլուխ, տիրեց նաեւ Ասորւոց
երկրին և Միջագետաց ուր կ'իշխէին անկախ
Աթապեկ կոչուած կուսակալք Սելջուգեանց իշ-
խանութեան (1127-1173): Սալստինի ցեղը կոչ-
ուեցաւ Այուպեան. Այուպեաններէն առաւ
զեղիպտոս (1254) Ալի Նուրէտտին, որոյ ցեղը
կոչուեցաւ Մամլուքեան, այսինքն դերի, քանզի
նուրէտտին դլուխ էր գերիներէ կաղմուած զին-

ուորական դունդի մը: Այս մամլուքեան ցեղին
Սուլթաններն էին որ կործանեցին Ռուբենեանց
թագաւորութիւնը: Մամլուքներէն առաւ զե-
ղիպտոս Սուլթան Սէլիմ Ա. 1517, և այն ժա-
մանակէն հետէ Եղիպտոս է մասն Օսմանեան
պետութեան:

ՄԱՍՆ Պ.

ԺԱՄԱՆԱԿ ՈՒԽԵՆԵԱՆՑ

1080—1375

297. Հ. Մինչդեռ Մեծ Հայք, յետ բարձման
թագաւորութեան Բագրատունեաց, օր քան զօր
կ'աւերէր և կ'ամայանար այլ և այլ ազգե-
րու յարձակումներէն, Կիլիկիոյ մէջ հաստատ-
ուած նոր Հայ տէրութիւնն ինչպէս յառաջ
կ'երթար:

Պ. Մինչդեռ Մեծ Հայք, յետ բարձման
թագաւորութեան Բագրատունեաց, օր քան զօր
կ'աւերէր և կ'ամայանար այլ և այլ ազգերու
յարձակումներէն, Կիլիկիոյ մէջ հաստատուած
նոր տէրութիւնը յառաջ կ'երթար, թէպէտ ոչ
առանց մեծ գժուարութեան:

298. Հ. Որո՞ւ ձեռօք և ե՞րբ հաստատուեցաւ
այս տէրութիւնը:

Պ. Բագրատունեաց վերջին թագաւորին

ազգականներէն Ռուբէն անուն իշխան մը 1080 ին
եկաւ Կիլիկիա կոչուած լեռնային երկիրն ուր
բաւական թուով Հայեր ապաւինած էին, ուր
էր նաև Հայոց կաթողիկոսը Գրիգոր Վկայասէր:

299. Հ. Կիլիկիա ո՞ր երկիրը կը կոչուէր:

Պ. Կիլիկիա կը կոչուէր փոքուն Ասիոյ հա-
րաւային արեւելեան ծայրը, որ ունէր սահման
հիւսիսէն՝ Տաւրոս լեռանց մի մասը, հարաւէն՝
Միջերկրական ծովը, արեւելքէն՝ Ասորիք, արեւ-
մուտքէն՝ Պամիկւլիա և Պիսիդիա:

300. Հ. Կիլիկիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք
էին:

Պ. Կիլիկիոյ գլխաւոր քաղաքներն էին
Ատանա, Մամեստիա (Մոպսուեստա), Սիս,
Տարսոն, և բերդաքաղաքներն՝ Բարձրերդ,
Վահկա, Կապան, Լամբրոն: Կիլիկիոյ կը վերա-
բերէր նաեւ Հռոմելա ամրոցը:

301. Հ. Այս քաղաքներէն ո՞րն էր մայրաքա-
ղաք Ռուբենեանց:

Պ. Խնչպէս Աղշակունի թագաւորք, նոյն-
պէս Ռուբենեանք տարբեր մայրաքաղաքներ ու-
նեցան այլ և այլ ժամանակ: Ռուբէն Ա. Նստաւ
Բարձրերդ. յաջորդք նորա մինչեւ Լեւոն Մեծ-
Բ. կը նստէին Վահկա: Լեւոն մայրաքաղաք ըրաւ-
իրեն ի սկզբան Տարսոն, և ապա 1186ին փոխեց
աթուն ի Սիս զոր գրեթէ նորոգեց ի հիմանց
և զարդարեց: Յետ աւերման Հռոմելայի Եղիպ-
տակիներէն (1293) ի Սիս փոխադրեցաւ նաեւ

կաթողիկոսարանն որ Գրիգոր պահաւունիէն
հետէ Հռոմելա էր:

302. Հ. Ռուբէն զով ունէր իրեն գործակից:

Պ. Ռուբէն գործակից ունեցաւ իրեն քա-
նի մը Հայ իշխաններ, Խնչպէս Գող Վասիլ, Ա-
պիրատ՝ Գրիգոր Մագիստրոսի թոռը, և Օշին,
որ քանի մը ամուր տեղեր բռնած էին: Ռու-
բէն իւր նոր իշխանութիւնը վարեց 15 տարի
մինչեւ ցմահ իւր:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. 1095-1100, ԹՈՐՈՍ Ա.

1100-1125, ԼԵՒՈՆ Ա. 1125-1157

303. Հ. Ռուբենի ովլյաջորդեց:

Պ. Ռուբենի յաջորդեցին նախ՝ որդին Կոս-
տանդին Ա., ապա Կոստանդնի որդին Թորոս Ա.
և ապա եղբայր Թորոսի՝ Լեւոն Ա.: Սոքա քա-
ջութեամբ վանեցին Կիլիկիայէ Յոյները, Խնդրե-
ցին Բագրատունեաց վերջին թագաւորին Գաղ-
կայ մահուան վրէմն Յոյն իշխաններէն որ սպա-
նած էին զնա, վանեցին բարբարս ասպատակներ,
զօրացան և ընդարձակեցին իրենց երկիրն, այն-
պէս որ Լեւոնի ժամանակ արդէն Ռուբենեանց
ձեռքն էին Կիլիկիոյ երեւելի քաղաքները և բեր-
դերն, Խնչպէս Մամեստիա, Տարսոն, Ատանա,
Անարդարա, Լամբրոն, Վահկա որ էր իշխանա-
նիստ քաղաք Ռուբենեանց:

304. Հ. Ռուբենեանց այսպէս զօրանալը տես-
նելով ինչ ըրին Յոյնք:

Պ. Յունաց կայսրը Յովհաննէս Բ. Կոմին-

նոս (1118-1143) բազմութեամբ զօրաց եկաւ է եւսնի վրայ, առաւ մի առ մի բոլոր քաղաքները, նուածեց բոլոր կիլիկիա, և բանելով դէւռն Ա. Երկու որդւովք՝ տարաւ կոստանդնուպոլիս: Էւսն և երեց որդին Սմբատ մեռան հոն, կըրտսերը թորոս միայն մնաց կայսեր քով, և կիլիկիա թանձնուեցաւ Յոյն կուսակալաց: Այսպէս Ռուբենի իշխանութիւնն իբր վաթսուն տարի տեւելով գաղթեցաւ (1080-1137):

305. Հ. Այն վաթսուն տարուան մէջ յիշուելու արժանի ի՞նչ պատահեցաւ:

Պ. Կոստանդնի իշխանութեան երկրորդ տարին, այն է 1096 ին, սկսաւ Խաչակրաց արշաւանքն յարեւելու:

306. Հ. Յոյնք և Հայք ի՞նչպէս վարուեցան Խաչակրաց հետ:

Պ. Յոյնք որ ատելութեամբ էին ընդ Լատինու՝ չաճեցան Եւրոպացւոց գալուն յարեւելու և միշտ թշնամութիւն կը նիւթէին նոցա: Հայք ընդ հակառակն, միշտ ամէն կերպով օդնեցին նոցա, խնամութիւն ըրբն Եւրոպացի իշխանաց հետ, հետեւեցան նոցա բարուց և սովորութեանց, այնպէս որ Ռուբենեանց ցեղն եղաւ Հայ Եւրոպական ցեղ:

ԹՈՐՈՍ Բ. 1144-1168

307. Հ. Ռուբենեանց իշխանութեան գաղաթումը որչափ տեւեց:

Պ. Ռուբենեանց իշխանութեան գաղա-

թումը տեւեց իբր վեց տարի միայն: Յովհաննէս Կոմինենոս կայսր, որ այլազգեաց դէմ եկած էր (1142) կիլիկիա՝ ունելով ընդ իւր Լեւոնի որդին Թորոս, գիպուածով մեռաւ որսի ատեն, և Թորոս մնալով կիլիկիա, ի Հայոց քաջ մարդիկ ժողվեց իւր գլուխը, և նորէն հաստատեց Ռուբենեանց իշխանութիւնն՝ առ սակաւ սակաւ վանելով զՅոյնս այն երկրէն:

308. Հ. Յոյնք լսելով թորոսի գործերն ինչ ըրին:

Պ. Յովհաննէս կայսեր յաջորդը Մանուէլ Կոմինենոս (1143-1180) լսելով Ռուբենեանց իշխանութեան վերստին հաստատուիլն, երիցս զօրք զրկեց թորոսի վրայ, գրգռեց նաեւ Իկոնիոյ սուլթանն ընդ դէմ թորոսի: Բայց թորոս յաղթեց ամենուն և ընդարձակեց տէրութիւնը, և վերջապէս հաշտուեցաւ կայսեր հետ միջնորդութեամբ Երուսաղէմի թագաւորին Պալտուինի որոյ բարեկամ էր թորոս, վասնղի օգնած էր նմա Բերիոյ Սուլթանին դէմ որ կ'ուղէր առնուլ զԱնախոք Լատինացւոց ձեռքէն: Թորոս Զետարի վարելով իշխանութիւնը մեռաւ:

309. Հ. Ո՞վ էին Իկոնիոյ և Բերիոյ սուլթանք:

Պ. Այս անուամբ կոչուեցան Ժ., ԺԱ., ԺԲ. և ԺԳ. գարերու մէջ ամիրագետաց կուսակաները և Սելճուկեան իշխանք, ինչպէս Պաղտասու, Բերիոյ (Հալէպի), Պամասկոսի, Իկոնիոյ (Գոնեայի): Ասոնց մէջ երեւելի եղան Բե-

ըիոյ և մահաւանդ իկոնիոյ սուլթանկը, որոց իշխանութիւնը տեւեց իբր երկու հարիւր տարի (1074-1294): Այսպէս կը կոչուին նաեւ պատմութեան մէջ յետ ամիրապետաց Եղիպատոսի տիրող իշխանք: Սուլթան անունը եղաւ յետոյ Յամանեան կայսերաց պատուանուններէն մին:

ԹօվՄԱՍ ՊԱՅԻ, 1168. ՄԼԵՀ, 1169-1174.

ՈՒԽԵԿՆ Բ. 1174-1185

340. Հ. Թորոս Բ. ի ովլ յաջորդեց:

Պ. Յետ մահուան Թորոսի, Թովլմաս Պայլ Սնտիրքացի իշխանը որ էր աներ Թորոսի՝ տարի մը (1168) վարեց իշխանութիւնն իբրեւ ինամակալ, վասնզի Թորոսի որդին գեռ մահուկ էր, բայց Թորոսի եղբայրը ՄԼԵՀ գալով վոնտեց զթոմաս և մահուկ ժառանգը, և ինչ տիրեց հինգ տարի քաջութեամբ՝ բայց անգլաբար, ուստի և սպանուեցաւ, և Թորոսի ուրիշ եղբօր Ստեփանոսի որդին Ռուբէն Բ. առաւ իշխանութիւնը:

341. Հ. Ռուբէն Բ. Բնչպէս վարեց իշխանութիւնը:

Պ. Մինչ Ռուբէն իմաստութեամբ կը վարէր իշխանութիւնը և երկիրն հանդարատ էր թշնամեաց յարձակմանէ, Լամբրոնի իշխանին չեթմոյ, Լամբրոնացւոյն հաւուն, թելադրութեամբ՝ Սնտիրքայ լատին իշխանը Պեմունդ դառվլ բոնեց և բանտարկեց զՌուբէն, որ իւր եղբօր Լեւոնի միջոցաւ արձակուելով բանտէն, իւր

իշխանութեան Աներորդ տարին (1185) հրաժարելով կրօնաւորեցաւ, իշխանութիւնը թողլով իւր եղբօր Լեւոնի:

ԼԵԽՈՆ Բ. 1185-1219

342. Հ. Լեւոն Բ. Բնչպէս սկսաւ իւր իշխանութիւնը:

Պ. Լեւոն Բ. որ և Մեծ, իւր աթոռը գնելով Տարսօն, սկսաւ ամրացունել և ծաղկեցունել երկիրը, բերդեր շինելով սահմանագլուխները, և այլ և այլ տեղեր ուրկանոցներ և մահաւանդվանորայս որ այն ատեն ուսման կեդրոն էին:

343. Հ. Լեւոն Բնչ յաղթութիւններ ունի:

Պ. Լեւոն յաղթեց Իկոնիոյ սուլթանին Երկիցս (1186 և 1201) և ապա սուլթանին Քերիոյ (1202), որ մեծ զօրութեամբ եկած էին Լեւոնի վրայ:

344. Հ. Լեւոնի կենաց նշանաւոր դէպքը ո՞րն է:

Պ. Լեւոնի կենաց մէջ նշանաւոր են անոր թագաւոր պսակուիլը և Պաղեստինու լատին իշխանաց հետ վէճը:

345. Հ. Լեւոնի թագաւոր պսակուելուն Բնչ բան նպաստեց:

Պ. Լեւոնի թագաւոր պսակուելուն նպաստեց նոր Խաչակրաց գալուստը: Սալատին, որ 1171 ին տիրեց Եղիպատոսի և շատ զօրացաւ, տեսնելով Պաղեստինու Լատին իշխանաց երկպատկութիւնը, յարձակեցաւ անոնց վրայ, առաւ

քրիստոնէից ձեռքէն զԵրուսաղէմ և ուրիշ տեղեր: Ասոր վրայ Եւրոպացիք ստիպութեցան զրկել 1189 ին նոր Խաչակիրներ որոց գլուխ էր Փրեդերիկոս Ա. Գերմանիոյ կայսրը:

316. Հ. Այս դէպքը Լեւոնի թագաւոր պսակուելուն հետ ի՞նչ յարաբերութիւն ունէր:

Պ. Լեւոն Փրեդերիկոսէն և Կղեմէս պապէն նամակով հրաւիրուած էր օդնել Խաչակրաց: Լեւոն զօրօք և պաշարով մեծ օգնութիւն մատոյց Խաչակրաց և այնպէս սիրելի եղաւ նոցա, որ կայսրը խոստացաւ թագաւոր պսակել զնա:

317. Հ. Փրեդերիկոս կատարեց այս խոստումը:

Պ. Փրեդերիկոս դիպուածով մեռնելով չկրցաւ կատարել այս խոստումը, բայց յաջորդնորա Հենրիկոս Զ. կատարեց, Կեղեստինոս Գ. Պապին հաւանութեամբ կարդինալի մը ձեռօք զրկելով թագ, որով Լեւոն մեծ շրով պսակուեցաւ Տարսօն քաղաքը (1198) և օծուեցաւ առաջին թագաւոր Կիլիկիոյ Գրիգոր Զ. կաթողիկոսէն:

318. Հ. Լեւոն Բ. թագաւոր պսակուելէն ետքը ի՞նչ ըրաւ:

Պ. Լեւոն Բ. թագաւոր պսակուելէն ետքը, թագաւորութեան վայելուչ կարդեր հաստաեց և մայրաքաղաքը փոխադրեց ի Սիս, զոր գեղեցիկ շինուածներով զարդարեց: Լեւոն եղաւ առաջին թագաւոր Հայոց որ սկսաւ առան-

ձին դրամ հասանել Հայերէն լեզուաւ եւ գրով:

319. Հ. Ի՞նչ էր Լեւոնի վէճը Պաղեստինու լատին իշխանաց հետ:

Պ. Տրիպոլսոյ (Թարապուլուս) կոմնը մերժած էր աթոռէն Անտիոքայ իշխանութեան ժառանդը Ռութէն որ ազգական էր Լեւոնի, և Լեւոն կը ջանար նորէն հաստատել զնա իւր աթոռը: Այս պատճառաւ պատերազմ բացուեցաւ ի մէջ Տրիպոլսոյ կոմնին և Լեւոնի. և որովհետեւ Տաճարական կոչուած զինուոր վանականք եւս խաւնուեցան այս ինդրոյն, վէճը մեծցաւ: Երեք պապ և առարի յօդնեցան խաղաղել այս վէճը, և վերջապէս Երուսաղէմի թագաւորը և քանի մը լատին եպիսկոպոսներ ինպաստ Լեւոնի որոշեցին դատը, և Անտիոքայ իշխանութեան ժառանդն հաստատուեցաւ իւր աթոռը:

320. Հ. Ո՞րչափ տեւեց Լեւոնի իշխանութիւնը:

Պ. Լեւոնի իշխանութեան բոլոր ժամանակը, յառաջ քանի զթագաւորութիւնն և յետ թագաւորութեան, եղաւ Յէ տարի:

321. Հ. Լեւոն զ՞ով թողուց ժառանդ թագաւորութեան:

Պ. Լեւոն թողուց դուստր մի միամօր Զապէլ անուն ի մօրէ Լուսինեան, զոր յանձնեց մեծ իշխանին Կոստանդնին, իւր ազգականին, որ կը կոչուէր Աւագ Պարսն, պատուիրելով թագաւորեցնել զՅապէլ յետ իւր:

322. Հ. Ո՞վ էին Լուսինեանք:

Պ. Լուսինեանք էին աղնուական տոհմի Գաղիա: Խաչակրաց իշխաններէն Անդղիոյ թագաւորն Իիքարտոս առևլծապիրտ առաւ կիպրոս կղզին (1191), և տուաւ զայն Լուսինեան տունէն Երուսաղէմի վերջին թագաւորին Գուիդոնի, որոյ սերունդը տիրեց այն կղզւոյն իրըև թագաւոր: Լեւոն Բ. առած էր կիպրոսի այս Լուսինեան թագաւորներէն Հուկոյի Ա. ոյ քոյրը, և այսպէս խնամեցան Ռուբենեանք ընդ Լուսինեանս: Լեւոնի այս կնոջէն էր Զապէլ որ թագաւորեց յետ մահու հօրն:

ԶԱՊԷԼ. ԵՒ ՀԵԹՈՒՄ Ա. 1219-1270

323. Հ. Զապէլ չունեցաւ ոսոխ:

Պ. Անտիոքայ իշխանը Ռուբէն որ Լեւոնի Բ. ի եղբօր թոռն էր, և որոյ յաջորդութեան համար այնչափ կուիներ եղած էին ի մէջ Լեւոնի և Լատին իշխանաց, ուզեց յափշտակել Ռուբենեանց դահը, բայց մերժուելով կորոյս նաեւ Անտիոքայ իշխանութիւնը որ ուրիշ կոմսի մը տրուեցաւ:

324. Հ. Զապէլ մինակ թագաւորեց:

Պ. Զապէլի թագաւորութեան երկրորդ տարին (1221) Կիլիկիոյ իշխանք ամուսնացուցին զԶապէլ Անտիոքայ նոր կոմսին որդւոյն Փիլիպոսի հետ որ էր աղգաւ Լատին, Երդմեցունելով չնա չդպչել աղգային արտօնութեանց և սովո-

րութեանց բայց երբ Փիլիպոս սկսաւ հակառակ իւր երդման վարուիլ, մերժուեցաւ և մեռաւ տարիէ մը (1222):

325. Հ. Զապէլի երկրորդ ամուսինն ով եղաւ:

Պ. Յետ մահուան Փիլիպոսի Զապէլ կ'ուզէր առանձնանալ կուսանաց վանք մը, բայց ի թախանձելոյ Աւագ Պարոնին կոստանդնի և այլոց՝ հաճեցաւ կրկին ամուսնանալ (1224) նոյն կոստանդնին իշխանին որդւոյն Հեթմոյ հետ որ եղաւ գահակից Զապէլի և յամենայնի կը ջանար հետեւել Լեւոնի Բ. ի օրինակին:

326. Հ. Հեթում Ա. ինչ երեւելի գործ ունի:

Պ. Հեթում Ա. նուաճեց (1245) Լամբրոնի ապստամբ իշխանը կոստանդնի, Ներսիսի Լամբրոնացւոյ եղբօրորդին: Այս միջոցին, Մոնկոլը սկսան արշաւել յԱսիա:

327. Հ. Կիլիկիա աղատ մնաց Մոնկոլաց արշաւանքէն:

Պ. Որովհետեւ այս աղգն ընդհանրապէս չեր վասեր անոնց որ հապատակութիւն և բարեկամութիւն կը ցուցնէին, Հեթում տեսնելով նոցա մօտենալն իւր երկրին, բարեկամութեան դաշինք հաստատեց անոնց զօրապետներուն հետ (1246), և քանի մը տարի ետքը, յետ մահուան թագուհւոյն Զապէլայ (1252), մեծ գժուարութեամբ և վտանգաւ գնաց անձամբ առ Մանկուխան, և հաստատելով հպատակութեան դաշինք, դարձաւ իւր երկիրը կիլիկիա:

328. Հ. Այս դաշնակցութենէն ետքը չեթում հանդարտ մնաց իւր թագաւորութեան մէջ։

Պ. Այս դաշնակցութիւնը շատ օգտակար եղաւ Ռուբենեանց, ցորչափ կը տիրէր Մոնկոլներուն ահն Ասիոյ մէջ. բայց յետ մահուան Հուլակու խանի (1265), երբ Մոնկոլը սկսան տկարանալ, իկոնիոյ և Եղիպատոսի սուլթանը համարձակութիւն դանելով սկսան յարձակիլ, ինչպէս ուրիշ տեղեր նոյնպէս կիլիկիա. շատ քաղաքներ և բերդեր նոյն խակ Ռուբենեանց մայրազարքը Սիս, առնուեցան, և արքայորդին Լեռն գերի տարուելով Եղիպատոս (1266), հազիւ Երեք տարի ետքը (1269) դարձաւ իւր երկիրն ի մեծ ուրախութիւն հօրը և ազգին։ Յաջորդ տարին Հեթում հրաժարելով թագաւորութենէն կրօնաւորեցաւ Դյաղարկ կոչուած վանքը, և մեռաւ նոյն տարին՝ թագաւորելով 46 տարի։

Լեռն Գ. 1270-1289.

329. Հ. Հեթմոյ Ա. ոյ ովլյաջորդեց։

Պ. Հեթմոյ Ա. ոյ յաջորդեց որդին Լեռն Գ. որ շատ բարի և ողորմած էր, նաեւ ուսումնասէր, ուստի և մեծ փոյթ ունէր ուսումն և դիտութիւն ծաղկեցնելու՝ դպրոցներ հաստատելով, մատեաններ օրինակել տալով և տարածելով ամեն տեղ։ Բայց որչափ բարի էր Լեռն, այնչափ ին եղաւ թշուառութեամբ անոր թագաւորութիւնը։

330. Հ. Ի՞նչ էին այս թշուառութիւնը։

Պ. Այս թշուառութիւնը էին Լեռնի երկիցս հիւանդանալն ի մահ ։ իշխանաց ոմանց հակառակութիւնը և քսութիւնը որով գրգռեցին Լեռնի գէմ Եղիպատոսի մամլուքեան սուլթանը Պիալարս Ա. (1260-1277) որ առաւ և աւերեց Տարսոն և ուրիշ տեղեր. Լեռնի որդուոյն և դստեր մահը, սոսկալի ժանտավարը, վերջապէս կնոջը մահը և ուրիշ ձախողանը։ Լեռն երկիցս յաղթեց Եղիպատացւոց, բայց մեծ կորստեամբ, Դժբախտն Լեռն Գ. այսպէս անցունելով իւր 20 ամեայ թագաւորութեան ժամանակը՝ մեռաւ։

Հեթում Բ. 1289-1505

331. Հ. Լեռնի Գ. ի ովլյաջորդեց։

Պ. Լեռնի Գ. ի յաջորդաց որդին Հեթում Բ. և այլազդեց յարձակումները որ ժամանակ մը դադրած էին՝ նորէն սկսան։ 1293 ին առնուեցաւ Հռոմելա մեծ կոտորածով Եղիպատացիներէն, և Հեթում որ արդէն աչք չունէր թագաւորութեան և կը սիրէր միանձնական կեանք՝ իւր իշխանութեան չորրորդ տարին կառավարութիւնը յանձնելով իւր եղբօր Թորգոսի, առանձնացաւ վանք մը, թէպէտ յետոյ ի թախանձելոյ եղբօրն և իշխանաց՝ առաւ նորէն իշխանութիւնը։

332. Հ. Ի՞նչ ցաւալի դէմքը պատահեցաւ Հեթմոյ։

Պ. Եղիպատացւոց հետ ձախող պատերազ-

մէ մը և հաշտութենէ ետքը, մինչդեռ կոստանդնուպոլիս էր Հեթում յայցելութիւն իւր քրոջը որ Անդրսնիկոս Բ. կայսեր (1282-1320) որդւոյն կինն էր, Հեթմայ եղբայրը Սմբատ հրատարակեց զինք թագաւոր կիլիկիոյ: Ի դարձին Հեթմայ կոստանդնուպոլսէ, Սմբատ բռնելով կուրացուց զնա: Սմբատայ այս և ուրիշ անդթութիւններուն համար անոր կրտսեր եղբայրը կոստանդին ընդդիմացաւ նմա և բռնելով բանտարկեց զնա, որ յետոյ կոստանդնուպոլիս զրկուեցաւ: Հեթում հրաշիք ստանալով աչաց տեսութիւնը, նորէն առաւ իշխանութիւնը, և քանի մը պատերազմներէ և յաղթութենէ ետքը հրաժարեցաւ իւր եղբօրը թորոսի որդւոյն Լեւոնի Դ.ի թողլով թագաւորութիւնը (1305):

ԽԵՌՈՆ Դ. 1503-1508

333. Հ. Հեթումէն ետքը ի՞նչ եղաւ կիլիկիոյ թագաւորութիւնը:

Պ. Թէպէտ հրաժարեցաւ Հեթում, բոլորովին չհեռացաւ կառավարութեան դործերէն, այլ իրբեւ խնամակալ կամ թագաւորահայր՝ խորհրդատու էր նոր թագաւորին Լեւոն Դ.ի. բայց կիլիկիոյ թագաւորութիւնն արդէն տկարացած էր և մերձ էր ի կործանումն, այնպէս որ Լեւոն Դ.էն մինչեւ Լեւոն Զ.ի գերութեան 70 տարուան միջոցը կընայ կոչուիլ կիլիկիոյ համար թշուառութեան և ողբոց ժամանակ:

334. Հ. Կիլիկիոյ թագաւորութեան այսպէս վատթարելուն գլխաւորապէս ի՞նչ բան պատճառ եղաւ:

Պ. Կիլիկիոյ թագաւորութեան այսպէս վատթարելուն պատճառ եղաւ գլխաւորապէս ներքին խոռվութիւնը որ ծագեցաւ կրօնական վէճի մը պատճառաւ:

335. Հ. Ի՞նչ էր այս կրօնական վէճը:

Պ. Գրիգոր Է. կաթողիկոս Անաւարզեցի (1294-1307) և Հայ վարդապետներէն ոմանք որ Ռւնիդոր, այսինքն միացնող կոչուեցան, խորհրդացան Հայոց եկեղեցին միացնել կատին եկեղեցւոյ հետ ծէսերու փոփոխութեամբ: Հեթում և Լեւոն Դ. որ աղքական էին Լատին իշխանաց և ստէպ կը թղթակցէն Պապերուն հետ քաղաքական նպատակաւ՝ նպաստեցին կաթողիկոսին և ունիդորաց, և այս պատճառաւ ծագեցան վէճեր և խոռվութիւններ ազդին մէջ, ոչ միայն ի կիլիկիա, այլ և ի Մեծ Հայս:

336. Հ. Ռւնիդորաց մէջ և անոնց հակառակորդներէն ովկ կը յիշուի երեւելի:

Պ. Ռւնիդորաց կողմէն կը յիշուին 1. իբրև հիմնադիր և առաջնորդ Յովհաննէս քռնեցի, աշակերտ Բարթողմէոս անուն լատին քարոզչին 1327 ին եկաւ ի Հայս. 2. Միկիթար ապարանեցի, իբր հարիւր տարի յետոյ, որ և ունի գերք այս վէճերուն վրայ ստորին ոճով: Իսկ հակառակ կողմէն կը յիշուին իբր բանիւ և գրով աշ-

խատող Յովհան որոտնեցի (1370) և Գրիգոր
Տաթեւացի (1390): Ունիդորք կոչուեցան նաեւ
Զահկեցի, վասնղի ասոնց դլխտոր տեղն էր
Սիւնեաց Զահուկ գաւառը, Նախճուան և ուրիշ
մօտակայ տեղեր:

337. Հ. Ի՞նչ եղաւ այս վէճին հետեւանքը:

Պ. Ազգին երեւելիներէն ոմանք գրգռե-
ցին Մոնկոներն ըսելով թէ Հեթում և Լեռն
միաբանելով Եւրոպացւոց հետ, կը ջանան նոր
խաչակիրներ բերել տալ արեւելք: Լեռն և
Հեթում բանուելով սպանուեցան յԱնարդարա
Պիլարզու անուն Մոնկոլ իշխանէն որ Մոնկոնե-
րու խանին կողմանէ կը նասէր Կիլիկիա իբրեւ
պահապան երկրին:

338. Հ. Այնուհետեւ ի՞նչ եղաւ:

Պ. Այնուհետեւ Ասիոյ մէջ իշխանութիւն
ունեցող այլազգիք, Մոնկոլ, Սելջուք, Եղիպ-
տացի, նոր խաչակրութեան առաջն առնլոյ
համար միաբանեցան ջնջել Կիլիկիոյ թագաւո-
րութիւնը որ, յետ Կիպրոսի, մի միայն քրիստոն-
եայ թագաւորութիւնն էր յարեւմտեան Ասիա,
և Կիլիկիա եղաւ արդարեւ տեսարան աւերմանց
և արիւնհեղութեանց:

ՕԵՒՆ. 1508-1520, ԼԵՒՈՆ Ե. 1520-1542

339. Հ. Ո՞վ յաջորդեց Լեռնի Դ.ի:

Պ. Լեռնի Դ.ի յաջորդեց Հօրեղբայրն
Օվին, և ապա որդին Լեռն Ե. դեռ մանուկ:

Ասոնք փոխանակ մեղմացունելու եւս աւելի զայ-
րայուցին կրօնական վէճը: Լեռն՝ Հայ իշխան-
ները մերժելով և զոմանս սպանանելով, սկսաւ
իւր լատին ազգականները գործածել: Այսպէս
խոռվութիւնք յաճախեցին, և այլազգիք կը յար-
ձակէին և կ'աւերէին երկիրը:

340. Հ. Լեռն Ե.ի ժամանակ Կիլիկիոյ վրայ
յարձակող այլազգիք ո՞վ էին:

Պ. Լեռն Ե.ի ժամանակ Կիլիկիոյ վրայ
յարձակող, և այս երկրին մեծամեծ հարուած-
ներ տուող այլազգիք էին.

1. Թաթարաց Դիմուրթաշ իշխանը որ 30 հա-
զար ձիաւոր զօրօք եկաւ Կիլիկիոյ վրայ և սաս-
տիկ կոտորած և աւելումներ ըրաւ.

2. Թիւրքմէններուն Արաման իշխանը որ Դի-
մուրթաշի աւերումներէն զերծ մնացած տեղերը
բանդեց.

3. Եղիպտասի սուլթանին զօրքը որ վերջին
հարուածը տուին Կիլիկիոյ: Այնչափ սաստիկ ե-
ղաւ այս հարուածը որ թշուառ ժողովուրդն
ստիպուեցաւ ապաւինել Կիպրացւոց նաւերը,
զորս Կիպրոսի քրիստոնեայ թագաւորը դրկած
էր յօդնութիւն:

341. Հ. Այս հարուածները տեսնելով Լեռն և
Հայ իշխանք ի՞նչ ըրին:

Պ. Լեռն և իշխանք նորա քանի մը անդամ
գէմ գըին այլազգիներուն, բայց չկրնալով եր-
կիրն ապատել անոնցմէ, ամուր տեղեր ապատի-
9

նած թուղթեր և պատգամաւորներ կը զրկէին
Եւրոպա, մանաւանդ Պապերուն, օգնութեան
համար:

342. Հ. Ի՞նչ եղաւ այս թղթակցութեանց վախ-
ճանը:

Պ. Կրեթէ ոչինչ: Վերջապէս Եղիպառնի
սուլթանը Նասրը Մամլուքեան (1310-1344), լսե-
լով Լեւոնի բանակցութիւններն Եւրոպայի հետ,
Կիլիկիոյ թագաւորութիւնը չնշելու մտօք 1340 ին
խաղաց Կիլիկիոյ վրայ: Լեւոն հազիւ կրցաւ հաշ-
տեցունել սուլթանը Եղիպառնի խոստանալով կըտ-
րել բանակցութիւնները Պապերուն և Եւրոպա-
ցւոց հետ: Երկու տարի ետքը (1342) մեռաւ
Լեւոն Յ. վերջին թագաւոր Ռուբենեան ցեղէ.
քանզի յետ Լեւոնի Յ.ի Կիլիկիոյ թագաւորող
չորս իշխանք էին ի հօրէ Լատին, Լուսինեան
տանէ:

ԿՈՍՏՈՆԴԻՆ Գ. ԳՈՒԹՑՈՆ, ԿՈՍՏՈՆԴԻՆ Գ.

ԵԽ ԼԵԽՈՆ Զ. 1542-1575

343. Հ. Կիլիկիոյ վրայ թագաւորող վերջին չորս
իշխանք ո՞լ էին:

Պ. Կիլիկիոյ վրայ թագաւորող վերջին չորս
իշխանք էին Կիպրոսի թագաւորին Եղբօրորդեքը
Կոստանդին Գ. և Գուլիտոն՝ Երկու Եղբարք, Կոս-
տանդին Գ. ուրիշ Լատին ազգատոհմէ, և Լեւոն
Զ. նոյնպէս Լուսինեան տանէ: Ասոնք յետին տկա-
րութեան հասած տեսնելով տէրութիւնը՝ շատ

աշխատեցան Պապերուն միջոցաւ Եւրոպայի թա-
գաւորներէն օգնութիւն գտնել, բայց ոչ միայն
Հյաղողեցան, այլ եւս առաւել գրգռեցին այ-
լազգիներն իրենց դէմ:

344. Հ. Այս թագաւորներն ի՞նչ վախճան ու-
նեցան:

Պ. Առաջին Երկուքն սպանուեցան. Եր-
րորդը, Կոստանդին Դ., մեռաւ 1362 ին, իսկ զԼե-
ւոն Զ. Եղիպատացիք 1375 ին բոլոր ընտանեօք
գերի տանելով Եղիպատա՝ տիրեցին Կիլիկիոյ:

345. Հ. Լեւոն Զ. Երբ և ուր մեռաւ:

Պ. Լեւոն Զ., յետ միամեայ բանտարկու-
թեան, Սպանիոյ թագաւորին միջնորդութեամբ
արձակուելով, գնաց Եւրոպա, այցելութիւն
ըրաւ Հռոմ, Սպանիա, Գաղիա, Անդղիա, և ա-
մէն տեղ պատուով լընդունուելով իբրեւ թագա-
ւոր Հայոց, 1393 ին մեռաւ ի Բարիզ, ուր կայ
ցարդ գերեզմանը Կեղեստինեանց Եկեղեցւոյն
մէջ:

346. Հ. Ռուբենեանց ժամանակ ի՞նչ երեւելի
անձինք եղան Հայոց մէջ:

Պ. Ռուբենեանց ժամանակ եղան երեւելի
ընտանիք ոմանք Հայոց մէջ, ինչպէս Ռըբելեանք՝
ի մեծ Հայս, Պահլաւոնիք ի մօրէ, և Օնեանք,
տեարք Լամբրոնի ի Կիլիկիա:

347. Հ. Ռըբելեանք ո՞վ էին:

Պ. Այս ցեղը կը ծագէր Լիպարիտ ա-
նուն վրացի իշխանէ մը, որ 1021 ին սպարապետ

Էր Վրաց : Յետ անկման Բագրատունեաց , Վրաց
թագաւորներն այս ցեղին տուին Հայոց Տաշիր
գաւառնեն մաս մը , որոյ գլխաւոր քաղաք էր
Շամշողդէ կամ Արքեթ , որմէ կոչուեցաւ ցեղը
Որբելեան :

348. Հ . Այս վրացի ցեղն ի՞նչ յարաբերութիւն
ունեցաւ Հայոց հետ :

Պ . Այս վրացի ցեղին Լիպարիս Բ . իբր
1145 ին փեսայանսալով Սիւնեաց՝ միացաւ Հայոց
հետ : Լիպարիսի յաջորդներն են Որբելեանք
Սիւնեաց , որ Մոնկոլեանց հաւանութեամբ Արա-
րատայ և Սիւնեաց մեծ մասին տիրեցին մինչեւ
իյարձակութիւն էենկդեմուրայ ի Հայու : Այս ցեղին
էին երկու երեւելի եպիսկոպոսունք Սիւնեաց ,
Ստեփանոս և Յովհաննէս Որբելեանք , ի սկզբան
ժԴ . դարուն :

349. Հ . Ո՞վ էին ի մօրէ Պահլաւունիք :

Պ . Այսպէս կոչուեցան մօր կողմանէ թո-
ռունք Գրիգորի Մագիստրոսի : Ասոնց մէջ երե-
ւելի եղաւ Ռուբենեանց իշխանութեան սկիզբը ,
Ապիրատ , իշխան Ֆովք կոչուած բերդին՝ մօտ
ի Խարքերդ : Ապիրատայ որդիք էին երկու երե-
ւելի կաթողիկոսունք Հայոց , Գրիգոր Գ . Պահ-
լաւունի (1113-1166) և Ներսէս Դ . Կլոյեցի կամ
Շնորհալի (1166-1173) :

350. Հ . Ո՞վ էին Օշնեանք :

Պ . Օշնեանք էին սերունդ մեծի իշխանին
Հայոց Օշի , որ 1072 ին գաղթելով իւր երկըն

Սրցախու նահանդէն , ի Յոյնս , առած էր Լամբ-
րոն կոչուած բերդը մօտ ի Տարսոն : Այս Օշնի
թոռն Օշին Բ . Խնամեցաւ ի մօրէ Պահլաւունեաց
հետ՝ առնլով (1145) Շնորհալւոյն եղբօր դուստ-
րը , որմէ ծնաւ Ներսէս Լամբրոնացի : Օշնեանք ,
ապաւինելով իրենց ամրոցին Լամբրոնի ամրու-
թեան , ստէպ կ'ապստամբէին ի Ռուբենեանց :
Է351. Հ . Ռորիշ ո՞վ կը յիշուի երեւելի Հայ իշ-
խան այս ժամանակին մէջ :

Պ . Ի մէջ բաղմաց յիշուելու արժանի է
Զաքարէ իշխան , սպարապէտ Քամարայ թա-
գուհւոյն Վրաց (1184) : Այս Զաքարէ է որ 1204
ին խնդրեց և առաւ հրաման Դաւիթ Գ . կաթո-
ղիկոսէն տալ հանդիսիւ պատրարք մատուցա-
նել բանակին մէջ : Այսու առթիւ շնուրած է
պատրարքին երդը « Խորհուրդ խորին » :

352. Հ . Ռուբենեանց իշխանութեան սկիզբէն
մինչեւ վերջը քանի կաթողիկոսունք նստան և
ոյք են երեւելիները :

Պ . Ռուբենեանց ժամանակ Հայաստանէ
գուրս ի Կիւկիա և մօտերն , ինչպէս Ծամեդաւ ,
Ծովք , Հոռմելա , նստան 20 կաթողիկոսունք ,
որոց երեւելիներն են Գրիգոր Բ . , ուղիւ Գրիգո-
րի մագիստրոսի (1065-1082) , որ շատ վկայա-
րած մանելուն համար կոչուեցաւ վկայասէր .
Թարգմանելուն համար կոչուեցաւ վկայասէր .
Գրիգոր Գ . Պահլաւունի (1113-1165) քեռորդի
վկայասիրին և եղբայր Շնորհալւոյն . սա հա-

տատեց կաթողիկոսական աթոռն ի Հռոմկա. Ներակս Դ. Շնորհալի (1465-1472), մատենագիր և բանաստեղծ : Նշանաւոր է Շնորհալոյ թըղթակցութիւնն ընդ Մանուէլի Ա. կայսեր՝ Հայոց եկեղեցւոյն վարդապետութեանց վրայ :

353. Հ. Ուրիշ ով կայ յիշուելու արժանի այս ժամանակին կաթողիկոսաց մէջ :

Պ. Այս ժամանակին կաթողիկոսաց մէջ յիշուելու արժանի են նաեւ Գրիգոր Դ. Տղայ (1473-1493), եղբօրորդի Շնորհալոյն . սա ջանաց հաշտեցունել Յոյն և Հայ եկեղեցիներն, երկուքին եւս ուղղափառութիւնը պաշտպանելով. Գրիգոր Զ. Ապկիրատ (1495-1502) ուրիշ եղբօրորդի Շնորհալոյն . սա ընկալաւ մատանի և վերարկու Խննովկենտիոս Դ. Պապէն ի նշան պատուոյ և մեծարանաց . Կոստանդին Ա. Բարձրերդի (1520-1567). սա պաշտպանեց Հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը Լատինացւոց ամբաստանութեանց դէմ, և ընկալաւ մատանի և վերարկու Գրիգոր Թ. Պապէն . Գրիգոր Զ. Անաւարզեցի (1594-1606) որ ջանալով փոխել Հայոց եկեղեցւոյն ծէսերն ըստ Լատինացւոց, մեծ խոռովութեան պատճառ եղաւ ազգին մէջ. Պօղոս Ա. (1674-1678), ասոր ժամանակ ջնջուեցաւ Ռուբենեանց թագաւորութիւնը :

354. Հ. Կիլիկիոյ մէջ Բնէլ վանք հաստատուեան Ռուբենեաց ժամանակ :

Պ. Ա. Եղիշեանէն մէջ Հայոց պարտե-

յին նաեւ գլուխիկա վանորէիւք : Կիլիկիոյ մէջ երեւելի էին Շափիրին, Կարմիր, Դրազարկ, Սկեւուա կոչուած վանորայք քաղաքներու մօտ և Ըստնային տեղեր : Սեաւ կոչուած լեռը մանաւանդ, Տաւրոսի գուռոյն մէջ, իի էր վանորէիւք : 355. Հ. Կիլիկիան միայն հաստատուեցան նոր վանորայք այս ժամանակին մէջ :

Պ. Այնչափ էր Հայոց եռանդը վանորէից շինութեան, որ այն դժուարին ժամանակներն անդամ, մինչ Սելճուկեանը և Մոնկուները յարիւն և յաւեր կը դարձունէին բոլոր Հայաստան, գրեթէ ամեն գաւառ նոր նոր վանք հաստատուեցան : Միսիթար Գոշ հաստատեց Գետակայ վաներն ի Գուգարս . Վարդան վարդապետ՝ Խորանաշատ կոչուած ուխտն յԱրձախ : Այս ժամանակին մէջ կը թուին հաստատուած նաեւ Գլածոր, Նորավանք, Հոռոմայք, Ծործորու վանք, Կեչառք, Հաւուց թառ և Գետարդել կոչուած վանորայքը :

356. Հ. Ռուբենեանց ժամանակ Բնչակէս էր Հայոց լեզուն և մատենագրութիւնը :

Պ. Ռուբենեանց ժամանակ Հայոց լեզուն բաւական մաքսւը էր և մատենագրութիւնը ծաղկած :

357. Հ. Այս ժամանակէն Բնչակէս ու մինք :

Պ. Այս ժամանակէն ունինք իրեւ պատմիչ Ռէխանէն (Դար Ժ.) . (Դար Ժ.) Մատթէոս

Ուռհայեցի, Գրիգոր Երէց՝ շարունակող Ուռհայեցւոյն, Սամուէլ Երէց. (Դար ԺԴ.) Կիրակոս գանձակեցի, Վարդան, Մաղաքիա աբեղայ շարունակող Վարդանայ և Սմբատ պատմիչ, Եղբայր Հեթմայ Ա.ոյ: Շնորհալին ունի պատմական քերթուածներ, ինչպէս ողբ Եղեսիոյ առման 1144 ին Զանկի ամիրայէն. Յիսուս որդի՝ Հին և նոր կտակարանաց պատմութեան վրայ, և վիպասանութիւն կոչուած պատմութիւն Հայոց, զոր Վահրամ վարդապետ (Դար ԺԲ.) յառաջ տարաւ մինչեւ իւր ժամանակն, այն է մինչեւ Լեւոն Գ. նոյն լեւոնի հրամանաւ:

358. Հ. Գիտնական նիւթոց վրայ գրող Բնչ Հեղինակներ Եղան այս ժամանակ:

Պ. Գիտնական նիւթոց վրայ գրող Հեղինակներն են՝ Մխիթար Հերացի բժիշկ (Դար ԺԲ.), Ջերման տեսակներուն վրայ. Յովհաննէս Երզնկացի (Դար ԺԳ.) և Սարկաւագ Վարդապետ (Դար ԺԲ.) ունին աստեղագիտական կամ տոմարական գրուածներ: Քերականութեան վրայ գրած է նոյն Յովհաննէս Երզնկացի, և Արիստակէս անուն վարդապետ մը (Դար ԺԲ.) յօրինեց առաջին հայերէն բառարանը: Մխիթար Գոշ (Դար ԺԲ.) ունի դատաստանագիրք, և Խաչատուր Վարդապետ ոմն (Դար ԺԲ.), Հեղինակ Խորհուրդ Խորին շարականին, Հնարեց Երաժշտական խազերը:

359. Հ. Ի՞նչ բանասիրական գրուածներ կան այս ժամանակէն:

0000862

ՀՀ Ազգային գրադարան




NL0000940

ՀՅ Ազգային գրադարան



NL0000939

ՀՀ Ազգային գրադարան



NL0000862

4783
4784
4785

2013

